



ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МЕЖДУНАРОДНЫЙ УНИВЕРСИТЕТ ЕВРАЗИЯ
EURASIA INTERNATIONAL UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ

ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ



Երևան, 2024 | N1

ISSN 1829-4952



ԲԱՆԲԵՐ

ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ВЕСТНИК

МЕЖДУНАРОДНОГО УНИВЕРСИТЕТА ЕВРАЗИЯ

BULLETIN

EURASIA INTERNATIONAL UNIVERSITY

1

Երևան - 2024

**Հրատարակության է երաշխավորվել
Եվրասիա միջազգային համալսարանի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Գագիկ Վարդանյան (գլխավոր խմբագիր), տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Եվրասիա միջազգային համալսարան

Ալբերտ Մակարյան, ք.գ. դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան
Անի Ստեփանյան, ի. գ. թ., դոցենտ, Արդարադատության համառուսական պետական համալսարան (Ռուսաստանի Արդարադատության նախարարության ԱՀՊՀ)
Աննա Օհանյան, ք.գ.դ., ԱՄՆ Ստոնհիլ համալսարանի պրոֆեսոր
Աշոտ Ալեքսանյան, ք.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան
Աշոտ Խաչատրյան, ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր
Աշոտ Մարկոսյան, տ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան
Արամ Այվազյան, ի.գ.թ., Եվրասիա միջազգային համալսարան, ՀՀ քննչական կոմիտե
Գայանե Թովմասյան, տ.գ.թ., դոցենտ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «ԱՄԲԵՐԴ» հետազոտական կենտրոն
Գրաժինա Չուպադենե, մանկ.գ.դ., դոցենտ, Լիտվայի Միկոլաս Ռոմերիս համալսարան
Դմիտրի Զախոս, մանկ.գ.դ, դոցենտ Սալոնիկի (Հունաստան) Արիստոտելի համալսարան
Երանուհի Մանուկյան, փ.գ.թ., դոցենտ, Երևանի պետական համալսարան
Իգոր Կարապետյան, մանկ.գ.դ., պրոֆեսոր, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
Լուսինե Հարությունյան, ք.գ.դ., պրոֆեսոր, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
Լուսինե Ֆլյյան, ք.գ.դ., պրոֆեսոր, Եվրասիա միջազգային համալսարան
Իսաչիկ Գալստյան, ք.գ.դ., դոցենտ, Երևանի պետական համալսարան
Հեղինե Մանասյան, տ.գ.դ., Հետազոտական ռեսուրսների կոլեկտիվային կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստան
Հովհաննես Հարությունյան, տ.գ.թ., Եվրասիա միջազգային համալսարան
Մարիամ Մարգարյան, ք.գ.դ., պրոֆեսոր, փ.գ.թ., դոցենտ, ՀՀ պետական կառավարման ակադեմիա
Մարտա Մորդովան-Յիվինսկա, ք.գ.թ., Վիստուլայի համալսարան (Վիստուլայի համալսարանների խումբ, Վարշավա, Լեհաստան) և Վարշավայի Wsztechnica Polska համալսարան
Պյոտր Բորովսկի, տեխ.գ.թ., տնտեսագետ, դոցենտ, Վարշավայի բնական գիտությունների համալսարան
Ռամոն Բուագաս Լորենցո, ք.գ.թ., Սանտյագո դե Կոմպոստելայի համալսարան (Իսպանիա)
Սամվել Մուրադյան, ք.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան
Սոնա Հակոբյան, ք.գ.թ., Հայաստանի Եվրոպական Համալսարան
Սուրեն Օհանյան, աշխ.գ.դ., պրոֆեսոր, Եվրասիա միջազգային համալսարան
Ստեփան Ծաղիկյան, ի.գ.դ., պրոֆեսոր, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան
Վահե Վանեսյան, ք.գ.դ., CIDA-Կանադական միջազգային զարգացման գործակալություն
Վլադիմիր Հովհաննիսյան, ի.գ.դ., պրոֆեսոր, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

Խմբագրական խորհրդի քարտուղար՝

Նունե Զոմարդյան, Եվրասիա միջազգային համալսարան

ISSN 1829-4952

© Եվրասիա միջազգային համալսարան, 2024

«Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի» պարբերականը ԲՈԿ-ի 28.06.2019թ. № 164Ա հրամանի համաձայն ընդգրկված է ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրոյթների հրատարակման համար ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն որակավորման կոմիտեի համար ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում:

**Издается по рекомендации ученого совета
Международного университета Евразия**

Редакционная коллегия

Гаяк Варданян (главный редактор), д-р экон. наук, профессор, Международный университет Евразия

Альберт Макарян, д-р филол. наук, профессор, Ереванский государственный университет
Ани Степанян, канд. юрид. наук, доцент, Всероссийский государственный университет юстиции (РПА Минюста России)

Анна Оганян, д-р полит. наук, профессор, Стоунхиллский университет, США

Арам Айвазян, канд. юрид. наук, Международный университет Евразия, Следственный комитет РА

Ашот Алексанян, д-р полит. наук, профессор, Ереванский государственный университет

Ашот Хачатрян, д-р юрид. наук, профессор, судья Конституционного суда Республики Армения

Ваге Ванесян, д-р полит. наук, CIDA-Канадское агентство международного развития

Владимир Оганесян, д-р юрид. наук, Российско-Армянский (Славянский) университет

Гаяне Товмасын, канд. экон. наук, доцент, Исследовательский центр «АМБЕРД» Государственного экономического университета Армении

Гражина Чуладене, д-р пед. наук, доцент, Университет Миколаса Ромериса, Литва

Дмитриос Захос, д-р пед. наук, Университет Аристотеля в Салониках, Греция

Ерануи Манукян, канд. филос. наук, доцент, Ереванский государственный университет

Игорь Карапетян, д-р пед. наук, профессор, Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна

Лусине Арутюнян, д-р пед. наук, профессор, Государственный экономический университет

Лусине Флджян, д-р филол. наук, профессор, Международный университет Евразия

Мариам Маргарян, д-р полит. наук, профессор, канд. филос. наук, доцент, Академия государственного управления Республики Армения

Марта Молдован-Цывинска, д-р филол. наук, Вислинский университет (Группа университетов Вистулы, Варшава, Польша), Университет Wsztechnica Polska в Варшаве

Оганес Арутюнян, канд. экон. наук, Международный университет Евразия

Петр Боровский, д-р техн. наук, экономист, Варшавский университет естественных наук, Польша

Рамон Бузас Лоренцо, д-р полит. наук, Университет Сантьяго-де-Компостела, Испания

Самвел Мурадян, д-р филол. наук, профессор, Ереванский государственный университет

Сона Акопян, канд. филол. наук, Европейский университет Армении

Сурен Оганян, д-р геогр. наук, профессор, Международный университет Евразия

Степан Цагикиан, д-р юрид. наук, профессор, Российско-Армянский (Славянский) университет

Хачик Галстян, д-р полит. наук, доцент, Ереванский государственный университет

Эгине Манасян, д-р экон. наук, Кавказский исследовательский ресурсный центр-Армения

Секретарь редакционной коллегии:

Нуне Джомардян, Международный университет Евразия

ISSN 1829-4952

© Международный университет Евразия, 2024

Решением Высшей квалификационной комиссией МОНКС РА от 28.06.2019 № 164А Вестник Международного университета Евразия включен в перечень научных изданий приемлемых для публикаций основных результатов и положений диссертаций.

***Recommended for publication by the Scientific
Council of Eurasia International University***

Editorial Board:

Gagik Vardanyan (Chairman), Doctor of Economics, Professor, Eurasia International University

Albert Makaryan, Doctor of Philological Sciences, Professor, Yerevan State University

Ani Stepanyan, Ph.D. in Law, Associate Professor, All-Russian State University of Justice (RLA of the Ministry of Justice of Russia)

Anna Ohanyan, Ph.D. in Political Science, Stonehill University, USA

Aram Ayvazyan, Ph.D. in Law, Eurasia International University, RA Investigative Committee

Ashot Aleksanyan, Doctor of Political Science, Professor, Yerevan State University

Ashot Khachatryan, Doctor of Law, Professor, Judge of the Constitutional Court of the RA

Ashot Markosyan, Doctor of Economics, Professor, Yerevan State University

Dimitrios Zachos, Ph.D. in Pedagogical Sciences, Associate Professor, Aristotle University of Thessaloniki, Greece

Yeranuhi Manukyan, Ph.D. in Philosophy, Associate Professor, Yerevan State University

Gayane Tovmasyan, Ph.D. in Economics, Associate Professor, «AMBERD» Research Center of the Armenian State University of Economics

Grazina Chuladiene, Ph.D. in Pedagogy, Associate Professor, Mikolas Romeris University, Lithuania

Heghine Manasyan, Doctor of Economics, Caucasus Research Resource Center (CRRRC)-Armenia

Hovhannes Harutyunyan, Ph.D. in Economics, Eurasia International University

Khachik Galstyan, Doctor of Political Sciences, Associate Professor, Yerevan State University

Igor Karapetyan, Doctor of Pedagogical Sciences, Professor, Khachatur Abovyan Armenian State Pedagogical University

Lusine Harutyunyan, Doctor of Philology, Professor, Armenian State University of Economics

Lusine Fliyan, Doctor of Philological Sciences, Professor, Eurasia International University

Mariam Margaryan, Doctor of Political Sciences, Professor, Ph.D. in Philosophy, Associate Professor, Academy of Public Administration of the Republic of Armenia

Marta Moldovan-Cywińska, Ph. D. in Humanities, Vistula University (Vistula Group of Universities, Warsaw, Poland), Wszechnica Polska University in Warsaw, Poland

Piotr Borowski, Ph.D. in Engineering, Economist, Associate Professor, Warsaw University of Life Sciences, Poland

Ramón Bouzas Lorenzo, Ph.D. in Political Science, University of Santiago de Compostela, Spain

Samvel Muradyan, Doctor of Philological Sciences, Professor, Yerevan State University.

Sona Hakobyan, Ph.D. in Philological Sciences, European University of Armenia

Stepan Tsaghikyan, Doctor of Law, Professor, Armenian-Russian (Slavonic) University

Suren Ohanyan, Doctor of Geographical Sciences, Professor, Eurasia International University

Vahe Vanesyan, Ph.D. in Political Science, CIDA - Canadian Agency for International Development

Vladimir Hovhannisyan, Doctor of Law, Professor, Armenian-Russian (Slavonic) University

Secretary of Editorial Board:

Nune Jomardyan, Eurasia International University

ISSN 1829-4952

© Eurasia International University, 2024

According to № 164 (A)U decree of RA Supreme Certifying Committee (hereinafter, SCC) dated on June 28, 2019, EIU Bulletin is now recognized as a scientifically relevant journal included in the list of SCC, RA Ministry of Education, Science, Culture and Sport for publicizing the main principals and guidelines of Ph.D. dissertation.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աշոտ Խաչատրյան, Միլենա Ղազարյան
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ. ՏԵՍԱԿԱՆ – ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 8

Գևորգ Իսրայելյան
ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՔՐԵԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳՎՈՐՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 24

Էդգար Ավետիսյան, Ռաֆիկ Ավետիսյան
ՌԱԶՄԱԿԱՆ ԲՆՈՒՅԹ ՈՒՆԵՑՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՏ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ 33

Աննա Հովհաննիսյան
ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԴԻՐԱՀԱՐՈՒՅՑ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ 44

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
Անահիտ Սերոբյան
ԲԱՔՈՒԹՔԻԼԻՍԻ-ԿԱՐՍ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 61

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
Կառլեն Խաչատրյան, Գուրգեն Գասպարյան
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՐԱԿԸ ՈՐՊԵՏ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԻՐՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ 78

Գոհար Ավագյան, Մերի Ավանեսյան, Ադրինե Ավետիսյան, Միլենա Խառատյան, Անի Վարդանյան, Արամ Առաքելյան
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՇԱՀՈՒԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 96

Լուսինե Գրիգորյան
ԲՈՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՆԱՐԱԳԵԼՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 109

Քրիստինե Թաթոսյան
ՀՀ ՎԱՐՁԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՅ (ՀՀ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐՈՎ) 123

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
Աննա Կուրանյան
ԳԼՈՒԽ ԲԱՂԱԴԻՐԻՉՈՎ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻ ԾՈՒՐՋ (ԻՍՊԱՆԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ) 139

Անի Թամազյան
ԵՐԿԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵԱՀԿ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՓԱՏՏԱԹՂԹԵՐՈՒՄ (ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ) 154

Անուշ Մարտիրոսյան
ԱՀԱՐԵԿՉՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ 170

Արա Զարգարյան
ԼԵՎՈՆ ԱՐԻՍՅԱՆԻ ԵՎ ԱՄՏՈՒՆԻ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԻ ՆԱԽԱՏԻՊԵՐԸ ԵՂԻՇԵ ԶԱՐԵՏԻ ՊՈՆԶԻՍՈՒՄ 180

Մարիամ Հակոբյան
ՄԱՐԴ – ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ Զ. ԼՈՆԴՈՆԻ ՆԵՈՈՐՄԱՆՏԻԿԱԿԱՆ ՎԵՊԵՐՈՒՄ 188

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ
Աննա Գաբրիելյան
ՈՒՍՈՒՑԻ ԴԵՐԸ ԱՇԱԿԵՐՏԻ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԺՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅՈՒՆ 199

Ալլա Ռուդենկո
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍԱՅԻՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՅԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ 211

СОДЕРЖАНИЕ

ЮРИСПРУДЕНЦИЯ

Ашот Хачатрян, Милена Казарян
КОНСТИТУЦИОННЫЕ ГАРАНТИИ ОБЕСПЕЧЕНИЯ ТЕРРИТОРИАЛЬНОЙ ЦЕЛОСТНОСТИ ГОСУДАРСТВА:
ТЕОРЕТИКО-ПРАВОВОЙ АНАЛИЗ 8

Геворг Исраелян
ПРОБЛЕМА СОВЕРШЕНСТВОВАНИЯ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ КРИМИНОЛОГИЧЕСКОЙ
ЭКСПЕРТИЗЫ ПРОЕКТОВ НОРМАТИВНЫХ ПРАВОВЫХ АКТОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ 24

Эдгар Аветисян, Рафик Аветисян
ЗАЩИТА ВОЕННОЙ ИНФОРМАЦИИ КАК ГАРАНТИЯ ВОЕННОЙ БЕЗОПАСНОСТИ 33

Анна Оганесян
ПРАВОВОЕ СОДЕРЖАНИЕ И ПРОБЛЕМНЫЕ АСПЕКТЫ ПРЕЗУМПЦИИ НЕВИНОВНОСТИ В
ЕВРОПЕЙСКОМ ПРАВЕ 44

ПОЛИТОЛОГИЯ

Анаит Серобян
ЗНАЧЕНИЕ И ЭКСПЛУАТАЦИОННЫЕ ПРЕИМУЩЕСТВА ЖЕЛЕЗНОЙ ДОРОГИ БАКУ-ТБИЛИСИ-КАРС 61

ЭКОНОМИКА

Карлен Хачатрян, Гурген Гаспарян
КАЧЕСТВО ГОСУДАРСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ КАК ПРЕДПОСЫЛКА ПРЕОДОЛЕНИЯ
ГОСУДАРСТВЕННОЙ ХРУПКОСТИ 78

Гоар Авагян, Мэри Аванесян, Адрине Аветисян, Милена Харатян, Ани Варданян, Арам Аракелян
СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ПРИБЫЛЬНОСТИ КОММЕРЧЕСКИХ БАНКОВ 96

Лусине Григорян
ПРОБЛЕМЫ ПРЕДОТВРАЩЕНИЯ МИГРАЦИИ НАСИЛЬСТВЕННО ПЕРЕСЕЛЕННЫХ ГРАЖДАН АРЦАХА 109

Кристине Татосян
ВЛИЯНИЕ АДМИНИСТРАТИВНЫХ РЕФОРМ РА С ПЕРСПЕКТИВЫ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ
УПРАВЛЕНИЯ СООБЩЕСТВАМИ (С ПРИМЕРАМИ АНАЛИЗА РАСШИРЕННЫХ СООБЩЕСТВ) 123

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

Анна Кубанян
О ПРОБЛЕМЕ ВАРИАТИВНОСТИ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ С КОМПОНЕНТОМ “ГОЛОВА”
(ИСПАНСКО-АРМЯНСКИЙ СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ) 139

Ани Тамазян
ДВУСМЫСЛЕННОСТЬ В ДОКУМЕНТАХ МИНСКОЙ ГРУППЫ ОБСЕ (НА ПРИМЕРЕ
НАГОРНО-КАРАБАХСКОГО КОНФЛИКТА) 154

Ануш Мартиросян
ЛИНГВИСТИЧЕСКОЕ ВОСПРИЯТИЕ ЭВОЛЮЦИИ ТЕРРОРИЗМА И ЕГО ПОЛИТИЧЕСКИЕ
ПОСЛЕДСТВИЯ НА ПРОТЯЖЕНИИ ИСТОРИИ 170

Ара Заргарян
ПРОТОТИПЫ ЛЕВОНА АРИСЯНА И АМАТУНИ ВАРДАПЕТЯНА В ПОЭЗИИ ЕГИШЕ ЧАРЕНЦА 180

Мариам Аюкян
АКТУАЛЬНОСТЬ КОНФЛИКТА ЧЕЛОВЕК-ЦИВИЛИЗАЦИИ В НЕОРОМАНТИЧЕСКИХ РОМАНАХ ДЖЕКА
ЛОНДОНА 188

ПЕДАГОГИКА И МЕТОДИКА ОБУЧЕНИЯ

Анна Габриелян
РОЛЬ ПРЕПОДАВАТЕЛЯ В ПРОЦЕССЕ ФОРМИРОВАНИЯ СИСТЕМЫ ЦЕННОСТЕЙ
САМООБРАЗОВАНИЯ СТУДЕНТА 199

Алла Руденко
ПУТИ ФОРМИРОВАНИЯ ЮРИДИЧЕСКОЙ ДИСКУРСИВНОЙ КОМПЕТЕНЦИИ НА МАТЕРИАЛЕ
ПРАВОВЫХ ДОКУМЕНТОВ 211

CONTENT

JURISPRUDENCE

Ashot Khachatryan, Milena Ghazaryan
CONSTITUTIONAL GUARANTEES OF ENSURING THE TERRITORIAL INTEGRITY OF THE STATE:
THEORETICAL AND LEGAL ANALYSIS 8

Gevorg Israyelyan
THE PROBLEM TO IMPROVE THE LEGAL REGULATION OF THE
CRIMINOLOGICAL EXPERTISE OF DRAFT NORMATIVE LEGAL ACTS
IN THE REPUBLIC OF ARMENIA 24

Edgar Avetisyan, Rafik Avetisyan
PROTECTION OF MILITARY INFORMATION AS A GUARANTEE OF MILITARY SECURITY 33

Anna Hovhannisyan
LEGAL CONTENT AND PROBLEMATIC ASPECTS OF THE PRESUMPTION OF INNOCENCE IN EUROPEAN LAW 44

POLITICAL SCIENCE

Anahit Serobyan
THE IMPORTANCE AND OPERATIONAL ADVANTAGES OF THE BAKU-TBILISI-KARS RAILWAY 61

ECONOMICS

Karlen Khachatryan, Gurgen Gasparyan
QUALITY OF GOVERNANCE AS A PREREQUISITE FOR OVERCOMING STATE FRAGILITY 78

Gohar Avagyan, Meri Avanesyan, Adrine Avetisyan, Milena Kharatyan, Ani Vardanyan, Aram Arakelyan
COMPARATIVE ANALYSIS OF PROFITABILITY OF COMMERCIAL BANKS 96

Lusine Grigoryan
CHALLENGES IN PREVENTING MIGRATION OF FORCEFULLY DISPLACED CITIZENS OF ARTSAKH 109

Kristine Tatosyan
IMPACT OF RA ADMINISTRATIVE REFORMS FROM THE PERSPECTIVE OF INCREASING
COMMUNITY MANAGEMENT EFFICIENCY (WITH EXAMPLES OF ANALYSIS OF ENLARGED COMMUNITIES) 123

LINGUISTICS AND PHILOLOGY

Анна Кубанян
О ПРОБЛЕМЕ ВАРИАТИВНОСТИ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ С КОМПОНЕНТОМ “ГОЛОВА”
(ИСПАНСКО-АРМЯНСКИЙ СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ) 139

Ani Tamazyan
AMBIGUITY IN THE OSCE MINSK GROUP DOCUMENTS
(ON THE EXAMPLE OF NAGORNO-KARABAGH CONFLICT) 154

Anush Martirosyan
THE LINGUISTIC PERCEPTION OF EVOLUTION OF TERRORISM AND ITS POLITICAL
IMPLICATIONS ACROSS HISTORY 170

Ara Zargaryan
PROTOTYPES OF LEVON ARISYAN AND AMATUNI VARDAPETYAN IN THE POETRY OF YEGHISHE CHARENTS 180

Mariam Hakobyan
THE CONTEMPORANEITY OF HUMAN-CIVILIZATION CONFLICT IN THE NEO-ROMANTIC
NOVELS OF JACK LONDON 188

PEDAGOGY AND TEACHING METHODOLOGY

Anna Gabrielyan
THE ROLE OF THE TEACHER IN THE PROCESS OF DEVELOPING THE STUDENT’S
SELF-EDUCATION VALUE SYSTEM 199

Alla Rudenko
THE WAYS OF FORMATION OF LEGAL DISCOURSE COMPETENCE BASED ON THE MATERIAL
OF LEGAL DOCUMENTS 211

Իրավագիտություն

Աշոտ Խաչատրյան
Իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

Միլենա Ղազարյան
Հայաստանում Եվրոպական համալսարանի հայցորդ
Էլ. հասցե՝ a.khachatryan@inbox.ru

DOI: 10.53614/18294952-2024.1-8

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ. ՏԵՍԱԿԱՆ – ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածը անդրադառնում է սահմանադրական իրավունքի տեսության կարևորագույն հիմնախնդիրներից մեկի՝ պետության տարածքային ամբողջականության ապահովման սահմանադրաիրավական երաշխիքների տեսական-իրավական հիմնախնդիրների հետազոտությանը:

Հոդվածում բացահայտվում է ժամանակակից իրավագիտության մեջ «պետության տարածքային ամբողջականություն» եզրույթի, ինչպես նաև տարածքային ամբողջականության ապահովման սահմանադրաիրավական ժամանակակից երաշխիքների համակարգի էությունն ու դրսևորման առանձնահատկությունները: Թեմայի ուսումնասիրության նպատակն է՝ հիմք ընդունելով կատարված հետազոտության առանձնահատկությունները և ստացված արդյունքները, տարածքային ամբողջականության ապահովման սահմանադրաիրավական ժամանակակից երաշխիքների վերաբերյալ իրավագետների տեսական-իրավական հայացքների ու ուսմունքների շրջանակում դոկտրինալ մոտեցումները, տարածքային ամբողջականության ապահովման երաշխիքների սահմանադրաիրավական բովանդակության դրսևորման առանձնահատկություն-

ները Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգավորումների համատեքստում:

Առանձնակի ուշադրության են արժանացնել «պետության տարածքային ամբողջականություն» սահմանադրական սկզբունքի համատեքստում սահմանադրափրավական առանձին երաշխիքներին առնչվող հիմնախնդիրները: Ուսումնասիրության արդյունքները հնարավորություն կընձեռնեն առավել մանրամասն պատկերացում կազմել «պետության տարածքային ամբողջականություն» սկզբունքի սահմանադրական ամրագրման ժամանակակից հիմնախնդիրների վերաբերյալ, ինչի արդյունքում կկարողանանք կատարելագործել ՀՀ օրենսդրությունը:

Հիմնաբառեր. իրավական ապահովման օբյեկտ, պետության տարածքային ամբողջականություն, սահմանադրափրավական երաշխիք, տարածքային ամբողջականության ապահովման սահմանադրափրավական երաշխիք, իրավական ապահովման օբյեկտի գործառույթ:

Ներածություն

Պետության ինքնիշխանության երաշխավորման առանցքային պայմաններից է տարածքային ամբողջականության ապահովման երաշխիքների սահմանումը: Ընդ որում, և մասնագիտական քննարկումների շրջանակում, և քաղաքական համակարգում, և միջազգային հարաբերություններում՝ պետության տարածքային ամբողջականությունը դիտարկվում է որպես պետական ինքնիշխանության իրավական երաշխիք, բայց, միաժամանակ՝ պետական իշխանության միասնականության ապահովման պայման (Խաչատրյան, 2016, էջ 83: Այվազյան Ն. և Այվազյան Ա., 2004, էջ 5-6, 4-6):

Մեթոդ

Սույն ուսումնասիրության մեթոդական հիմքը ձևավորվում է ֆորմալ տրամաբանական և ֆորմալ իրավական մեթոդներով, համակարգային կառուցվածքային, տեխնիկական, համեմատական և իրավական վերլուծության մեթոդներով, որոնք օգտագործվել են ուսումնասիրության, համակարգման, հասկացությունների և իրավական բովանդակությունների բացահայտման ընթացքում:

Արդյունքներ և քննարկում

Իրավագիտությունում վաղուց արդեն հաստատվել է այն, որ՝ «երաշխիք» հասկացությունը ֆրանսերենից թարգմանաբար նշանակում է «ապահովում», և այդ մոտեցման շրջանակում այն ընկալվում է որպես իրավական որոշակի պայմանների, միջոցների, եղանակների ամբողջություն, որոնք կոչված են ապահովելու իրավական երևույթի կամ գործընթացի

ապահովում (Иванов, 2018, էջ 17):

Պրոֆեսոր Մ.Վ. Բագվայր մարդու իրավունքների ու ազատությունների սահմանադրաիրավական երաշխիքներ է դիտարկում այնպիսի իրավական միջոցները, որոնք ապահովում են դրանց իրականացումը (Баглай, 2007, էջ 294): Համանման տեսակետ են արտահայտել նաև անվանի գիտնականներ Վ.Ս. Ներսեսյանցը (Нерсесянц, 2014, էջ 158), Ա.Ս. Ալեքսեևը (Алексеев, 1995, էջ 217), Վ.Դ. Պերևալով (Теория государства и права, 2002, էջ 474), Ա.Վ. Ումիևը (Умиев, 2006, էջ 11), Ի.Ե. Ֆարբերը (Фарбер, 1979, էջ 158) և այլք:

Ընդհանրապես իրավական երաշխիքների հիմնախնդիրը իրավագիտության բարդ ու բազմաշերտ կատեգորիաներից է: Խնդիրը նրանում է, որ գոյություն ունեն իրավական ապահովմանը ենթակա բազմաթիվ օբյեկտներ, որոնց թվում առաջնահերթ նշանակություն ունեն պետության տարածքային ամբողջականության ապահովման երաշխիքները (The Oxford Handbook on the United Nations, 2008, էջ 21):

Տեսական-իրավական հայացքների ու ուսմունքների շրջանակում (դոկտրին) իրավական երաշխիքների, դրանց տեսակների ու համակարգի հետ կապված հարցերը բավարար չափով ուսումնասիրված չեն: Առաջին տեսական հետազոտությունը խնդրո հարցի վերաբերյալ իրականացրել է պրոֆեսոր Ա.Վ.Լոշկարևը: Վերջինս գտնում է, որ «իրավաբանական երաշխիքները արտահայտվում են առանձնահատուկ իրավաբանական միջոցներով՝ որպես նորմատիվ իրավական կարգադրեր, որոնց իրացումը ապահովվում է այլ նորմատիվ իրավական կարգադրերով» (Лощкарев, 2008, էջ 129):

Անհրաժեշտ է նկատել, որ նման դիրքորոշման պարագայում իրավաբանական օբյեկտների ապահովումը պայմանավորվում է արդեն նորմատիվ իրավական այլ կարգադրագրերի ընդունմամբ: Անշուշտ, այդպիսի նեղ մոտեցմանը կարելի է հակազդել իրավունքի հիմնական հատկանիշներից մեկի՝ հարկադրականության իրագործման միջոցով (Володко, 2015, էջ 19): Բայց, միաժամանակ, հարկ է նշել, որ՝ որպես իրավական ապահովման օբյեկտ կարող է հանդիսանալ իրավունքն ամբողջությամբ վերցրած:

Մեր կարծիքով, իրավական երաշխիքները հանդիսանում են ընդհանուր երաշխիքների համակարգի բաղկացուցիչ մաս¹, իսկ ապահովման ենթակա օբյեկտների ու սուբյեկտների համակցությունը կազմում են իրավական ապահովման (երաշխավորման) կառուցակարգը, որի վերջնական նպատակն է՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների երաշխավորված իրացումը (Белавина, 2002, էջ 87):

Իրավական ապահովման կառուցակարգն իր հերթին դիտարկվում է որպես ընդհանուր ապահովման կառուցակարգի ենթահամակարգ, որը ներառում է սահմանադրաիրավական ապահովման ենթակա օբյեկտների, այդ թվում՝ սահմանադրական արժեքների, սկզբունքների, նորմերի, հանրային իշխանության և քաղաքացիական հասարակության սուբյեկտների ամբողջություն:

1 Ավանդաբար, իրավագիտության մեջ առանձնացվում են ընդհանուր (սոցիալ-տնտեսական, քաղաքական, հոգևոր, գաղափարական և այլն) և հատուկ իրավական երաշխիքները:

Հայ իրավագետների շրջանում իրավական երաշխիքները նույնպես կարևորվում են առաջնային նշանակությամբ, որոնց օգնությամբ պետությունը նպատակաուղղված ներգործություն է ունենում հասարակական ու քաղաքական հարաբերությունների վրա: Այդ իմաստով արդարացի է այն մոտեցումը, ըստ որի իրավական երաշխիքները իրավական ակտերով ամրագրված այն միջոցներն են, որոնց միջոցով պետությունը կանխարգելում կամ չեզոքացնում է իր դեմ ուղղված հնարավոր կամ իրական սպառնալիքները (Խաչատրյան, 2016, էջ 83), ինչը սույն հետազոտության առարկայի տրամաբանության շրջանակում նշանակում է, որ տարածքային ամբողջականության ապահովման իրավական երաշխիքները պետք է համարժեք լինեն այն սպառնալիքներին, որոնք իրականում գոյություն ունեն կամ կարող են տեղիք տրվել (Weiss, 1993, էջ 18):

Պետության տարածքային ամբողջականությունը սահմանադրական արժեհամակարգի կարևոր բաղադրիչներից է, որի ապահովումը պետության գերակա և առաջնահերթ խնդիրներից է:

Պրոֆեսոր Վ.Գ. Աննենկովան անդրադառնալով պետության միասնության և տարածքային ամբողջականության երաշխիքներին՝ դրանք դիտարկում է որպես պետության միասնության իրական գործող և զարգացող իրավական ինստիտուտների ապահովման պայմաններ և միջոցներ, ինչպիսին են՝ տարածքը, պետական իշխանությունը, անձի իրավական կարգավիճակը, պետության դաշնային սուբյեկտների միասնությունը, իրավական տարածքի միասնությունը, տնտեսական միասնությունը (Анненкова, 2006, էջ 12):

Ասվածի համատեքստում՝ տարածքային ամբողջականության ապահովման երաշխիքներին իրավական ձև հաղորդելն ինքնին անհրաժեշտ ու կարևոր գործընթաց է, որը կոչված է ապահովել ոչ միայն պետության ինքնիշխանության ու միասնության պաշտպանությունը, այլև մարդու իրավունքների արդյունավետ իրացումը և այդ իրավունքների պաշտպանությունը որևէ ռոնձգությունից:

Մեր կարծիքով, սահմանադրաիրավական երաշխիքները կարող են ամրագրված լինել սահմանադրական սկզբունքներում, սահմանադրական և իրավական այլ նորմերում կամ սահմանադրական իրավունքի տեսության մեջ (իրավական պետության, արտաքին քաղաքականության, երկրի պաշտպանության և անվտանգության ռազմավարությունում և այլն):

Միաժամանակ, սահմանադրաիրավական երաշխիքները դրանք սահմանադրաիրավական այն կառուցակարգերն են, որոնք իրականացնում են ոչ միայն ապահովման գործառույթներ, այլև՝ դրանց նորմատիվ իրավական բովանդակությունն անմիջականորեն ուղղված է սոցիալ-իրավական որևէ օբյեկտի ապահովմանը: Հետևաբար՝ սահմանադրաիրավական երաշխիքների բովանդակությունն ավելի ընդգրկում է, քան սահմանադրաիրավական կառուցակարգերին, քանի որ ոչ բոլոր կառուցակարգերը կարող են իրականացնել այդ գործառույթները:

Ակնհայտ է, որ սահմանադրաիրավական երաշխիքները կարող են արդյունավետ իրագործվել, եթե ապահովված են նաև համապատասխան կա-

ռուցվածքային բաղադրատարրերով, ինչպիսին են՝ իրավասու սուբյեկտները, անհրաժեշտ նյութական բաղադրիչները և այլն: Հետևաբար, միայն իրավունքի, իրավական երաշխիքների, իրավական կառուցակարգերի և կառուցվածքային բաղադրիչների միասնական փոխգործակցության արդյունքում, մասնավորապես՝ պետության տարածքային ամբողջականության ապահովման շրջանակում, հնարավոր է հասնել առաջադրված նպատակին և համապատասխան արդյունք արձանագրել:

Այնուհետև, սահմանադրաիրավական երաշխիքները օժտված են նաև գործառնական նշանակությամբ, որոնք դրսևորվում են տարբեր իրավական ապահովման գործառույթների միջոցով, որպիսիք են՝ 1) սահմանադրաիրավական սկզբունքներից, նորմերից, արժեքներից բխող և տեսական-իրավական հայացքների հիման վրա ձևավորված իրավական ապահովման օբյեկտների ստեղծման գործառույթը, 2) արդեն իսկ գոյություն ունեցող իրավական ապահովման հիշյալ օբյեկտների իրագործման գործառույթը, 3) այդ օբյեկտների արդյունավետ գործառնության պահպանման գործառույթը, 4) իրավական ապահովման նույն օբյեկտների պաշտպանության գործառույթը:

Այստեղից, սահմանադրաիրավական երաշխիքների էության և բովանդակության վերլուծությունը թույլ է տալիս սահմանել սահմանադրական այդ կատեգորիան՝ որպես իրավաբանորեն ամրագրված և կառուցվածքային առունով ներառված եղանակների, միջոցների, մեթոդների կուռ տրամաբանական համակարգ, որն ուղղված է իրավական օբյեկտների, այդ թվում՝ պետության տարածքային ամբողջականության ապահովմանը:

Այդ առունով, յուրաքանչյուր պետության համար տարածքային ամբողջականության ապահովումն ինքնին ենթադրում է բազմազան ու մշտական երաշխիքների առկայություն: Եվ այդպիսի երաշխիքների սահմանումը և դրանց հետ կապված հիմնախնդիրների լուծումը ինքնին ընկալվում է այդ պետության պետական քաղաքականության կարևոր բաղկացուցիչ մաս:

Թեև մասնագիտական գրականության մեջ առանձին հեղինակներ անդրադարձ կատարել են պետության տարածքային ամբողջականության ապահովման երաշխիքների հիմնախնդրին (Амиров, 2004, էջ 17), (Горюнов, 2007, էջ 85), այնուամենայնիվ, հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ բացակայում է «տարածքային ամբողջականության իրավական երաշխիքներ» եզրույթի նորմատիվային սահմանումը, իսկ սահմանադրական իրավունքի գիտության մեջ դեռևս ամբողջական հայեցակարգային ձևակերպում չի ստացել՝ ներպետական օրենսդրության առանձնահատկություններով պայմանավորված:

Ասվածի համատեքստում՝ անհրաժեշտ է կարևորել Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության ապահովման սահմանադրաիրավական հետևյալ երաշխիքները, որոնք, մեր կարծիքով դրսևորվում են իրենց գերակայությամբ և առաջնահերթությամբ:

Առաջին, այդպիսի երաշխիքներից է՝ ժողովրդավիշխանությունը: Որպես ժողովրդավարության բարձրագույն իրավական հիմք՝ Սահմանադրությունն ամրագրում է ժողովրդավարության սկզբունքը՝ հաստատելով իշխանության

պատկանելությունը ժողովրդին: Միաժամանակ Սահմանադրությունը սահմանում է, որ ժողովուրդն իրեն պատկանող իշխանությունն իրականացնում է ոչ միայն անմիջապես, այլ նաև ներկայացուցչական ժողովրդավարությամբ, պաշտոնատար անձանց և ինքնակառավարման մարմինների միջոցով և որոնց անմիջական մասնակցությամբ ապահովում է նաև սահմանների անձեռնմխելիությունը և տարածքային ամբողջականության ապահովումը (ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 1, 2, 14 և այլն):

Ժողովրդավարությունն իրական դարձնելու համար ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է իրավական պետության և ժողովրդավարական հասարակարգի ու իրավակարգի որոշակի մոդել, որը բնութագրվում է որպես պետության տարածքային ամբողջականության ապահովման հետ փոխկապակցված հուսալի ու անհրաժեշտ միջոցների ամբողջություն՝ ուղղված Հայաստանի Հանրապետության պաշտպանության ու անվտանգության, քաղաքացիական հասարակության, մարդու արժանապատվության, բնական և անօտարելի իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև դրանց անձեռնմխելիության երաշխավորված պաշտպանության համար (ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 2, 3, 14 և այլն):

Երկրորդ, Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության ապահովման սահմանադրաիրավական հաջորդ կարևոր երաշխիքներից է՝ պետական ինքնիշխանությունը: Այն Սահմանադրությամբ ամրագրված հիմնարար երաշխիքներից է, որն անմիջականորեն կապված է պետության տարածքային գերակայության և տարածքային ամբողջականության ապահովման հետ:

Որպես սահմանադրական հիմնարար սկզբունք և պետության հիմնական բնութագրիչ՝ ինքնիշխանությունն առավել ընդհանուր ու ելակետային է, քանի որ այն արտահայտում է պետական իշխանության ներքին գերակայությունն ու լիիշխանությունն և արտաքին անկախությունը, որն էական է պետության կազմակերպման ու գործունեության, այդ թվում նաև՝ սահմանադրական մեկ այլ հիմնարար սկզբունքի՝ պետության տարածքային ամբողջականության ապահովման համար:

Ներկայացնելով ինքնիշխանության և տարածքային ամբողջականության հարաբերակցության հիմնախնդիրը, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դրանց փոխադարձ կապը պայմանավորված է այդ եզրույթների դիալեկտիկ միասնությամբ, որտեղ ինքնիշխանությունն արտահայտվում է պետական իշխանության գերակայության, պետության տարածքային ամբողջականության և անկախության իրավաբանական և քաղաքական կողմերի միասնությամբ, ինչը նշանակում է, որ ինքնիշխանության իրավաբանական կողմը չի կարող գոյություն ունենալ առանց տարածքային ամբողջականության ապահովման իրական հիմքերի կամ հակառակը, պետությունը տարածքային ամբողջականության իրացման հնարավորությունը պայմանավորված է պետական իշխանության և անկախության ինստիտուցիոնալ գերակայությամբ:

Այստեղից, ինքնիշխանությունը պետության մենաշնորհային իրավունքն է ապահովելու երկրի անվտանգությունը, տարածքային ամբողջականությամբ:

յունը և մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների պահպանումն ու պաշտպանությունը: Այսինքն, պետության ինքնիշխան իրավունքն է լեզվաբանական հնարավորության ստեղծում՝ պաշտպանելու իր ազգային անվտանգությունը, սահմանների անձեռնմխելիությունը, տարածքային ամբողջականությունը մարդու իրավունքներն ու ազատությունները՝ տարբեր եղանակներով ու միջոցներով:

Երրորդ, պետության տարածքային ամբողջականության ապահովման տեսանկյունից մարդու իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը հանդիսանում են սահմանադրաիրավական հաջորդ կարևոր երաշխիքը: Ակնհայտ է, որ պետության տարածքային ամբողջականության ապահովման հիմնական նպատակն է՝ պաշտպանել այդ տարածքում ապրող մարդու պատիվն ու արժանապատվությունը, նրա իրավունքներն ու ազատությունները:

Սահմանադրաիրավական այս երաշխիքն առանցքային նշանակություն ունի տարածքային ամբողջականության ապահովման սահմանադրական իրավակարգավորումների ոլորտում, ընդ որում, ՀՀ Սահմանադրությունը ելնում է այն կանխադրությից, որ արժանապատվությունը մարդուն ներհատուկ է հենց նրա գոյության իմաստով:

ՀՀ Սահմանադրության 3-րդ և 23-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ մարդու՝ որպես բարձրագույն արժեքի անօտարելի արժանապատվությունը անխախտելի է և կազմում է իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքը: Այստեղից ակներև է մարդու արժանապատվության և հիմնական իրավունքների միջև անխզելի կապը, ինչը նշանակում է, որ՝ առանց մարդու արժանապատվության չկան հիմնական իրավունքներ կամ՝ առանց հիմնական իրավունքների չկա մարդու արժանապատվություն:

Բացի այդ, ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է պետության պարտականությունները հիմնական իրավունքների նկատմամբ՝ նախատեսելով այդ պարտականությունների երկու դրսևորում: Ըստ այդ դրույթի՝ հանրային իշխանությունը պարտավոր է մի կողմից հարգել, իսկ մյուս կողմից՝ պաշտպանել այդ իրավունքները և անազատությունները: Դրանով ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է հիմնական իրավունքներից բխող՝ պետության նեգատիվ և պոզիտիվ պարտականությունները: Սակայն մարդու իրավունքներն ու պարտականությունները գործում են պետության ողջ տարածքում, հետևաբար հարգելով և պաշտպանելով դրանք, պետությունը կամա թե ակամա պարտավոր է պաշտպանել իր տարածքային ամբողջականությունը: Եվ հենց այստեղ է ուղղակի դրսևորվում մարդու իրավունքները որպես տարածքային ամբողջականության ապահովման երաշխիք, ինչը նշանակում է, որ՝ եթե խախտվում է պետության տարածքային ամբողջականությունը, ինքնին խախտվում է մարդու իրավունքներն ու ազատությունները:

Հետևաբար՝ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ու հարգումն անուղղակի և ուղղակի կառուցված է նաև պետության

տարածքային ամբողջականության երաշխավորված պաշտպանության համատեքստում:

Չորրորդ, պետության տարածքային ամբողջականության ապահովման ոլորտում իր ուղղակի դերակատարումն ունի իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը՝ որպես սահմանադրաիրավական կարևոր երաշխիք:

ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրության և օրենքների պահանջներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, որն ենթադրում է որոշակի համակարգի ու կառուցակարգերի առկայություն, հիմնաքարային նշանակություն ունի, այդ թվում նաև երկրի տարածքային ամբողջականության ապահովման երաշխիքների համակարգում: Ընդ որում, եթե իշխանությունների բաժանումը դրսևորվում է՝ գործառույթային, կառուցակարգային և հասցեական նշանակությամբ, ապա տարածքային ամբողջականության ապահովման առումով այն ենթադրում է՝ օրենսդրական, գործադիր-կարգադրիչ և արդարադատական առանձնացված գործառույթների առկայություն:

Ընդ որում, եթե հետազոտության առարկա ոլորտում օրենսդիր մարմինը օրենսդրական ակտերով կանոնակարգում է պետության սահմանի կարգավորման ռեժիմը, տարածքային ամբողջականության ապահովման կառուցակարգերը, զինված ուժերի լիազորությունները տարածքային ամբողջականության ապահովման ոլորտում, իսկ գործադիր իշխանության մարմիններն՝ իրենց լիազորությունների սահմաններում կոչված են ապահովելու սահմանների անձեռնմխելիությունը և տարածքային ամբողջականությունը, ապա դատական իշխանության մարմիններն արդարադատություն իրականացնելիս անուղղակիորեն մասնակցում են պետության տարածքային ամբողջականության ապահովմանն այնպիսի կառուցակարգերի ու միջոցների միջոցով, ինչպիսիք են՝ սահմանադրական վերահսկողությունը, արդար դատաքննություն իրականացնելը, դատական ակտեր ընդունելը և այլն, որոնք ապահովվում են զինված ուժերի մարտունակությունը և կարգապահովությունը՝ իրենց ծառայական պարտականությունները կատարելիս:

Հինգերորդ, զինված ուժերը հանդիսանում են պետության տարածքային ամբողջականության ապահովման սահմանադրական ինստիտուցիոնալ համակարգ բովանդակող սահմանադրաիրավական հաջորդ կարևոր երաշխիքը: Այսպես, պաշտպանությունը՝ այդ թվում տարածքային ամբողջականության ապահովումը ցանկացած պետության կարևորագույն գործառույթներից է: Հայաստանի Հանրապետության զինված ուժերի սահմանադրական պարտականությունն է ապահովել Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը (Սահմանադրություն, հոդվ. 14, մաս 1):

Միաժամանակ, «Պաշտպանության մասին» ՀՀ 2017 թվականի դեկտեմ-

բերի 6-ի թիվ ԸՕ-196-ն օրենքի 3-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը ներառում է պետության տարածքային ամբողջականությունը, սահմանների անձեռնմխելիությունը և անվտանգությունը, այդ թվում՝ քաղաքացիների պաշտպանվածությունը, ռազմական սպառնալիքներից ապահովելու նպատակով խաղաղ ժամանակ և ռազմական դրության պայմաններում քաղաքական, ռազմական, տնտեսական, տեղեկատվական, սոցիալական, իրավական և այլ բնույթի միջոցների կիրառման ու միջոցառումների իրականացման ընդհանրություն:

Բացի այդ, «Պետական սահմանի մասին» ՀՀ 2001 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ ԸՕ-265-ն օրենքի 2-րդ հոդվածի կարգավորումներից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունը պետական սահմանը տեղորոշելիս և փոփոխելիս, սահմանակից պետությունների հետ հարաբերությունները, ինչպես նաև սահմանամերձ շրջաններում և միջազգային հարողակցության ուղիներում իրավահարաբերությունները կարգավորելիս առաջնորդվում է նաև Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության պաշտպանության սկզբունքով:

Իսկ «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» 2007 թվականի հունվարի 17-ի թիվ ԸՕ-258-Ն օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է, որ ռազմական դրություն հայտարարվում է միայն այն հանգամանքների առկայության դեպքում, որոնք անմիջականորեն սպառնում են նաև Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությանը և դրանով պայմանավորված՝ քաղաքացիների կյանքին ու անվտանգությանը:

Այնուհետև, Հայաստանի Հանրապետության նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի ՆԸ-37-Ն հրամանագրով հաստատված Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությամբ՝ ազգային անվտանգության հիմնարար արժեք է սահմանվել պետության և ժողովրդի պաշտպանվածությունը, ինչը այդ ռազմավարության տրամաբանությամբ, նշանակում է. Հայաստանի Հանրապետությունն ապահովում է իր տարածքային ամբողջականությունը, սահմանների անձեռնմխելիությունը, բնակչության ֆիզիկական գոյությունը: Միաժամանակ, բնակչության բնագավառում որպես ռազմավարության նպատակ է դիտարկվել պետության այնպիսի պաշտպանական ներուժի ապահովումը, որն անհրաժեշտ է, այդ թվում Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը պաշտպանելը:

Իսկ Հայաստանի Հանրապետության նախագահի 2007 թվականի դեկտեմբերի 25-ի մեկ այլ՝ ՆԸ-308-Ն հրամանագրով հաստատված Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության բնակչության ֆիզիկական գոյության, պետության անկախության, ինքնիշխանության և տարածքային ամբողջականության, սահմանների անձեռնմխելիության նկատմամբ այլ պետությունների ձեռնարկած ոտնձգությունները, միջամտությունը Հայաստանի Հանրապետության ներքին գործերին դիտարկվում է որպես, ռազմական անվտան-

գուրջան արտաքին սպառնալիք (կետ 3), իսկ Հայաստանի Հանրապետության զինված ուժերը որպես ռազմական անվտանգության համակարգի հիմքը կազմող պետական ռազմական կառույց, կոչված է ապահովելու այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության զինված պաշտպանությունը (կետ 35):

Հիշատակված նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ տարածքային ամբողջականության պահպանումը, պաշտպանությունը և ապահովումը իրականացվում է պետական իրավասու մարմինների կողմից համապատասխան միջոցների ու պայմանների առկայությամբ: Իսկ դա ենթադրում է, որ պետության տարածքային ամբողջականության ապահովման, պահպանման ու պաշտպանության հնարավոր միջոցները և պայմանները, հետևաբար՝ դրանց իրագործումն իրականացնող պետական մարմինները կազմում են Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության ապահովման երաշխիքը:

Վեցերորդ, պետության տարածքային ամբողջականության ապահովման հաջորդ կարևոր երաշխիքն առնչվում է Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման՝ որպես ժողովրդավարության էական հիմքերից մեկի երաշխավորման հետ (Սահմանադրություն, հոդվ. 9): Այս երաշխիքի հիմքում ընկած է այն գաղափարը, ըստ որի՝ ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է տեղական ինքնակառավարման՝ որպես հանրային իշխանության մասի միջոցով, ինչը ենթադրում է, որ համայնքային իշխանությունն ածանցվում է հանրային իշխանությունից, հետևաբար, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը պայմանավորված պետք է լինի համայնքի բնակիչների շահերի բավարարման և Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը, անվտանգությանը, տարածքային ամբողջականությանը ու սահմանների անձեռնմխելիությանը մասնակցության առաջնահերթությամբ:

Ասվածը ենթադրաբար համարժեք է այն եզրահանգման հետ, որ սահմանադրական ինստիտուցիոնալ մարմինները, այդ թվում տեղական ինքնակառավարման մարմինները պետության տարածքային ամբողջականության երաշխավորման համատեքստում ունեն առանձնակի կարևորություն ու նշանակություն Դա պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ տեղական ինքնակառավարման համակարգը՝ որպես ինքնիշխան պետության գոյության հիմնական տարրերից մեկը, հանրային իշխանությանն իր մասնակցության ապահովմամբ, նույնպես դիտարկվում է պետության միասնության ու պետության տարածքային ամբողջականության համար երաշխիքային նշանակություն ունեցող սահմանադրական իստիտուտ:

Յոթերորդ, պետության տարածքային ամբողջականության ապահովման հաջորդ կարևոր երաշխիքն առնչվում է պետության միասնական իրավական ու տնտեսական տարածքի ապահովման խնդրին: Այն ունի ընդհանրական նշանակություն և փոխկապակցված է պետության ամբողջականության և միասնության հետ: Ընդ որում, պետության միասնական իրավական ու տնտեսական տարածքի ապահովման համատեքստում պե-

տության միասնականությունը և տարածքային ամբողջականությունն ինքնին անհրաժեշտ է ընկալել միմյանց փոխլրացնող և փոխգործակցող տարրերի ամբողջություն, որտեղ պետության միասնականությունը դրսևորվում է ոչ միայն տարածքային ամբողջականության ու միասնության բնույթով, այլև պետության քաղաքական, տնտեսական, սոցիալական և իրավական համակարգերի միասնությամբ:

Այսպես, տարածքային ամբողջականության ապահովման խորապատկերում պետության միասնական իրավական տարածքն անմիջականորեն փոխկապակցվում է իրավաստեղծ գործընթացների միասնականության ապահովման, իրավական ակտերի աստիճանակարգված ենթակայության և այլ սկզբունքների իրացման հետ: Ընդ որում, միասնական իրավական տարածքի երաշխիքների համակարգի կատարելագործումն ինքնին պայմանավորված է պրակտիկայում սահմանադրաիրավական որոշակի սկզբունքների իրացման արդյունավետության ապահովման անհրաժեշտությամբ, մասնավորապես՝ իրավական նորմերի աստիճանակարգության սկզբունքը (ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 5), օրինականության սկզբունքը (ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 6), անմեղության կանխավարկածի սկզբունքը (ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 66), մեղքի սկզբունքը և պատժի համաչափության սկզբունքը (ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 71) և այլն:

Իսկ միասնական տնտեսական տարածքի երաշխավորումն առնչվում է տնտեսական այնպիսի միջոցների հետ, որոնց իրագործումն ինքնաբերաբար պահանջում է տնտեսական հարաբերությունների կարգավորման հատուկ միասնական իրավական ընթացակարգերի իրականացում: Մասնավորապես, միասնական տնտեսական տարածքի երաշխիքներն առաջին հերթին պայմանավորված են միասնական քաղաքացիական, ֆինանսական, տնտեսական օրենսդրության առկայությամբ, որպեսզիք են՝ սեփականության բոլոր ձևերի ճանաչում և հավասարապես պաշտպանումը (Սահմանադրություն, հոդվ. 10), տնտեսական միասնական կարգը (ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 11), տնտեսական գործունեության ազատության երաշխավորումը (ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 59) տարածքային զարգացման համաչափությունը (ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 86, մաս 10), ֆինանսատնտեսական, վարկային և հարկային միասնական պետական քաղաքականության իրականացումը (ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 154, մաս 1) և այլն: Ասվածի համատեքստում, կարծում ենք արդարացի է այն պնդումը, ըստ որի՝ միասնական տնտեսական տարածքի երաշխիքներն առաջին հերթին պայմանավորված են միասնական քաղաքացիական, ֆինանսական, տնտեսական օրենսդրության առկայությամբ (Кузовкин, 2005, էջ 17,18):

Եզրակացություն.

Այսպիսով, ընդհանրացնելով, անհրաժեշտ է կատարել հետևյալ եզրահանգումները.

1) պետության տարածքային ամբողջականության ապահովման սահ-

մանադրաիրավական երաշխիքները դրանք սահմանադրաիրավական այն կառուցակարգերն են, որոնք իրականացնում են ոչ միայն ապահովման գործառույթներ, այլև՝ դրանց նորմատիվ իրավական բովանդակությունն անմիջականորեն ուղղված է սոցիալ-իրավական որևէ օբյեկտի ապահովմանը:

2) սահմանադրաիրավական այդ երաշխիքներն օժտված են գործառնական նշանակությամբ, որոնք դրսևորվում են սահմանադրաիրավական սկզբունքներից, նորմերից, արժեքներից բխող և տեսական-իրավական հայացքների հիման վրա ձևավորված իրավական ապահովման ենթակա օբյեկտների՝ ստեղծման, իրագործման, պահպանման և պաշտպանության գործառույթների միջոցով:

3) պետության տարածքային ամբողջականության ապահովումը պայմանավորված է որոշակի սահմանադրաիրավական երաշխիքների առկայությամբ, դրանք են՝ ժողովրդաիշխանությունը, պետական ինքնիշխանությունը, մարդու իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, զինված ուժերը, տեղական ինքնակառավարման համակարգը, պետության միասնական իրավական ու տնտեսական տարածքը, որոնք միաժամանակ՝ պետական իշխանության գերակայության, պետության միասնության ու անկախության երաշխավորման համատեքստում կարող են դիտարկվել որպես Հայաստանի Հանրապետության՝ որպես ինքնիշխան պետության տարածքային ամբողջականության ապահովման հիմնական կամ երաշխիքային նշանակություն ունեցող պայմաններ:

Օգտագործված գրականության ցանկ

- Այվազյան, Ն., Այվազյան, Ա. (2004) Պետության տարածքային կառուցվածքի և սահմանադրական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում // *Օրենք և իրականություն*. Եր., հ.հ. 3,4,5,6:
- Խաչատրյան, Ա.Ա. (2016) *Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության հիմնախնդիրները, սահմանադրական ժամանակակից կարգավորումների համալրեքսպրում և դրանց լուծումները միջազգային իրավական ու սահմանադրական արդարադատության պրակտիկայում*: Եր.:
- Алексеев, С.С. (1995). *Теория права*. М.
- Амиров, М.Г. (2004). *Суверенитет и территориальная целостность России как конституционно-правовые принципы*: Дис. ... канд. юр ид, наук. Махачкала.
- Анненкова, В.Т. (2006). *Единство Российского государства: проблемы конституционной теории и практики*: Автореф. дисс... докт. юрид. наук. М.
- Баглай, М.В. (2007). *Конституционное право Российской Федерации: учебник для вузов*. М.
- Белавина, Ю.И. (2002). *Конституционные основы обеспечения единства в Российской Федерации и ее территориальной целостности*: дисс. ...канд. юрид. наук. М.

- Володко, И.А. (2015). *Конституционно-правовое принуждение в Российской Федерации*: дисс...канд. юрид. наук. Омск.
- Горюнов, В.В. (2007). *Суверенитет Российской Федерации: сущность, содержание, гарантии*: диссертация... кандидата юридических наук: М.
- Иванов, С.В. (2018). *Конституционно-правовые гарантии государственного единства и территориальной целостности Российской Федерации*: дис. ... канд. юрид. наук, Омск.
- Нерсесянц, В.С. (2014). *Общая теория права и государства*. М.
- Кузовкин, Д.В. (2005). *Обеспечение единства экономического пространства Российской Федерации: конституционно-правовое исследование*: дис. ... канд. юрид. наук. – Екатеринбург.
- Лошкарев, А.В. (2008). *Правовые гарантии: теоретические проблемы определения понятия и классификации*: дис. ... канд. юрид. наук. – Самара.
- Теория государства и права: учебник для вузов* (2002) / под ред. проф. В.М. Корельского и проф. В.Д. Перевалова. М.
- Фарбер, И.Е., Миронов, О.О., Кабышев, В.Т. (1979). *Советское государственное право: монография*. Саратов.
- Умиев, А.И. (2006). *Гарантии прав личности в конституционном праве Российской Федерации и международном праве*: автореф. дис. ... канд. юрид. наук. СПб.
- The Oxford Handbook on the United Nations* (2008). Ed. by Thomas G. Weiss and Sam Daws. — Oxford University Press.
- Weiss T. (ed.). (1993). *Collective Security in a Changing World*. — Boulder, CO: Lynne Rienner.

References

- Ayvazyan, N., Ayvazyan, A. (2004) Petut'yan taratsk'aayin karruts'vatsk'i yev sahmanadrakan kargavorman himnakhndirneri Hayastani Hanrapetut'yunum [The problems of territorial structure of the state and constitutional regulation in the Republic of Armenia]// *Orenk' yev irakanut'yun*. Yer., h.h. 3,4,5,6. (In Arm.)
- Khach'atryan, A.A. (2016) *Hayastani Hanrapetut'yan ink'nishkhanut'yan himnakhndirneri, sahmanadrakan zhamanakakits' kargavorumneri hamatek'stum yev drants' lutsumneri mijazgayin iravakan u sahmanadrakan ardaradatut'yan praktikayum* [The problems of sovereignty of the Republic of Armenia in the context of modern constitutional regulations and their solutions in the practice of international legal and constitutional justice]: Yer.: (In Arm.)
- Alekseyev, S.S. (1995). *Teoriya prava* [Theory of law]. М. (In Rus.)
- Amirov, M.G. (2004). *Suverenitet i territorial'naya tselostnost' Rossii kak konstitutsionno-pravovyye printsipy*: [Sovereignty and territorial integrity of Russia as constitutional and legal principles:] Dis. ... kand. yur id, nauk. Makhachkala. (In Rus.)
- Annenkova, V.T. (2006). *Yedinstvo Rossiyskogo gosudarstva: problemy konstitutsionnoy teorii i praktiki*: [Unity of the Russian state: problems of constitutional theory and practice: Author's abstract] Avtoref. diss... dokt. yurid. nauk. М. (In Rus.)
- Baglay, M.V. (2007). *Konstitutsionnoye pravo Rossiyskoy Federatsii: uchebnik dlya vuzov*

- [Constitutional law of the Russian Federation: textbook for universities]. M. (In Rus.)
- Belavina, YU.I. (2002). *Konstitutsionnyye osnovy obespecheniya yedinstva v Rossiyskoy Federatsii i yeye territorial'noy tselostnosti* [Constitutional foundations for ensuring unity in the Russian Federation and its territorial integrity]: diss. ...kand. yurid. nauk. M. (In Rus.)
- Volodko, I.A. (2015). *Konstitutsionno-pravovoye prinuzhdeniye v Rossiyskoy Federatsii* [Constitutional and legal coercion in the Russian Federation]: diss. ...kand. yurid. nauk. Omsk. (In Rus.)
- Goryunov, V.V. (2007). *Suverenitet Rossiyskoy Federatsii: sushchnost', sodержaniye, garantii* [Sovereignty of the Russian Federation: essence, content, guarantees]: dissertatsiya... kandidata yuridicheskikh nauk: M. (In Rus.)
- Ivanov, S.V. (2018). *Konstitutsionno-pravovyye garantii gosudarstvennogo yedinstva i territorial'noy tselostnosti Rossiyskoy Federatsii* [Constitutional and legal guarantees of state unity and territorial integrity of the Russian Federation]: dis. ... kand. yurid. nauk, Omsk. (In Rus.)
- Nersesyants, V.S. (2014). *Obshchaya teoriya prava i gosudarstva* [General theory of law and state]. M. (In Rus.)
- Kuzovkin, D.V. (2005). *Obespecheniye yedinstva ekonomicheskogo prostranstva Rossiyskoy Federatsii: konstitutsionno-pravovoye issledovaniye* [Ensuring the unity of the economic space of the Russian Federation]: dis. ... kand. yurid. nauk. – Yekaterinburg. (In Rus.)
- Kuzovkin, D.V. (2005). *Obespecheniye yedinstva ekonomicheskogo prostranstva Rossiyskoy Federatsii: konstitutsionno-pravovoye issledovaniye* [Ensuring the unity of the economic space of the Russian Federation]: dis. ... kand. yurid. nauk. – Yekaterinburg. (In Rus.)
- Loshkarev, A.V. (2008). *Pravovyye garantii: teoreticheskiye problemy opredeleniya ponyatiya i klassifikatsii* [Legal guarantees: theoretical problems of definition and classification]: dis. ... kand. yurid. nauk. – Samara. (In Rus.)
- Teoriya gosudarstva i prava: uchebnyy dlya vuzov* [Theory of State and Law: Textbook for Universities] (2002) / pod red. prof. V.M. Korel'skogo i prof. V.D. Perevalova. M. (In Rus.)
- Farber, I.Ye., Mironov, O.O., Kabyshev, V.T. (1979). *Sovetskoye gosudarstvennoye pravo: monografiya* [Soviet state law: monograph]. Saratov. (In Rus.)
- Umiyev, A.I. (2006). *Garantii prav lichnosti v konstitutsionnom prave Rossiyskoy Federatsii i mezhdunarodnom prave* [Guarantees of individual rights in the constitutional law of the Russian (In Rus.)
- The Oxford Handbook on the United Nations* (2008). Ed. by Thomas G. Weiss and Sam Daws. — Oxford University Press. (In Eng.)
- Weiss T. (ed.). (1993). *Collective Security in a Changing World*. — Boulder, CO: Lynne Rienner. (In Eng.)

Ашот Хачатрян

Доктор юридических наук, профессор

Милена Казарян

Соискатель Европейского университета в Армении

Эл. адрес: a.khachatryan@inbox.ru

КОНСТИТУЦИОННЫЕ ГАРАНТИИ ОБЕСПЕЧЕНИЯ ТЕРРИТОРИАЛЬНОЙ ЦЕЛОСТНОСТИ ГОСУДАРСТВА: ТЕОРЕТИКО- ПРАВОВОЙ АНАЛИЗ

В данной статье рассматривается один из важнейших вопросов теории конституционного права: исследование теоретико-правовых вопросов конституционных гарантий территориальной целостности государства.

В статье раскрываются сущность и проявление термина «территориальная целостность государства» в современной юридической науке, а также система современных конституционных гарантий обеспечения территориальной целостности.

Цель исследования темы – взяв за основу особенности проведенного исследования и полученные результаты, доктринальные подходы в рамках теоретико-правовых взглядов и учений юристов относительно современных конституционных гарантий территориальной целостности, особенности проявления конституционно-правового содержания гарантий территориальной целостности в контексте конституционных норм Республики Армения.

Особого внимания заслуживают вопросы, связанные с отдельными конституционными гарантиями в контексте конституционного принципа «территориальная целостность государства». Результаты исследования дадут возможность сформировать более детальное представление о современных вопросах конституционного укрепления принципа «территориальной целостности государства», в результате чего мы сможем усовершенствовать законодательство республики. Армении.

Ключевые слова: объект правового обеспечения, территориальная целостность государства, конституционно-правовая гарантия, конституционно-правовая гарантия обеспечения территориальной целостности, функции объекта правового обеспечения.

Ashot Khachatryan
Doctor of law, Professor

Milena Ghazaryan
Ph.D. student at the European University in Armenia
Email: a.khachatryan@inbox.ru

CONSTITUTIONAL GUARANTEES OF ENSURING THE TERRITORIAL INTEGRITY OF THE STATE: THEORETICAL AND LEGAL ANALYSIS

This article examines one of the most important issues in the theory of constitutional law: the study of theoretical and legal issues of constitutional guarantees of the territorial integrity of the state.

The article reveals the essence and manifestation of the term “territorial integrity of the state” in modern legal science, as well as the system of modern constitutional guarantees to ensure territorial integrity.

The purpose of the study is to take as a basis the features of the research carried out and the results obtained, doctrinal approaches within the framework of theoretical and legal views and teachings of lawyers regarding modern constitutional guarantees of territorial integrity, features of the manifestation of the constitutional and legal content of guarantees of territorial integrity in the context of the constitutional norms of the Republic of Armenia.

Issues related to individual constitutional guarantees in the context of the constitutional principle of “territorial integrity of the state” deserve special attention. The results of the study will make it possible to form a more detailed understanding of modern issues of constitutional strengthening of the principle of “territorial integrity of the state”, as a result of which we will be able to improve the legislation of the republic. Armenia.

Key words: object of legal support, territorial integrity of the state, constitutional and legal guarantee, constitutional and legal guarantee of ensuring territorial integrity, functions of the object of legal support.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2024թ. մայիսի 22-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2024թ. մայիսի 24-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2024թ. մայիսի 31-ին:

Գևորգ Իսրայելյան
ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրոյի Քրեաբանության
կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի պետ,
Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Էլ. հասցե՝ gevorg.israyelyan@eiu.am

DOI: 10.53614/18294952-2024.1-24

ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՔՐԵԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հանցավորության կանխարգելման ժամանակակից իրավական միջոցների թվին է դասվում նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քրեաբանական փորձաքննությունը: Հեղինակի հետազոտության արդյունքները վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունում փորձաքննության քննարկվող տեսակի իրավական հիմքերը թերի են, բացակայում են դրա կազմակերպման և անցկացման կառուցակարգերը, ինչի արդյունքում մինչ օրս համապատասխան կառույցի կողմից այդպիսի փորձաքննություն չի իրականացվել: Ըստ այդմ, հեղինակն անհրաժեշտ է համարում ընդունել «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քրեաբանական փորձաքննության մասին» օրենք, որը կսահմանի նշված փորձաքննության հասկացությունը, խնդիրները, սկզբունքները, օբյեկտները, կկարգավորի փորձաքննության այլ խնդիրներին առնչվող հարաբերությունները, ինչպես նաև իրականացնել այլ իրավակարգավորումներ:

Հիմնաբառեր. նորմատիվ իրավական ակտ, նախագիծ, քրեաբանական փորձաքննություն:

Ներածություն

Հանցավորության կանխարգելման ժամանակակից իրավական միջոցների թվին է դասվում նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քրեաբանական փորձաքննությունը: Մեր հետազոտության արդյունքները վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունում քրեաբանական փորձաքննության քննարկվող տեսակի իրավական հիմքերը թերի են, բացակայում են այդ փորձաքննության կազմակերպման և անցկացման կառուցակարգերը (Իսրայելյան¹, 2024, էջ 6), ինչը խոսում է խնդրի իրավական կարգավորման կատարելագործման անհրաժեշտության մասին:

Նշվածից ելնելով՝ սույն հետազոտության նպատակն է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քրեաբանական փորձաքննության (այսուհետ՝ Փորձաքննություն) իրավական հիմքերի կատարելագործման ուղիների նախանշումը, իսկ խնդիրներն են Փորձաքննության իրավական հիմքերի վերլուծությունը և կատարելագործման առաջարկությունների ներկայացումը:

Մեթոդը

Սույն հետազոտության մեթոդաբանական հիմքն են կազմել տրամաբանական, համակարգային-կառուցվածքային վերլուծության, ձևական-իրավաբանական մեթոդները:

Արդյունքներ և քննարկում

1. Փորձաքննության իրավական հիմքերի վերլուծությունը

Հայաստանի Հանրապետությունում Փորձաքննությանն է նվիրված «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և նրա կանոնադրությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 22.07.2004թ. № 1127-Ն որոշման 3-րդ կետի «է» ենթակետի կարգավորումը, որի համաձայն՝ Փորձաքննությունների ազգային բյուրոյի (այսուհետ՝ Բյուրո) նպատակներից է իրավաստեղծ լիազորություններ ունեցող մարմինների որոշմամբ իրավական ակտերի նախագծերի քրեաբանական փորձաքննությունների կազմակերպումը և իրականացումը:

Նշված իրավակարգավորումից բխում է հետևյալը.

1. Փորձաքննություն նշանակելու իրավասությունը պատկանում է իրավաստեղծ լիազորություններ ունեցող մարմիններին: Պետք է նշել, որ նշվածից բացի որևէ այլ իրավական ակտով նման լիազորություն նախատեսված չէ¹, ինչի արդյունքում ցայսօր գեթ մեկ Փորձաքննություն չի նշանակվել:

¹ Բացառություն է կազմում «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 22.10.2009թ. № 1205-Ն որոշումը, որը, ըստ էության, կարգավորում է Փորձաքննության մի տեսակը՝ իրականացվող Արդարադատության նախարարության կողմից: Կարծում ենք՝ նոր կարգավորումների պարագայում դա ևս պետք է իրականացվի Բյուրոյի համապատասխան ստորաբաժանման կողմից:

2. Փորձաքննությունը կազմակերպելու և իրականացնելու իրավասությունը պատկանում է Բյուրոյին: Այս նպատակի իրագործման համար, «Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 27.03.2008թ. № 1039-Ն որոշման հավելված 1-ի 10-րդ կետի 47-րդ ենթակետի հիման վրա, 2009 թվականին Բյուրոյի կազմում ստեղծվել է Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոն (այսուհետ՝ Կենտրոն):

3. Փորձաքննության օբյեկտ են իրավական ակտերի նախագծերը: Ձևակերպումից բխում է, որ խոսքը բոլոր տեսակի իրավական ակտերի նախագծերի մասին է՝ նորմատիվ, լոկալ և անհատական:

Թվարկված իրավակարգավորումների վերլուծությունից բխում է, որ բացակայում են Փորձաքննության նշանակման և անցկացման իրավական կառուցակարգերը: Նշվածի արդյունքում Կենտրոնի կողմից Փորձաքննություն չի իրականացվում:

2. Փորձաքննության իրավական հիմքերի կատարելագործման ուղիները Հայաստանի Հանրապետությունում

Խնդրո առարկայի կարգավորման հիմնական միջոցը, մեր կարծիքով, «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քրեաբանական փորձաքննության մասին» օրենքի ընդունումն է:

Կարծում ենք, որ այս օրենքը պետք է կանոնակարգի հետևյալ հարաբերությունները.

1) Փորձաքննության հասկացությունը և խնդիրները

Փորձաքննության հասկացությունը պետք է ներառի դրա հիմնական հատկանիշները (Осипова, 2024): Ըստ այդմ, կարծում ենք, որ Փորձաքննության օրենսդրական սահմանումը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քրեաբանական փորձաքննությունը նորմատիվ իրավական ակտերի նախագծերի բովանդակության հետազոտությունն է, որի նպատակն է այնպիսի իրավական նորմերի հայտնաբերումը, որոնց իրագործումը հասարակական կյանքի տարբեր բնագավառներում կարող է հանգեցնել (հանգեցրել է) բացասական հետևանքների՝ պայմանավորված քրեածին կամ զոհածին բնույթի վտանգների (ռիսկերի) առաջացմամբ»:

Կարծում ենք, որ Փորձաքննության հիմնական խնդիրներին անհրաժեշտ է դասել.

ա) նորմատիվ իրավական ակտերի նախագծման ընթացքում քրեաբանության ժամանակակից գիտական պատկերացումներին համահունչ քրեածին և զոհածին ռիսկի ծագման հնարավորության կանխատեսումը,

բ) քրեածին և զոհածին ռիսկի ծագմանը նպաստող իրավական կարգավորումների թերությունների վերացման նպատակով գիտականորեն հիմնավորված առաջարկությունների մշակումը,

գ) քրեածին և զոհածին ռիսկի ծագումը բացառող կարգավորման նոր

տարբերակների առաջարկումը:

2) Փորձաքննության կազմակերպման և անցկացման սկզբունքները

Սկզբունքների խնդրին անդրադարձ կատարվել է մեր նախորդ հրատարակություններից մեկում (Իսրայելյան², 2024, էջ 110-111):

3) Փորձաքննության օբյեկտները

Ի տարբերություն գործող իրավակարգավորման, որը, ինչպես նշվեց, նախատեսում է բոլոր տեսակի իրավական ակտերի նախագծերի քրեաբանական փորձաքննությունների կազմակերպումը և իրականացումը, Փորձաքննության օբյեկտ, մեր կարծիքով, պետք է դիտարկվեն բացառապես նորմատիվ իրավական ակտերի նախագծերը: Կարծում ենք, որ ոչ նորմատիվ իրավական ակտերը Փորձաքննության օբյեկտ չպետք է հանդիսանան, քանի որ դրանք ընդունվում են նորմատիվ իրավական ակտերի հիման վրա, և առկա են դրանց ընդունման նկատմամբ վերահսկողության և իրավաչափության ստուգման կառուցակարգեր, ինչպես օրինակ՝ անհատական ակտերի պարագայում բողոքարկման ինստիտուտը:

Գործող օրենսդրությամբ սահմանված օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերից բացի, Փորձաքննության օբյեկտ պետք է դառնան նաև մինչև Փորձաքննության ներդրումն ընդունված և գործող նորմատիվ իրավական ակտերը, քանի որ դրանք ևս կարող են պարունակել իրավական բնույթի քրեածին և զոհածին գործոններ: Այս մասին կարելի է ամրագրում նախատեսել առաջարկվող օրենքի եզրափակիչ դրույթներում:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Փորձաքննության չեն կարող ենթարկվել այն նորմատիվ իրավական ակտերի նախագծերը, որոնք չեն անցնում պարտադիր իրավական փորձաքննություն, ինչպես օրինակ՝ հանրաքվե կամ ընտրություններ նշանակելու վերաբերյալ նորմատիվ իրավական ակտերի նախագծերը («Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, հոդված 7):

4) Փորձաքննությունն նշանակող սուբյեկտները

Որպես այդպիսիք կարող են հանդիսանալ իրավաստեղծ լիազորություններ ունեցող մարմինները: Այս առումով անհրաժեշտ են համարժեք իրավական կարգավորումներ ոչ միայն տվյալ օրենքով, այլև համապատասխան մարմինների գործունեությունը կանոնակարգող աղբյուրներում:

5) Փորձաքննությունն իրականացնելու իրավասություն ունեցող մարմնի կարգավիճակը

Ինչպես գործող կարգավորումների պարագայում, այնպես և ապագայում, կարծում ենք, որ Փորձաքննության կատարումը պետք է իրականացնի Կենտրոնը:

Որպես Կենտրոնի իրավական դրության բաղադրիչ անհրաժեշտ է ամրագրել հետևյալ իրավունքները.

ա) համապատասխան սուբյեկտներից պահանջել Փորձաքննության իրականացման համար անհրաժեշտ լրացուցիչ տեղեկատվություն,

բ) ֆինանսների, բժշկության և այլ բնագավառներում հատուկ գիտելիք-

ների և կարողությունների միաժամանակյա կիրառման անհրաժեշտության դեպքում Փորձաքննությանը ներգրավել իրավաստեղծ լիազորություններ ունեցող մարմինների աշխատակիցների, ինչպես նաև անկախ փորձագետների,

գ) մինչև պարտադիր Փորձաքննության ներդրումն ընդունված նորմատիվ իրավական ակտերի Փորձաքննության անցկացման պարագայում գործող ակտերն ընդունած մարմիններից պահանջել դրանց կիրառման պրակտիկայի վերլուծության մասին տեղեկատվություն:

6) Փորձաքննություն նշանակելու կարգը

Փորձաքննության նշանակումը, կարծում ենք, պետք է իրականացվի համապատասխան իրավաստեղծ լիազորություններ ունեցող մարմնի հայտով: Այն պետք է ունենա ուղեկցող նամակ, նորմատիվ իրավական ակտի ընդունման (արձակման) հիմնավորումը, նորմատիվ իրավական ակտերի պետական-իրավական փորձաքննության եզրակացությունը:

7) Փորձաքննության անցկացման կարգը

Փորձաքննությունը պետք է կատարվի «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված նորմատիվ իրավական ակտերի պետական-իրավական փորձաքննության իրականացումից հետո: Հաշվի առնելով Փորձաքննության բարդությունը, կարծում ենք, որ այն պետք է իրականացվի հանձնաժողովային կարգով:

8) Փորձաքննության եզրակացությունը

Եզրակացությունը փաստաթուղթ է, որը պետք է բովանդակի համապատասխան հարցերով հիմնավորված եզրահանգումներ: Այն պետք է ունենա հետևյալ կառուցվածքը.

1) ներածական մաս՝ տեղեկատվություն այն մասին, թե երբ և ում կողմից է ներկայացվել Փորձաքննության օբյեկտը (գործող նորմատիվ իրավական ակտի դեպքում՝ նաև երբ և ում կողմից է այն ընդունվել), տեղեկատվություն Փորձաքննության անցկացմանը Կենտրոնի կողմից այլ մարմիններից ներգրավված անձանց մասին,

2) հետազոտական մաս, որտեղ նշվում են Փորձաքննության մեթոդները, Փորձաքննության օբյեկտի ընդհանուր քրեաբանական գնահատականը, այն նորմերի մատնանշումը, որոնց կիրառումը կարող է հանգեցնել (հանգեցրել է) քրեածին կամ զոհածին ռիսկի առաջացման, կամ նշում այդպիսի նորմերի բացակայության մասին՝ համապատասխան հիմնավորմամբ,

3) եզրափակիչ մաս, որում թվարկվում են բացահայտված քրեածին կամ զոհածին գործոնները (կամ նշվում է դրանց բացակայության մասին) և ձևակերպվում են դրանց վերացմանն ուղղված գիտականորեն հիմնավորված առաջարկություններ (Барановский, Шевчук, 2012, էջեր 192-193):

Վերը թվարկված հարաբերությունների շրջանակը սպառիչ չէ, ուստի Օրենքը կամրագրի նաև այլ դրույթներ, օրինակ՝ Փորձաքննության անցկացման ժամկետները, մերժման հիմքերը, ֆինանսավորման կարգը և այլն:

Իրավական հիմքերի կատարելագործման հաջորդ միջոցը վերոհիշյալ օրենքի դրույթների մանրամասն կանոնակարգումն է՝ համապատասխան

ենթաօրենսդրական ակտերի (օրինակ՝ Փորձաքննության անցկացման մեթոդաբանության վերաբերյալ) ընդունումը, գործող ակտերի դրույթները համապատասխանեցումը նոր կարգավորումներին (օրինակ՝ Բյուրոյի կանոնադրության մեջ Փորձաքննության օբյեկտ սահմանել ոչ թե բոլոր, այլ միայն նորմատիվ իրավական ակտերը):

Եզրակացություն

Մեր կողմից կատարված հետազոտության արդյունքները վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունում խնդրո առարկայի կանոնակարգման իրավական հիմքերը բավարար չեն, բացակայում են Փորձաքննության կազմակերպման և անցկացման կառուցակարգերը, ինչի արդյունքում Կենտրոնի կողմից գեթ մեկ Փորձաքննություն չի իրականացվել: Ըստ այդմ, անհրաժեշտ է համապատասխան իրավական կարգավորումների կատարումը: Մասնավորապես առաջարկվում է ընդունել «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քրեաբանական փորձաքննության մասին» օրենք, որը կկարգավորի Փորձաքննության հասկացությունը, խնդիրները, սկզբունքները, օբյեկտները, նշանակման, անցկացման կարգը և այլ հարաբերություններ, ինչպես նաև իրականացնել այլ կարգավորումներ:

Օգտագործված գրականության ցանկ

- «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք: Ընդունվել է 21.03.2018թ.: ՀՕ-180-Ն: ՀՀՊՏ 2018.03.28/23(1381): Հոդ.373:
- «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպություն սրեղծելու և նրա կանոնադրությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 22.07.2004թ. № 1127-Ն որոշում: ՀՀՊՏ 2004.09.01/47(346): Հոդ.1032:
- «Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 27.03.2008թ. № 1039-Ն որոշում: ՀՀՊՏ 2008.10.01/60(650): Հոդ.1022:
- «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 22.10.2009թ. № 1205-Ն որոշում: ՀՀՊՏ 2009.11.04/55(721): Հոդ.1230:
- Իսրայելյան Գ.¹, Հանցավորությունը պայմանավորող իրավական բնույթի գործոնները և դրանց կանխարգելման արդի միջոցները Հայաստանի Հանրապետությունում // Դատական իշխանություն, հունվար-մարտ 2024, 1-3 (295-297), էջեր 3-9:
- Իսրայելյան Գ.², Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քրեաբանական փորձաքննության սկզբունքները և մեթոդները // Օրենքի պարվար № 17, 2024, էջեր 108-117:

Барановский Н.А., Шевчук Н.Н. Криминологическая экспертиза в системе предупреждения преступности // Вестник Полоцкого государственного университета.

Экономические и юридические науки. № 13. 2012. С. 189–194.

Осипова Е.С. *Понятие и сущность криминологической экспертизы нормативно-правовых актов* // <https://sun.tsu.ru/mminfo/000063105/312/image/312-113.pdf> (վերջին մուտք՝ 30.01.2024):

References

- «*Normativ iravakan akteri masin*» *Hayastani Hanrapetutyany orenk*. Yndunvel e 21.03.2018t. HO-180-N. HHPT 2018.03.28/23(1381). Hod.373.
- Hayastani Hanrapetutyany gitutyunneri azgayin akademiayi «Pordzaqnnutyunneri azgayin byuro» petakan voch arevtrayin kazmakerputyun steghtselu yev nra kanonadrutyuny hastatelu masin» Hayastani Hanrapetutyany karavarutyany 22.07.2004թ. № 1127-N voroshum*. HHPT 2004.09.01/47(346). Hod.1032.
- «*Hayastani Hanrapetutyany hancagortsutyunneri kankhargelman petakan tsragiry hastatelu masin*» *Hayastani Hanrapetutyany karavarutyany 27.03.2008թ. № 1039-N voroshum*. HHPT 2008.10.01/60(650). Hod.1022.
- «*Normativ iravakan akteri nakhagtseri hakakorupcion bnagavarum kargavorman azdecutyany gnahatman irakanacman kargy hastatelu masin*» *Hayastani Hanrapetutyany karavarutyany 22.10.2009t. № 1205-N voroshum*. HHPT 2009.11.04/55(721). Hod. 1230.
- Israyelyan G.¹, *Hancavorutyuny paymanavorogh iravakan bnuyti gortsonnery yev dranc kankhargelman ardi mijocnery Hayastani Hanrapetutyanyum // Datakan ishkanutyun, hunvar-mart 2024, 1-3 (295-297), ejer 3-9:*
- Israyelyan G.², *Normativ iravakan akteri nakhagtseri qreabanakan pordzaqnnutyany skzbunqneri yev metodnery // Orenqi patvar № 17, 2024, ejer 108-117:*
- Baranovski N.A., Shevchuk N.N. *Kriminologicheskaya ekspertiza v sisteme preduprezhdeniya prestupnosti // Vestnik Polockogo gosudarstvennogo universiteta. Ekonomicheskie i yuridicheskie nauki. № 13. 2012. S. 189-194.*
- Osipova E.S. *Ponyatie i sushnost kriminologicheskoi ekspertizi normativno-pravovikh aktov* // <https://sun.tsu.ru/mminfo/000063105/312/image/312-113.pdf> (verjin mutq - 30.01.2024).

Геворг Исраелян

*Начальник Научно-исследовательского
центра прикладных проблем криминологии
Национального бюро экспертиз Национальной академии
наук Республики Армения,
преподаватель Международного университета Евразия,
кандидат юридических наук, доцент
Эл. адрес: gevorg.israyelyan@eiu.am*

ПРОБЛЕМА СОВЕРШЕНСТВОВАНИЯ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ КРИМИНОЛОГИЧЕСКОЙ ЭКСПЕРТИЗЫ ПРОЕКТОВ НОРМАТИВНЫХ ПРАВОВЫХ АКТОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

К числу современных правовых средств предупреждения преступности относится криминологическая экспертиза проектов нормативных правовых актов. В Республике Армения указанной экспертизе посвящена регламентация подпункта «э» п. 3 постановления Правительства от 22 июля 2004 года № 1127-Н «О создании государственной некоммерческой организации «Национальное бюро экспертиз» Национальной академии наук Республики Армения и утверждении его устава», согласно которой одним из целей Национального бюро экспертиз является организация и проведение криминологической экспертизы проектов правовых актов по решению органов, обладающих правотворческими полномочиями. Для реализации упомянутой цели, на основе подпункта 47 п. 10 приложения 1 постановления Правительства от 27.03.2008 года № 1039-Н «Об утверждении государственной программы предупреждения преступлений в Республике Армения», в составе Национального бюро экспертиз в 2009 году был создан Научно-исследовательский центр прикладных проблем криминологии.

Результаты исследования автора свидетельствуют о том, что вышеуказанные правовые основы обсуждаемого вида криминологической экспертизы недостаточны, отсутствуют механизмы организации и проведения обсуждаемой экспертизы, вследствие чего указанным центром до сих пор ни одной такой экспертизы не было осуществлено. Исходя из сказанного, автор считает необходимым предусмотрение соответствующих регламентаций, принятие закона «О криминологической экспертизе проектов нормативных правовых актов». По мнению автора этот закон определит понятие, задачи, принципы, объекты и другие отношения, связанные с проблемами указанной экспертизы.

Ключевые слова: нормативный правовой акт, проект, криминологическая экспертиза.

Gevorg Israyelyan

*Head of the Scientific Research Center of Applied problems in criminology of
National Bureau of Expertises of National Academy of Sciences
of the Republic of Armenia,
Lecturer of the Law Department at Eurasia International University,
Ph.D. in Law, Associate Professor
Email: gevorg.israyelyan@eiu.am*

**THE PROBLEM TO IMPROVE THE LEGAL REGULATION OF THE
CRIMINOLOGICAL EXPERTISE OF DRAFT NORMATIVE LEGAL ACTS
IN THE REPUBLIC OF ARMENIA**

Criminological expertise of draft normative legal acts is one of the modern legal means of crime prevention. In the Republic of Armenia, some regulations of subparagraph “e” of paragraph 3 of Government Resolution No. 1127-N, dated 07/22/2004, “On the establishment of the State non-profit organization ‘National Bureau of Expertise’ of the National Academy of Sciences of the Republic of Armenia and approval of its Charter,” are devoted to this expertise. According to these regulations, one of the goals of the Bureau is to organize and conduct criminological expertise of draft legal acts by decision of the bodies possessing law-making powers. To achieve this goal, based on subparagraph 47 of paragraph 10 of Appendix 1 of Government Resolution No. 1039-N, dated 03/27/2008, “On the approval of the State Crime Prevention Program in the Republic of Armenia,” the Scientific Research Center for Applied Problems of Criminology was established in the Bureau in 2009.

The results of the author’s research indicate that the above-mentioned legal foundations of the expertise are insufficient. There are no mechanisms for organizing and conducting the expertise under discussion, and as a result, the specified center has not carried out any such expertise so far. Based on this, the author considers it necessary to provide appropriate regulations, including the adoption of the law “On Criminological Expertise of Draft Normative Legal Acts.” According to the author, this law will define the concept, tasks, principles, objects, and other relations related to the problems of the specified expertise.

Key words: normative legal act, draft, criminological expertise.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2024թ. ապրիլի 2-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2024թ. ապրիլի 10-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2024թ. ապրիլի 19-ին:

Էդգար Ավետիսյան
Իրավաբանական գիտությունների թեկնածու
Էլ. հասցե՝ edgaravetisyan.law@gmail.com

Ռաֆիկ Ավետիսյան
Երևանի պետական համալսարանի Հայագիտական հետազոտությունների
ինստիտուտի գիտաշխատող, քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ
Էլ. հասցե՝ rafik.avetisyan@ysu.am

DOI: 10.53614/18294952-2024.1-33

ՌԱԶՄԱԿԱՆ ԲՆՈՒՅԹ ՈՒՆԵՑՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ

Տեղեկությունների առատության այս դարաշրջանում կարևոր է դրան իրավական համաժամանակյա կարգավորում և գնահատական տալը, որը դրսևորվում է գիտական համապատասխան հետազոտությունների իրականացմամբ: «Առանց հսկողության» մնացած տեղեկությունը կարող է բազմաթիվ խնդիրներ առաջացնել ինչպես մասնավոր, այնպես էլ՝ պետական և միջազգային հարաբերություններում: Ուսումնասիրության անհրաժեշտությունն ավելի է ընդգծվում, հատկապես, երբ խոսքը վերաբերում է պետության ռազմական անվտանգության ու դրա պաշտպանության համար էական նշանակություն ունեցող ռազմական բնույթ կրող տեղեկությունների վերահսկողությանը, դրանց տրամադրման ու շրջանառման իրավական հարցերին:

Սույնով իրականացված ուսումնասիրությանը անդրադարձ է կատարվում ռազմական բնույթ ունեցող տեղեկությունների էությանը, դրանց պաշտպանվածությանը, ինչպես նաև իրավունքի իրավաչափ սահմանափակման ներքո հանդես գալուն: Վերջինս քննարկվում է սահմանադրաիրավական

լույսի ներքո՝ տեղեկատվության ազատության, տեղեկություններ ստանալու հիմնական իրավունքի հետ հարաբերակցությամբ:

Հիմնաբառեր. Ռազմական անվտանգություն, ռազմական բնույթի տեղեկություն, տեղեկատվության ազատություն, Սահմանադրություն, իրավունքի սահմանափակում:

Ներածություն

Տեղեկության արժեքն արտահայտվում է պետության կողմից տեղեկության ու դրա ազատության նկատմամբ ունեցած վերաբերմունքով ու քաղաքականությամբ: Իրազեկ քաղաքացին ժողովրդավար պետության կայացման անհրաժեշտ և կարևոր հիմնասյուներից է, իսկ իրազեկ քաղաքացի ունենալու կարևոր նախապայման է պետական մարմինների գործունեության հրապարակայնության սկզբունքի ապահովումը: Քաղաքակրթության բարձրագույն աստիճանին հասնում է այն հասարակությունը և պետությունը, որը տնօրինում է ամենից որակով տեղեկույթին, մեծ ծավալով և արագ յուրացնում է այն՝ արդյունավետ կերպով օգտագործելով համամարդկային նպատակների իրականացման համար (Հարությունյան, Վաղարշյան, 2010, էջ 307): Եթե տղամարդկանց և կանանց թույլ չտան լսել տեղեկություն, որը վերաբերում է հանրային որևէ խնդրի, ապա ընդհանուր բարօրությանը հասնելու նրանց ջանքերը կլինեն անիմաստ և անհավասարակշիռ: Նման համայնքը կխեղաթուրվի, իսկ կառավարության դեմոկրատական հեղինակությունը կկորչի (Richard, 2000, էջ 14):

Տեղեկությունների նկատմամբ պետության վերաբերմունքն արտահայտվում է, նախևառաջ, դրա ձանաչմամբ ու երաշխավորմամբ: Այսպես, ՀՀ Սահմանադրությունը (այսուհետ նաև՝ Սահմանադրություն) երաշխավորում է տեղեկություններ ստանալու իրավունքը (51-րդ հոդված), ըստ որի՝ *Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք:*

Մյուս կողմից, ինչպես ՀՀ Սահմանադրական դատարանն է արձանագրել՝ տեղեկատվության ազատության նկատմամբ պետական միջամտության բացառման առանձնահատուկ երաշխիքը, սակայն, չի խոչընդոտում այս ոլորտում (...) հասարակության և պետության օրինական շահերից ելնելով՝ օրենքով որոշ սահմանափակումներ նախատեսելը (ՀՀ Սահմանադրական դատարան, 2001, ՄԴՌ-278): Մարդու իրավունքների սահմանափակումը օրինական զսպում է ապօրինի գործողություններից, որով ստեղծվում է բավարար պայմաններ և հնարավորություններ պաշտպանելու հասարակության համընդհանուր շահերն ու հետաքրքրությունները (Малько, 2011, էջ 142): Այսինքն, տեղեկություններ ստանալու իրավունքը, ինչպես մարդու հիմնարար իրավունքների մեծ մասը, չի կարող բացարձակ լինել:

Տեղեկություններ ստանալու իրավունքի սահմանափակումները նախա-

տեսված են հենց Սահմանադրությամբ, որի 51-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ *Տեղեկություններ սպանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով*:

Այս ուսումնասիրությունն ուղղել ենք պետության ռազմական անվտանգության պաշտպանության համար էական նշանակություն ունեցող ռազմական բնույթ կրող տեղեկությունների իրավական կարգավորմանը, դրանց տրամադրման իրավական սահմանափակմանն ու դրա շուրջ առաջացող այլ իրավական հարցերի քննարկմանը:

Ուսումնասիրության մեթոդն ու տեսական հիմքը

Հետազոտությունն իրականացվել է վերլուծության, ձևական իրավաբանական, իրավահամեմատական մեթոդների կիրառմամբ, իսկ որպես հետազոտության տեսական հիմք հանդես են եկել մասնագիտական ոլորտի հայրենական ու արտասահմանյան գիտական արժեքավոր աշխատություններ և հետազոտություններ:

Ռազմական անվտանգության ու ռազմական բնույթի տեղեկություն

Անհրաժեշտ ենք համարում քննարկել ռազմական բնույթ ունեցող տեղեկությունների պաշտպանության և տեղեկություններ ստանալու հիմնական իրավունքի հարաբերակցությունը: Սրա շրջանակում պետք է բացահայտել նախ՝ ռազմական անվտանգության ու ռազմական բնույթի տեղեկության էությունը, ինչպես նաև պարզել՝ արդյոք ռազմական բնույթի տեղեկություններ ստանալու իրավունքը սահմանափակված է, թե՛ ոչ:

Ռազմական անվտանգությունը համարվում է պետության ազգային անվտանգության համակարգի կարևորագույն ենթահամակարգերից: Ռազմական անվտանգությունը պետության անվտանգության ռազմական բաղադրիչն է, որն ապահովվում է գինված ուժերի և հասարակության այն հաստատությունների վիճակով, որոնց շնորհիվ պետության պաշտպանական հզորությունը պահպանվում է այն անհրաժեշտ (բավարար) մակարդակում, որի դեպքում այլ պետությունների հետ հաստատվում են բարենպաստ հարաբերություններ, և բացառվում է առձակատումը ուժի կիրառմամբ: Սահմանվում է նաև որպես ռազմական ուժի կիրառման կամ դրա կիրառման սպառնալիքին առնչվող ներքին և արտաքին ռազմական սպառնալիքներից անձի, հասարակության ու պետության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանման ծրագրի վիճակ, որին բնութագրական է ռազմական վտանգ չլինելը կամ դրան դիմակայելու կարողությունը (Ավետիսյան, 2022, էջ 132):

Ինչ վերաբերում է ռազմական բնույթի տեղեկությանը, ապա դրա բացահայտման համար անհրաժեշտ է ներկայացնել «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի կարգավորումները, որի 8-րդ հոդվածը նվիրված է պետական գաղտնիք համարվող տեղեկությունների դասակարգմանը: Դրանց

թվին առաջինը ներկայացվում է հենց ռազմական բնույթի տեղեկությունները, ըստ որի՝ ռազմական բնագավառում պետական գաղտնիք համարվող տեղեկություններն են *զինված ուժերի և այլ զորքերի ռազմավարական, օպերատիվ և մարտավարական բնույթի պլանների և ծրագրերի, ըստ ռազմական գործողությունների ձևերի զորքերի, ներառյալ աշխարհագրի և փարածքային պաշտպանության, Հայաստանի Հանրապետության փարածքի օպերատիվ սարքավորման (կահավորման), գործողությունների նախապարասրման և վարման, զորքերի ծավալման (այդ թվում՝ զորահավաքային), նրանց մարտունակության, մարտական հերթապահության կրման ձևերի ու եղանակների, ղեկավարման համակարգի փոխդասավորության, գործունեության հաջորդականության, համակարգի հասանելիության, ամբողջականության, համակողմանի ապահովման վերաբերյալ տեղեկությունը և գաղտնիության դեմ ուղղված սպառնալիքները չեզոքացնելու միջոցառումները (...):*

Նույն օրենքի իմաստով ռազմական բնույթ ունեցող վերոգրյալ տեղեկությունները պետական գաղտնիք են և պահպանվում ու պաշտպանվում են պետության կողմից, իսկ տարածումը կարող է վնաս հասցնել ՀՀ ազգային անվտանգությանը կամ շահերին (3-րդ հոդվածի առաջին մաս):

Ռազմական անվտանգության ոլորտում տեղեկությունների պաշտպանվածության կարևորությունն արձանագրվում է նաև ՀՀ ռազմական դոկտրինում, որում ամրագրվում է ռազմական անվտանգության պաշտպանության շրջանակում տեղեկությունների, տեղեկատվական անվտանգության, ապատեղեկատվական քարոզչության չեզոքացման, տեղեկատվական պատերազմների հիմունքները ներառող պաշտոնական հայեցակետերը /դոկտրին/:

Կարող ենք նկատել, որ օրենսդիրը պետական անվտանգության պաշտպանության ներքո առանցքային դեր է տվել պետական գաղտնիք համարվող ռազմական բնույթի տեղեկություններին՝ հաշվի առնելով դրանց կարևորությունը պետական ու ազգային անվտանգության ոլորտում:

Ռազմական բնույթի տեղեկության և տեղեկություններ ստանալու հիմնական իրավունքի հարաբերակցությունը

Ինչպես նշեցինք՝ տեղեկություններ ստանալու հիմնական իրավունքը, որը երաշխավորված է Սահմանադրության 51-րդ հոդվածով, կարող է սահմանափակվել *միայն հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով*: Կարծում ենք, որ խիստ անհրաժեշտություն կա բացահայտել և հասկանալ՝ արդյոք ռազմական բնույթ ունեցող տեղեկությունը տեղավորվում է հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակների ներքո: Այլ խոսքով՝ արդյոք պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանցից ռազմական բնույթ ունեցող տեղեկության ստացումը Սահմանադրությամբ ենթարկվում է իրա-

վաչափ սահմանափակման, թե՛ ոչ:

Այսպես, հանրային շահերի հասկացությունը ներկայացված չէ օրենսդրական կարգավորմամբ: Մինևույն ժամանակ, դրա վերաբերյալ որոշակի մեկնաբանության է հանգել ՀՀ Սահմանադրական դատարանը՝ հանրային շահը ներկայացնելով որպես հասարակության շահ (ՀՀ Սահմանադրական դատարան, 2006, ՍԴՈ-630; ՀՀ Սահմանադրական դատարան, 2009, ՍԴՈ-815; ՀՀ Սահմանադրական դատարան, 2011, ՍԴՈ-997): Ինչ վերաբերում է այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակին, ապա այն կրում է մասնավոր բնույթ, ուստի ուղղված է մասնավոր շահի պաշտպանությանը:

Հիմնական իրավունքների սահմանափակման սահմանադրաիրավական նպատակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ռազմական բնույթ ունեցող տեղեկությունների տրամադրման սահմանափակումը կարող է համապատասխանել պետական անվտանգության պաշտպանության սահմանադրաիրավական նպատակին: Մինչդեռ տեղեկություններ ստանալու իրավունքի համար պետական անվտանգության պաշտպանությունը նախատեսված չէ որպես իրավունքի սահմանափակման նպատակ: Ուստի, առաջնային է դառնում պարզել հանրային շահի և պետական անվտանգության պաշտպանության նպատակների համանմանությունն ու տարբերությունը՝ հասկանալու համար, արդյոք ռազմական բնույթ ունեցող տեղեկության ստացման սահմանափակումը կարող է հետապնդել հանրային շահի պաշտպանության նպատակ:

Հետաքրքիր է, որ օրինակ՝ կարծիքի արտահայտման ազատությունը (Սահմանադրության 42-րդ հոդված) կարող է սահմանափակվել պետական անվտանգության պաշտպանության նպատակով, մինչդեռ տեղեկություններ ստանալու իրավունքի (Սահմանադրության 51-րդ հոդված) համար պետական անվտանգության պաշտպանությունը չի համարվում իրավունքի սահմանափակման նպատակ:

Ալ. Ղևոնդյանը հանրային շահը պետական շահի հետ մեկտեղ դիտարկում է որպես ազգային շահի բաղադրատարրեր և նշում, որ հանրային շահերը ներառում են սոցիալական տարբեր շերտերի, խմբերի, անհատների գործունեության տարաբնույթ ոլորտներին վերաբերող հիմնարար ու փոփոխական շահերի դինամիկ ամբողջությունը (Ղևոնդյան, 2011, էջ 48): Բացի այդ, Սահմանադրությամբ տարբեր իրավունքների սահմանափակումների շարքում հանրային շահի ու պետական անվտանգության պաշտպանության նպատակները ներկայացված են որպես առանձին նպատակները: Ուստի ակնհայտ է դառնում, որ հանրային շահի պաշտպանությունը տարբերվում է պետական անվտանգության պաշտպանությունից:

Վերը նշվածը թույլ է տալիս եզրակացնել, որ, փաստորեն, ռազմական բնույթ ունեցող տեղեկության ստացումը կարող է սահմանափակվել միայն սոցիալական տարբեր շերտերի, խմբերի ու անհատների շահերի պաշտպանությամբ, մինչդեռ այդ տեղեկությունը վերաբերում ու առնչվում է հենց պետական անվտանգությանը և արդարացիորեն պետք է սահմանափակվի

միայն պետական անվտանգության պաշտպանության նպատակով: Վերջինս, զարմանալիորեն, Սահմանադրության 51-րդ հոդվածով նախատեսված չէ որպես տեղեկության ստացման իրավունքի իրավաչափ սահմանափակման նպատակ:

Ռազմական բնույթ կրող տեղեկության ստացման սահմանափակումը կարծիքի արտահայտման ազատության սահմանադրաիրավական նորմի կիրառմամբ

Շատ մարդկանց համար հանրային նշանակության տեղեկությունների արդյունավետ հասանելիությունը կապվում է հանրային մարմինների կողմից այդ տեղեկությունների՝ առանց որոշակի հարցումների ակտիվորեն հրապարակման հետ (Mendel, 2008, էջ 33): Վերջինս արտահայտվում է մայր օրենքով համապատասխան իրավունքների երաշխավորմամբ: ՀՀ Սահմանադրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն տեղեկատվության ազատության վերաբերյալ ունի երկու նորմ՝ վերևում քննարկված 51-րդ հոդվածը և կարծիքի արտահայտման ազատության վերաբերյալ 42-րդ հոդվածը: Տվյալ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *Յուրաքանչյուր ոք ունի (...) առանց պեղական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պեղական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, սրանալու և տարածելու ազատություն*: Նույն հոդվածի երրորդ մասի համաձայն՝ *այն կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պեղական անվտանգության (...) պաշտպանության նպատակով*:

Կարծիքի արտահայտման ազատությունը (42-րդ հոդված) և տեղեկություններ ստանալու իրավունքը (51-րդ հոդված), ըստ էության, տեղեկատվության ազատության բաղադրիչներ են, մինչդեռ, ինչպես տեսանք, սահմանադիրը պետական անվտանգության պաշտպանության նպատակով միայն կարծիքի արտահայտման ազատության սահմանափակումն է նախատեսել:

Հաշվի առնելով արձանագրվածը՝ անհրաժեշտաբար քննարկման առարկա է դառնում ռազմական բնույթ կրող տեղեկության ստացումը Սահմանադրության 42-րդ հոդվածի կիրառմամբ պետական անվտանգության պաշտպանության նպատակով սահմանափակելու հնարավորության հարցը:

Ներկայացնելով տեղեկատվության ազատությանը վերաբերող երկու սահմանադրաիրավական նորմերով (42-րդ և 51-րդ) երաշխավորված իրավունքների հարաբերակցությունը՝ անհրաժեշտ է հստակ տարանջատել դրանք: Այսպես, հանրային մարմիններից տեղեկություն ստանալու իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի են և՛ կարծիքի արտահայտման ազատության, և՛ տեղեկություններ ստանալու իրավունքի նորմերը, ուստի այս դեպքում 42-րդ հոդվածի և 51-րդ հոդվածի միջև առաջացող հարաբերակցությունը կարող ենք դրսևորել որպես ընդհանուր նորմի (lex posterior) և հատուկ նորմի (lex specialist) մրցակցություն: Երկու նորմերի միջև մրցակ-

ցության (կոլիգիայի, հակասության) դեպքում կիրառելի է lex specialist-ը (համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի՝ «(...) ընդհանուր նորմի և հատուկ նորմի միջև կոլիգիաների դեպքում գործում է հատուկ նորմը»), այս դեպքում՝ 51-րդ հոդվածը: Lex specialist նորմը նախապատվություն ունի lex posterior և «մարդու համար բարենպաստ նորմի առաջնության» կանոնների նկատմամբ (Մուրադյան, Ղամբարյան, 2018, էջ 587):

Վերոգրյալից կարող ենք եզրակացնել, որ ռազմական բնույթ կրող պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների ստացման համար կիրառելի է ոչ թե տեղեկատվության ազատության ընդհանուր նորմը՝ 42-րդ հոդվածը, այլ հատուկ նորմը՝ 51-րդ հոդվածը: Զուգահեռ՝ կարևոր ենք համարում նշել նաև ՀՀ-ում գործող իրավակիրառ պրակտիկան (Սահմանադրական դատարան, 2017, ՍԴՈ-1396; Սահմանադրական դատարան, 2016, ՍԴՈ-1256), ըստ որի՝ հանրային մարմիններից տեղեկություններ ստանալու իրավահարաբերությունների իրավական հիմք է ընդունվում ինչպես հատուկ նորմը՝ 51-րդ հոդվածը, այնպես էլ ընդհանուր նորմը՝ 42-րդ հոդվածը: Մինչդեռ նշված հոդվածներով կարգավորվող իրավահարաբերություններն ունեն տարբերություններ՝ ընդհուպ իրավունք սահմանափակման հիմքերը (Ավետիսյան, 2022, էջ 51):

Այնուամենայնիվ, գտնում ենք, որ առկա իրավակարգավորումների լույսի ներքո հանրային մարմիններից տեղեկություններ ստանալու իրավունքի համար կիրառելի է միայն Սահմանադրության 51-րդ հոդվածը, որը պետական անվտանգության պաշտպանությունը՝ որպես իրավունքի սահմանափակման նպատակ, չի նախատեսում:

Թեև պետական անվտանգության պաշտպանությունը 51-րդ հոդվածի իմաստով չի հանդիսանում իրավունքի սահմանափակման նպատակ, սակայն դա չի նշանակում, որ այս իրավունքը պետական անվտանգության նպատակով ընդհանրապես սահմանափակման ենթակա չէ: Սահմանադրության 76-րդ հոդվածի համաձայն՝ *ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ տեղեկատվության ազատության հիմնական իրավունքը (և՛ 42-րդ, և՛ 51-րդ հոդվածը) կարող է օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել:* «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ռազմական դրության իրավական ռեժիմի առաջնային նպատակներից է հենց պետական անվտանգության պաշտպանությունը: Հետևապես կարող ենք եզրակացնել, որ ռազմական բնույթ կրող տեղեկությունների ստացումը 51-րդ հոդվածի իմաստով կարող է սահմանափակվել ժամանակավորապես՝ ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում:

Եզրակացություն

Ընդհանրացնելով ներկայացված հետազոտությունը՝ կարևոր ենք համարում արձանագրել, որ ռազմական բնույթ կրող պետական գաղտնիք

համարվող տեղեկությունները պետք է գտնվեն պետական խիստ վերահսկողության տակ, քանի որ դրանք անմիջականորեն առնչվում են պետական ու ազգային անվտանգությանը: Խնդիրն ավելի է ընդգծվում հատկապես ՀՀ ներկայիս ռազմական ու անվտանգային կարգավիճակում:

Պետական նման վերահսկողությունը պետք է արտահայտվի, առաջին հերթին, իրավական ամուր հենքի առկայությամբ, երբ նման տեղեկությունների ստացումն ու տարածումը չպետք է իրավական բանավեճի կամ տարրնկալումների տեղիք տա: Ռազմական բնույթ կրող պետական գաղտնիք պարունակող տեղեկության ստացման արգելքը պետք է լինի որոշակի և միանշանակ: Մինչդեռ հետազոտությունը ցույց է տալիս, որ սահմանադրաիրավական մակարդակում պետական անվտանգության պաշտպանությունը չի համարվում հանրային մարմիններից տեղեկության ստացման իրավունքի սահմանափակման իրավաչափ նպատակ:

Ուսումնասիրությունը ցույց տվեց նաև, որ մի կողմից՝ տեղեկատվության ազատության բաղադրիչ այլ նորմի (42-րդ հոդվածի) կիրառմամբ հնարավոր է հասնել հանրային մարմիններից տեղեկության ստացման իրավունքի՝ պետական անվտանգության պաշտպանության նպատակով սահմանափակմանը (ինչով իրավակիրառ պրակտիկան է առաջնորդվում), մյուս կողմից՝ օրենսդրական մակարդակում (օրինակ՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով) ապահովվում է ռազմական բնույթ ունեցող պետական գաղտնիք պարունակող տեղեկության տրամադրման սահմանափակումը: Այնուամենայնիվ, վերջիններս պետք է հենված լինեն սահմանադրաիրավական ամուր, որոշակի ու հստակ հիմքերի վրա, որը, ըստ մեզ, որոշ չափով բացակայում է: Ուստի կարծում ենք, որ ՀՀ Սահմանադրության՝ հանրային մարմիններից տեղեկություններ ստանալու իրավունքի համար անհրաժեշտ է նախատեսել պետական անվտանգության պաշտպանության նպատակին ուղղված իրավունքի իրավաչափ սահմանափակում:

Հեղազոտությունն իրականացվել է ՀՀ ԳԱԱ ֆինանսական աջակցությամբ՝ «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» շրջանակներում, ծածկագիր՝ 23-YSSS-0008:

Օգտագործված գրականության ցանկ

Ավետիսյան, Է.Գ. (2022). Ընդհանուր տեղեկատվության ազատություն և հատուկ տեղեկատվության ազատություն (հայեցակետ), *Արդարադատություն գիտական հանդես*, 1/56, Երևան, «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ:

Ավետիսյան, Ռ.Գ. (2022). «Ազգային անվտանգություն. Ուսումնական ձեռնարկ», Երևան, Հայկական բանակ հրատ.:

Հարությունյան, Գ., Վաղարշյան, Ա. Ընդհանուր խմբագրությամբ (2010). ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, Ընդհանուր խմբագրությամբ, Երևան, «Իրավունք»:

ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՄԴՈ-278 որոշում, 11.01.2001թ.:

- ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-630 որոշում, 18.04.2006թ.:
- ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-815 որոշում, 14.07.2009թ.:
- ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-997 որոշում, 15.11.2011թ.:
- ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1396 որոշում, 26.12.2017թ.:
- ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1256 որոշում, 23.02.2016թ.:
- Ղևոնդյան, Ա. (2011). *Ազգային շահերի հիմնահարցը Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման առաջնային միջավայրում*, Երևան, Հեղ. հրատ.:
- Մուրադյան, Մ., Ղամբարյան, Ա. և այլք, (2018). *Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ. 3-րդ լրամշակված հրատ.*, Երևան, «Լուսարաց» հրատ.:
- Малько, А.В. (2011). *Стимулы и ограничения в праве: Теоретико-информационный аспект, 3-е изд.*, перераб. и доп.:
- Mendel, T. (2008). *Freedom of Information: A Comparative Legal Survey*, UNESCO, Paris, France.
- Richard, M. (2000). *The constitutional protection of freedom of expression*, University of Toronto Incorporated, Toronto, Canada.

References

- Avetisyan, E. G. (2022). Y'ndhanowr teghekatvowt'yan azatowt'yown ev hatowk teghekatvowt'yan azatowt'yown (hayecaket) [Freedom of general information and freedom of specific information], *Ardaradatowt'yown gitakan handes*, 1/56, Erevan, «Iravakan krt'owt'yan ev verakangnoghakan c'ragreri irakanacman kentron» POAK (In Arm.)
- Avetisyan. R'. G. (2022). «Azgayin anvtangowt'yown. Owsowmnakan d'er'nark» [National Security. Study manual], Erevan, Haykakan banak hrat.: (In Arm.)
- Harowt'yownyan, G., Vagharshyan, A. y'ndhanowr xmbagrowt'yamb (2010), *HH Sahmanadrowt'yan meknabanowt'yownner* [Commentaries on the RA Constitution], Y'ndhanowr xmbagrowt'yamb, Erevan, «Iravownq»: (In Arm.)
- HH Sahmanadrakan datarani t'iv SDO-278 oroshowm* [Decision of the Constitutional Court], 11.01.2001t' (In Arm.)
- HH Sahmanadrakan datarani t'iv SDO-630 oroshowm* [Decision of the Constitutional Court], 18.04.2006t' (In Arm.)
- HH Sahmanadrakan datarani t'iv SDO-815 oroshowm* [Decision of the Constitutional Court], 14.07.2009t' (In Arm.)
- HH Sahmanadrakan datarani t'iv SDO-997 oroshowm* [Decision of the Constitutional Court], 15.11.2011t' (In Arm.)
- HH Sahmanadrakan datarani t'iv SDO-1396 oroshowm* [Decision of the Constitutional Court], 26.12.2017t' (In Arm.)
- HH Sahmanadrakan datarani t'iv SDO-1256 oroshowm* [Decision of the Constitutional Court], 23.02.2016t' (In Arm.)
- Ghevondyan, Al. (2011). *Azgayin shaheri himnaharcy' Hayastani Hanrapetowt'yan anvtangowt'yan apahovman ar'ajnayin mijavayrowm* [The issue of national interests in the primary security environment of the Republic of Armenia], Erevan, Hegh. hrat.

(In Arm.)

Mowradyan, M., Ghambaryan, A. ev aylq (2018). *Petowt'yan ev iravownqi tesowt'yown*: [Theory of the state and law] Owsowmnakan d'er'nark, 3-rd lramshakvac' hrat., «Low-sabac» hratarakchatown, Erevan, (In Arm.)

Malko, A.V. (2011). *Stimuly i ogranicheniya v prave*: [Incentives and restrictions in law] Teoretiko–informatsionnyy aspekt, 3–e izd., pererab. i dop., (In Rus.)

Mendel, T. (2003). *Freedom of Information: A Comparative Legal Survey*, UNESCO, Regional Bureau for Communication and Information, New Delhi. (In Eng.)

Richard, M. (2000). *The constitutional protection of freedom of expression*, University of Toronto Incorporated, Toronto, Canada. (In Eng.)

Эдгар Аветисян

Кандидат юридических наук

Рафик Аветисян

Научный сотрудник Института арменоведения Ереванского государственного университета, кандидат политических наук, доцент

ЗАЩИТА ВОЕННОЙ ИНФОРМАЦИИ КАК ГАРАНТИЯ ВОЕННОЙ БЕЗОПАСНОСТИ

В эпоху изобилия информации важно дать ей одновременное правовое регулирование и оценку, что демонстрируется выполнением соответствующих научных исследований. «Неконтролируемая» информация может вызвать множество проблем как в частных отношениях, так и в государственных и международных отношениях. Необходимость исследования подчеркивается еще больше, особенно когда речь идет о контроле военной информации, необходимой для военной безопасности и обороны государства, а также правовых вопросах ее предоставления и оборота.

Проведенное здесь исследование касается характера информации военного характера, ее защиты, а также действия в условиях правовых ограничений. Последнее обсуждается в связи со свободой информации, особенно с основным правом на получение информации.

Ключевые слова: военная безопасность, информация военного характера, свобода информации, конституция, ограничение прав.

Edgar Avetisyan*Ph.D. in Law**Email: edgaravetisyan96@gmail.com***Rafik Avetisyan***Researcher at the Institute for Armenian Studies at Yerevan State University,**Ph.D. in Political Sciences, Associate professor**Email: rafik.avetisyan@ysu.am*

PROTECTION OF MILITARY INFORMATION AS A GUARANTEE OF MILITARY SECURITY

In this era of abundance of information, it is important to give it legal simultaneous regulation and assessment, which is demonstrated by the implementation of relevant scientific research. “Uncontrolled” information can cause many problems both in private relations, as well as in state and international relations. The necessity of the study is emphasized even more, especially when it comes to the control of military information essential for the state’s military security and defense, as well as the legal issues of their provision and circulation.

The study carried out here refers to the nature of information of a military nature, their protection, as well as acting under legal restrictions. The latter is discussed in relation to the freedom of information, particularly the basic right to receive information.

Key words: military security, information of military nature, freedom of information, Constitution, limitation of right.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2024թ. հունիսի 11-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2024թ. հունիսի 13-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2024թ. հունիսի 19-ին:

Աննա Հովհաննիսյան

*ՀՀ Սահմանադրական դատարանի Իրավախորհրդարկական վարչության
Անհատական դիմումների վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ,
Եվրոպական համալսարանի Իրավագիտության ամբիոնի հայցորդ
Էլ.հասցե՝ anna.hovhannisyan2210@gmail.com*

DOI: 10.53614/18294952-2024.1-44

ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

Սույն հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և քրեական դատավարության օրենսգրքով սահմանված անմեղության կանխավարկածի՝ միջազգային և եվրոպական ստանդարտներին համապատասխանության գնահատմանը: Փորձ է արվել վեր հանել անմեղության կանխավարկածի բովանդակությունը և խնդրահարույց ասպեկտները եվրոպական իրավունքի համակարգում: Սույն հոդվածի շրջանակներում փորձել ենք նաև համապարփակ ձևով ուսումնասիրել անմեղության կանխավարկածի, դրա բովանդակության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորած դիրքորոշումները (պրակտիկան)՝ հաշվի առնելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի դրույթների և դրա հիման վրա՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումների կարևորությունը և տեղը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում:

Հիմնաբառեր: Անմեղության կանխավարկած, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, անմեղության կանխավարկածի բովանդակություն, եվրոպական իրավունք, ՄԻԵԴ պրակտիկա, եվրոպական ստանդարտ:

Ներածություն

Ինչպես բազմիցս նշվել է, անմեղության կանխավարկածի սկզբունքը միջազգայնորեն ճանաչված սկզբունք է՝ ամրագրված միջազգային կարևորագույն իրավական ակտերում: Այդպիսի միջազգային փաստաթղթեր վավերացրած պետությունները ստանձնում են իրենց ներպետական օրենսդրությունը այդ փաստաթղթերին համապատասխանեցնելու պարտականություն: Սույն ենթավերնագրի շրջանակներում անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ անմեղության կանխավարկածի բովանդակությանը և խնդրահարույց ասպեկտներին եվրոպական իրավունքի համակարգում՝ հաշվի առնելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի դրույթների և դրա հիման վրա՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումների կարևորությունը և տեղը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում: Այս համատեքստում կարևոր է ընդգծել, որ անմեղության կանխավարկածի բովանդակության հետ կապված հարցերի շուրջ տարածայնությունները ՀՀ և արտասահմանյան այլ երկրների ներպետական օրենսդրություններում, մի շարք միջազգային փաստաթղթերում, այդ թվում՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում, պայմանավորում են այդ սկզբունքի իրավական բովանդակության և խնդրահարույց ասպեկտների բացահայտման և ուսումնասիրման անհրաժեշտությունը: Ընդ որում՝ Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրության տեսանկյունից կարևոր ենք համարում անդրադառնալ անմեղության կանխավարկածի ամրագրմանը հենց եվրոպական իրավունքում՝ հաշվի առնելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի դրույթների և դրա հիման վրա՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումների կարևորությունը և տեղը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում: Սույն ուսումնասիրության արդյունքում մեր առջև բարձրացված խնդիրները հանգում են հետևյալին. Ուսումնասիրել անմեղության կանխավարկածի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված պրակտիկան, վեր հանել անմեղության կանխավարկածի վերաբերյալ տվյալ դատարանի հիմնական դիրքորոշումները, այդ դիրքորոշումների հիման վրա առանձնացնել անմեղության կանխավարկածի իրավական բովանդակությունը և խնդրահարույց ասպեկտները եվրոպական իրավունքի համակարգում:

Մեթոդ

Ուսումնասիրությունն իրականացվել է վերլուծական, իրավահամեմատական, համադրման մեթոդների հիման վրա:

Արդյունքներ և քննարկում

2002 թվականի ապրիլի 26-ին Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի վավերացմամբ Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է ներպետական օրենսդրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու պարտավորություն: Այսինքն՝ Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է իր ներպետական օրենսդրությամբ սահմանված դրույթները, այդ թվում՝ անմեղության կանխավարկածի վերաբերյալ դրույթները, միջազգային, սույն դեպքում՝ եվրոպական իրավունքին համապատասխանեցնելու պարտականություն:

Անմեղության կանխավարկածի բովանդակության հետ կապված հարցերի շուրջ տարաձայնությունները, մասնավորապես, հանգում են հետևյալին. որոշ դեպքերում անմեղության կանխավարկածը տարածվում է միայն մեղադրյալի նկատմամբ, իսկ մյուս դեպքերում՝ ինչպես մեղադրյալի, այնպես էլ կասկածյալի, իսկ որոշ դեպքերում էլ՝ ցանկացած անձի, որոշ դեպքերում անձը «համարվում է» անմեղ, իսկ մյուս դեպքերում՝ «չի համարվում» մեղավոր, որոշ դեպքերում մեղադրյալը համարվում է անմեղ, քանի դեռ հակառակն ապացուցված չէ, իսկ մյուս դեպքերում՝ մեղադրյալը համարվում է անմեղ մինչև դատարանի կողմից մեղադրական դատավճիռ կայացնելը, մինչև դատավճիռ օրինական ուժի մեջ մտնելը և այլն:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի հիմնական դերը կայանում է նրանում, որ այն մեծացրել է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտը և նման պարտականություն դրել նաև անդամ պետությունների վրա: Հենց այս կոնվենցիայի վավերացմամբ Հայաստանի Հանրապետությունում անմեղության կանխավարկածի սկզբունքը սկսեց երաշխավորվել ոչ միայն Սահմանադրությամբ և ներպետական օրենսդրությամբ, այլև իր վրա դրված միջազգային պարտավորություններով: Ընդ որում՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով ամրագրված՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտումներից արդյունավետ պաշտպանության նպատակով, ինչպես նաև այն դեպքերում, երբ ներպետական՝ ազգային դատարանների մակարդակում դատական պաշտպանության միջոցները սպառվել են և իրավունքի համապատասխան խախտումը չի վերացվել, ստեղծվել է վերոգրյալ կոնվենցիային կից մարմին, այն է՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը նվիրված է արդար դատաքննության իրավունքին, իսկ դրա 2-րդ մասը՝ արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր հանդիսացող անմեղության կանխավարկածի սկզբունքին: Մասնավորապես՝ 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «2. Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան»: Վերոգրյալ դրույթի հիման վրա էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշում-

ներով ձևավորել է կայուն դատական պրակտիկա «նախադեպեր» անմեղության կանխավարկածի վերաբերյալ:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում վեր հանել այդ իրավունքի իրացման երաշխիքները, որոնք, մասնավորապես, հանգում են հետևյալին.

– քրեական գործերով ապացուցման բեռը դրված է մեղադրանքի կողմի վրա;

- «in dubio pro reo» սկզբունքի կիրառում;
- դատավորների կողմից կանխակալ կարծիքներ չունենալու պահանջ;
- մեղադրողը պարտավոր է շարադրել այն փաստերը, որոնց հիման վրա մեղադրյալը մեղադրվում է և ներկայացնել նրա մեղքը հաստատող բավարար ապացույցներ:

Վերոգրյալ երաշխիքներից բացի՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետը նախատեսում է նաև իր սեփական երաշխիքները, ինչպիսիք են՝

– պետությունների պարտավորությունը՝ զերծ մնալ պատժամիջոցներ կիրառելուց՝ առանց մեղադրական դատավճիռ կայացնելու;

– լռության իրավունքի երաշխավորումը;

– նույն հանցագործության և նույն հանցագործի նկատմամբ կրկնակի դատաքննության արգելքը՝ հաշվի առնելով, որ այդ արգելքը ազդում է նաև նրա հետապնդման վրա:

Կասկածյալի կամ մեղադրյալի լռելու իրավունքի սկզբունքի հետ համատեղ, անմեղության կանխավարկածի եվրոպական սկզբունքը սահմանում է հետևյալ կանոնները.

– ապացուցման բեռը դրված է մեղադրողի վրա;

– մեղադրյալը վայելում է կասկածի առավելությունը, այսինքն՝ չփարատված կասկածները լուծվում են հոգուտ մեղադրյալի;

– մեղադրյալի պասիվ դիրք գրավելու իրավունքը;

– անմեղության կանխավարկածի պահպանումը զանգվածային լրատվության միջոցների հետ շփվելիս;

– արգելել դատարանին դատաքննության ընթացքում բացահայտել իր կարծիքը կամ համոզմունքները մեղադրյալի դեմ առաջադրված փաստերի վերաբերյալ;

– քաղաքացիական իրավունքում բարեխղճության սկզբունքը դրսևորվում է քրեական դատավարությունում անմեղության կանխավարկածով՝ անքակտելի կապ ստեղծելով իրավունքի երկու ձյուղերի (քաղաքացիական իրավունք և քրեական դատավարության իրավունք) միջև (Gh. MateuՆ, 2007):

Վերոգրյալ երաշխիքներն իրենց արտացոլումն են ստացել և առավել մանրամասն կարգավորվել են հենց Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռների շրջանակներում արտահայտած իրավական դիրքորոշումներով:

Առաջին հերթին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդ-

րադառնալով անմեղության կանխավարկածի սկզբունքի կիրառման ժամանակահատվածին, ձևավորել է կայուն դատական պրակտիկա առ այն, որ անմեղության կանխավարկածը լայն է մեկնաբանվում և իր մեջ ներառում է քրեական դատավարության բոլոր փուլերը՝ քրեական գործի նյութերի նախապատրաստումից մինչև համապատասխան դատական ակտի՝ դատավճռի կայացումը: Այսինքն՝ անմեղության կանխավարկածի սկզբունքը կիրառվում է թե՛ նախաքննության փուլում և թե՛ դատաքննության: Ընդ որում՝ դատաքննության փուլում անմեղության կանխավարկածը գործում է սկսած գործը հանձնելու պահից մինչև վերջնական որոշման կայացումը, անկախ նրանից, թե քանի ատյան է այն անցնելու: Հետևաբար՝ անմեղության կանխավարկածի սկզբունքը հերքվում է բացառապես անձի մեղավորությունը հաստատող օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության պարագայում: Հետևաբար՝ միջազգային իրավական փաստաթղթերում առկա այն տարաձայնությունը, համաձայն որի՝ որոշ դեպքերում մեղադրյալը համարվում է անմեղ, քանի դեռ հակառակն ապացուցված չէ, իսկ մյուս դեպքերում՝ մեղադրյալը համարվում է անմեղ մինչև դատարանի կողմից մեղադրական դատավճիռ կայացնելը, մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը և այլն, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներով լուծել է՝ սահմանելով անմեղության կանխավարկածի սկզբունքը հերքման պահը, այն է՝ անմեղության կանխավարկածի սկզբունքը հերքվում է բացառապես անձի մեղավորությունը հաստատող օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության պարագայում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներով կարևորել է քրեական գործի արդարացի քննությանը հասցված վնասի կանխարգելումը, որոնք առաջացել են այդ քննության կապակցությամբ արված մեղավորության մասին վաղաժամ հայտարարություններից: Մասնավորապես՝ եվրոպական դատարանն իր որոշումներում նշել է, որ անմեղության կանխավարկածի սկզբունքի ուղղակի խախտում են հանդիսանում այն դեպքերը, երբ մեղադրող կողմը, քրեական գործի սկզբնական փուլում արված իր պաշտոնական հայտարարություններում, կասկածյալի մեղավորության մասին կարծիք է հայտնում՝ արդեն իսկ որպես հաստատված փաստ: Ընդ որում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիրքորոշում է արտահայտել առ այն, որ իշխանությունները պետք է տարբերեն հանցագործություն կատարելու մեջ անձի կասկածվելու վերաբերյալ կատարված հայտարարությունն այն ուղղակի պնդումից, որ անձը կատարել է տվյալ հանցագործությունը՝ մինչև դատարանի կողմից տվյալ անձի մեղավորությունը հաստատելը (Туманов, 2001թ. էջ 345):

Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք գործերով կայացված վճիռներով, որոնցից են օրինակ՝ «Մինելլին ընդդեմ Շվեյցարիայի» գործով 1983 թվականի մարտի 25-ի վճիռը (Case of Minelli v. Switzerland), «Ալլենետ դե Ռիբեմոնտն ընդդեմ Ֆրանսիայի» գործով 1995 թվականի փետրվարի 10-ի վճիռը (Case of Allenet de Ribemont v. France), նշել է, որ անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտում են հանդիսանում

և անմեղության կանխավարկածն արգելում է դատարանի կողմից վաղաժամ արտահայտել այն կարծիքը, որ հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձը մեղավոր է, նախքան դրա՝ օրենքով սահմանված կարգով հաստատումը: Ընդ որում, անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտման դեպքերն ընդգրկում են նաև այլ պաշտոնատար անձանց կողմից քննվող քրեական գործի վերաբերյալ արված հայտարարությունները, որոնք հասարակությանը ներշնչում են այն գաղափարը, որ կասկածյալը (մեղադրյալը) մեղավոր է և առաջ են անցնում իրավասու դատական մարմինների կողմից փաստերի գնահատումից:

Վերոգրյալի համատեքստում հարկ է արձանագրել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորված՝ անմեղության կանխավարկածի սկզբունքին առաջին անգամ անդրադարձ է կատարվել հենց վերոգրյալ՝ «Մինելլին ընդդեմ Շվեյցարիայի» գործի շրջանակներում: Այսինքն՝ տվյալ գործն այն գործն էր, որի շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն առաջին անգամ անդրադարձել է անմեղության կանխավարկածի սկզբունքին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր մեկ այլ՝ «Տուրյեվն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» գործով 2016 թվականի հոկտեմբերի 11-ի վճռով (Case of Turyev v. Russia) արձանագրել է, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորված՝ անմեղության կանխավարկածի սկզբունքի շրջանակներում պաշտոնատար անձանց թույլ չի տրվում մարդուն մեղավոր ճանաչել մինչև դատարանի կողմից մեղադրական դատավճիռ կայացնելը, քանի որ պաշտոնական կարգավիճակ ունեցող անձանց խոսքերը (օրինակ՝ դատախազի խոսքերը) առավել համոզիչ են հասարակության աչքում: Միևնույն ժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նույն գործի շրջանակներում նաև դիրքորոշում է արտահայտել առ այն, որ անմեղության կանխավարկածի սկզբունքը չի նվազեցնում յուրաքանչյուր պետության՝ քրեական հետաքննության մասին հանրությանը տեղեկացնելու իրավունքը: Այնուամենայնիվ, պետությունը պետք է իրականացնի այդ իրավունքը զուսպ և շրջահայաց: Ընդ որում, Եվրոպական դատարանի գնահատմամբ՝ քրեական հետաքննության մասին հանրությանը տեղեկացնելու իրավունքի իրացման ժամանակ բառերի ընտրությունը կարևոր է: Եվրոպական դատարանը նույն գործի շրջանակներում նաև ընդգծել է, որ անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտում չեն համարվում այն դեպքերը, երբ իշխանությունները կամ պետական մարմինները խոսում են քրեական հետաքննության ընթացքի մասին, օրինակ՝ կասկածների, ձերբակալությունների և խոստովանությունների մասին հաղորդելիս՝ առանց որևէ մեկին մեղավոր ճանաչելու:

Եվրոպական դատարանն իր «Ֆեդորենկոն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» գործով 2011 թվականի սեպտեմբերի 20-ի վճռում (Case of Fedorenko v. Russia) արձանագրել է, որ համապատասխան շրջանային դատարանը նշել է, որ դիմումատուի նկատմամբ պետք է կիրառվի խափանման միջոց կա-

լանավորումը, քանի որ նա «կատարել է ծանր հանցագործություն, որի համար քրեական օրենքով նախատեսված է ազատազրկման ձևով պատիժ երկու տարուց ավելի ժամկետով»: Դատարանի գնահատմամբ համապատասխան շրջանային դատարանի հայտարարությունը չի սահմանափակվել դիմումատուի նկատմամբ «կասկածի առկայության» նկարագրությամբ, այլ դատարանը, ըստ էության, որպես հաստատված փաստ է ներկայացրել դիմումատուի մասնակցությունը ծանր հանցագործության կատարմանը: Վերոգրյալի համատեքստում Եվրոպական դատարանն արձանագրել է, որ դատարաններին արգելվում է, իսկ անմեղության կանխավարկածի սկզբունքը խախտվում է նաև այն դեպքերում, երբ վերջիններս միջանկյալ դատական ակտեր կայացնելիս օգտագործում են անձի կատարած հանցագործության փաստը հավաստող ձևակերպումներ: Ողջ վերոշարադրյալի հաշվառմամբ՝ Եվրոպական դատարանը գտել է, որ շրջանային դատարանի կողմից կայացված որոշման մեջ արված ձևակերպումը, այն է՝ դիմումատուն «կատարել է ծանր հանցագործություն», դիմումատուին մեղավոր է ճանաչել ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի բացակայության պայմաններում և խախտել է նրա անմեղության կանխավարկածը: Համապատասխանաբար, Եվրոպական դատարանի գնահատմամբ, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում (որոշման 92-93-րդ կետեր):

Նույն գործի շրջանակներում Եվրոպական դատարանը, անդրադառնալով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորված անմեղության կանխավարկածի սկզբունքին, նշել է, որ անմեղության կանխավարկածը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով պահանջվող քրեական գործի արդարացի քննության տարրերից մեկն է: Անձի անմեղության կանխավարկածը խախտվում է, եթե պաշտոնատար անձի հայտարարությունը, որը վերաբերում է հանցագործության մեջ մեղադրվողին, արտահայտում է վերջինիս մեղավորության վերաբերյալ կարծիք ավելի վաղ, քան դա ապացուցվելու է օրենքով սահմանված կարգով՝ դատարանի մեղադրական դատավճռով: Նույնիսկ պաշտոնական եզրակացության բացակայության դեպքում պատճառաբանական մասում նշումը ևս կարող է բավարար լինել, քանի որ այն ենթադրում է, որ դատարանը կամ համապատասխան պաշտոնատար անձը մեղադրյալին մեղավոր է համարում: Եվրոպական դատարանի գնահատմամբ անհրաժեշտ է արմատապես իրարից տարբերել հանցագործություն կատարելու մեջ անձի կասկածվելու վերաբերյալ կատարված հայտարարությունն այն ուղղակի պնդումից, որ անձը կատարել է տվյալ հանցագործությունը՝ մինչև դատարանի կողմից տվյալ անձի մեղավորությունը հաստատելը: Տվյալ համատեքստում Եվրոպական դատարանը կարևորում է հանրային պաշտոնատար անձանց կողմից իրենց հայտարարություններում արտահայտությունների ընտրության կարևորությունը, որոնք արվել են «արվում են» նախքան դատարանի կողմից գործի քննությունը և անձին մեղավոր ճանաչելը կոնկրետ հանցագործության կատարման մեջ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, վերահաստատելով իր նախկինում արտահայտած դիրքորոշումները, իր «Ստիրմանովն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» գործով 2019 թվականի հունվարի 29-ի վճռով (Case of Stirmanov v. Russia) արտահայտել է դիրքորոշում առ այն, որ անկախ նրանից, թե քրեական վարույթի, որ փուլում է գործի վարույթը կարճվել, կարևոր նշանակություն ունեն իրավասու պետական մարմինների, պաշտոնատար անձանց կողմից կայացվող որոշումներում տեղ գտած ձևակերպումները, քանի որ քրեական հետապնդումը դադարեցնելու կապակցությամբ կարող է հարց առաջանալ այն անձի հեղինակության վերաբերյալ, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է «վճռի 48-րդ կետ»: Հավելելով՝ նույն վճռով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նաև նշել է, որ կա հիմնարար տարբերություն այն պնդման միջև, որ ինչ-որ մեկը պարզապես կասկածվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, և ոչ միանշանակ պնդման՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի բացակայության դեպքում, որով հաստատվում է, որ համապատասխան անձը կատարել է նկարագրված հանցագործությունը «վճռի 43-րդ կետ»: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նաև արձանագրել է, որ դատախազն օգտագործել է արտահայտություններ, որոնք դուրս են եկել Դիմումատուի մեղավորության նկատմամբ կիրառված «կասկածանքի» սահմաններից, քանի որ այն պնդումից հետո, որ Դիմումատուն չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել՝ կապված պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի ավարտի հետ, դատախազը մի քանի անգամ միանշանակ ընդգծել է, որ, այնուամենայնիվ, Դիմումատուն «կատարել է հանցագործություն, որը պատժվում է ՌԴ քրեական օրենսգրքի 330-րդ հոդվածի առաջին մասով» (նույն վճռի 45-րդ կետ):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Բարբերան, Մեսսեգեն և Խաբարդոն ընդդեմ Իսպանիայի» գործով 1988 թվականի դեկտեմբերի 6-ի վճռով (Case of Barbera, Messegue and Jabardo v. Spain) արտահայտել է դիրքորոշում առ այն, որ անմեղության կանխավարկածը, *inter alia* պահանջում է, որ իրենց պարտականությունները կատարելիս դատարանի անդամները չունենան կանխակալ կարծիք առ այն, որ մեղադրյալը կատարել է մեղսագրվող արարքը, իսկ ապացուցման պարտականությունը պետք է կրի մեղադրանքի կողմը, և ցանկացած կասկած պետք է մեկնաբանվի հօգուտ մեղադրյալի: Հավելելով՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտում է համարել այն իրավիճակը, երբ մեղադրյալը դեռևս օրենքին համապատասխան մեղավոր չի ճանաչվել, սակայն նրա վերաբերյալ ընդունված դատական որոշումից կարելի է կարծիք կազմել, որ նա մեղավոր է:

Այսպիսով, Եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներով արտահայտած դիրքորոշումներով գտել է, որ անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտում են համարվում այն դեպքերը, երբ

- վարույթն իրականացնող մարմինը, դատարանը կամ այլ պաշտոնատար անձինք իրենց կողմից արված հայտարարություններում կա-

տարել են այնպիսի արտահայտություններ, որով կոնկրետ անձին մեղավոր են ճանաչել կոնկրետ հանցագործության կատարման մեջ՝ նախքան անձի մեղավորությունը հաստատող օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայությունը;

- տվյալ գործը քննող դատարանը գործի քննության ընթացքում ցուցաբերում է կանխակալ վերաբերմունք, մասնավորապես, գտնում է, որ տվյալ անձը կատարել է այն հանցագործությունը, որի կատարման մեջ մեղադրվում է;
- դատարանների կողմից կայացված միջանկյալ դատական ակտերում կամ գործն ըստ էության չլուծող ցանկացած դատական ակտում (օրինակ՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշում) պարունակվում են անձի կատարած հանցագործության փաստը հավաստող ձևակերպումներ կամ արտահայտություններ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Սամոյլան և Չոնկան ընդդեմ Ռումինիայի» գործով կայացված 2008 թվականի մարտի 4-ի վճռով (Case of Samoila and Cionca v. Romania) նշել է, որ տպագիր մամուլի միջոցով արված հրապարակային հայտարարությունները, որոնք արվել են քրեական հետաքննությունը սկսվելուց հետո, սակայն մինչ դրա ավարտը, և որոնք թողնում են մեղքի հստակ տպավորություն, խախտում են անձի անմեղության կանխավարկածը: Մասնավորապես՝ տվյալ գործի շրջանակներում ոստիկանության ծառայողներ Սամոյլան և Չոնկան մեղադրվում էին պաշտոնական լիազորություններն անցնելու մեջ: Տվյալ առիթով ոստիկանությունը հրահանգել էր հետաքննություն անցկացնել, ինչի կապակցությամբ մամուլին հայտնվել էր, որ երկու ծառայողներն էլ վստահաբար կատարել են այն արարքները, որոնց համար մեղադրվում են: Դատարանը, հաշվի առնելով, որ պետական պաշտոնյաները ռումինական հանրության մոտ հստակ տպավորություն են ստեղծել հայցվորների մեղավորության մասին, ինչը խախտել է նրանց անմեղության կանխավարկածը, արձանագրել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի որոշակի դրույթների, այդ թվում՝ 6-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով՝ պաշտպանությունը, որը տրամադրվում է անմեղության կանխավարկածի միջոցով, ունի երկու ասպեկտ: Առաջինը դատավարական ասպեկտն է, որը կապված է քրեական գործով վարույթի ընթացքում իրականացվելիք գործողությունների հետ, և երկրորդը, որի նպատակն է ապահովել անձի անմեղության վերաբերյալ հետևությունը հետագա գործընթացներում (Case of Urat v. Turkey): Վերջինս, եվրոպական դատարանի դիրքորոշումների իմաստով, վերաբերում է առավելապես այն դեպքերին, երբ մեղադրյալը արդարացվել է կամ քրեական գործի վարույթը կարճվել է և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացնող կամ ոչ արդարացնող

որևէ հիմքով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումների համատեքստում՝ անմեղության կանխավարկածի վերոգրյալ՝ անձի անմեղության վերաբերյալ հետևությունը հետագա գործընթացներում ապահովելու ասպեկտն իրենից ենթադրում է այն անձանց պաշտպանությունը, ովքեր իրենց նկատմամբ հարուցված քրեական գործով արդարացվել են կամ ում հանդեպ քրեական գործով վարույթը կարճվել է, հանրային պաշտոնյաների կամ մարմինների կողմից այնպիսի վերաբերմունքից, կարծես նրանք փաստացի մեղավոր են իրենց նկատմամբ առաջադրված մեղադրանքներով: Առանց արդարացման կամ կարճման որոշումների նկատմամբ հարգանքի պաշտպանության ապահովման՝ ցանկացած դատավարության շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ արդար դատաքնության իրավունքից բխող երաշխիքները կարող են դառնալ տեսական և պատրանքային: Քրեական դատավարությունների ավարտին վտանգվում է նաև անձի հեղինակությունը և փոխվում է հասարակության կողմից տվյալ անձին ընկալելու եղանակը, ձևը: Որոշակի սահմաններում, 6-րդ հոդվածի 2-րդ մասով տրամադրված պաշտպանությունը այս կապակցությամբ կարող է որոշակիորեն համընկնել Կոնվենցիայի 8-րդ հոդվածով տրամադրված պաշտպանությանը (օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Զոլլմանն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Zollman v. The United Kingdom):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր՝ «Վանջակն ընդդեմ Խորվաթիայի» գործով 2010 թվականի ապրիլի 14-ին կայացված վճռով (Case of Vanjak v. Croatia) արձանագրել է, որ քրեական դատավարության կարճումից հետո անմեղության կանխավարկածը պահանջում է, որպեսզի անձի քրեական դատապարտման բացակայությունը պահպանվի ցանկացած այլ բնույթի դատավարություններում:

Հետևաբար՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումների լույսի ներքո հարկ է արձանագրել, որ քրեական գործով վարույթը կարճվելու, քրեական հետապնդումը դադարեցվելու կամ քրեական գործով արդարացվելու դեպքում այն անձը և/կամ անձինք, որոնց նկատմամբ հարուցված էր համապատասխան գործը, օրենքի տեսանկյունից համարվում է/են անմեղ և պետք է արժանանա անմեղ անձին համապատասխան վերաբերմունքի: Հենց վերոգրյալի համատեքստում էլ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորված՝ անմեղության կանխավարկածի սկզբունքը շարունակում է գործել և պահպանվել քրեական դատավարության ավարտից հետո, որպեսզի ապահովվի հարգանքը տվյալ անձի անմեղության նկատմամբ՝ ցանկացած մեղադրանքով, որը չի հաստատվել օրենքով սահմանված կարգով: Այս մասով հարկ ենք համարում արձանագրել, որ միջազգային իրավական փաստաթղթերում առկա այն տարածայնությունը, համաձայն որի՝ որոշ դեպքերում անմեղության կանխավարկածը տարածվում է միայն մեղադրյալի նկատմամբ, իսկ մյուս դեպքերում՝ ինչպես մեղադրյալի, այնպես էլ կասկածյալի, իսկ որոշ

դեպքերում էլ ցանկացած անձի նկատմամբ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներով կարգավորել է՝ անմեղության կանխավարկածի սկզբունքի լայն մեկնաբանմամբ, որի հիման վրա անմեղության կանխավարկածի սկզբունքը տարածվում է բոլոր այն անձանց վրա, ում նկատմամբ իրականացվում է գործի դատաքննություն կամ հարուցված է քրեական հետապնդում (թե՛ կասկածյալի և թե՛ մեղադրյալի վրա), ինչպես նաև արդարացված անձանց և այն անձանց վրա, ում նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է և (կամ) ում նկատմամբ հարուցված քրեական գործի վարույթը կարճվել է արդարացնող կամ ոչ արդարացնող ցանկացած հիմքով:

Անմեղության կանխավարկածի ապահովման երաշխիքներից մեկը՝ ապացուցման բեռը մեղադրող կողմի վրա դնելն է: Այսինքն՝ անձի մեղավորությունը ապացուցելու պարտականություն կրում է բացառապես մեղադրող կողմը, իսկ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Անմեղության կանխավարկածի ապահովման վերոգրյալ երաշխիքը ՀՀ ներպետական համակարգում տեղ է գտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում: Մասնավորապես՝ տվյալ օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «3. **Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը կամ քրեական վարույթն իրականացնող մարմնին ցույց տալ որևէ աջակցություն: Մեղադրյալի անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել նաև նրա պաշտպանի, օրինական ներկայացուցչի, գույքային պարասխանողի և նրա ներկայացուցչի վրա: Մեղադրանքի ապացուցման և ի պաշտպանություն մեղադրյալի բերված փաստարկների հերքման պարտականությունը հանրային քրեական հեղապնդման դեպքում կրում է դատախազը, իսկ մինչդատական վարույթում՝ նաև քննիչը: Մասնավոր քրեական հեղապնդման դեպքում այդ պարտականությունը կրում են րուժողը և նրա ներկայացուցիչը»:**

Չնայած այն հանգամանքին, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով որևէ կարգավորում սահմանված չէ կապված քրեական դատավարությունում ապացուցման բեռի հետ, այնուամենայնիվ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն այս մասով ևս ձևավորել է կայուն դատական պրակտիկա՝ կապված ապացուցման բեռը մեղադրող կողմի վրա դնելու հետ: Մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Կուստովան և Բիբանինը ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» գործով 2020 թվականի հունվարի 28-ին կայացված վճռով (Case of Kustova and Bibanin v. Russia) արձանագրել է, որ մեղադրանքի կողմի կողմից ապացուցման բեռը հանցանք կատարելու մեջ մեղադրվող անձի վրա բարդելն անհամատեղելի է անմեղության կանխավարկածի հետ: Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Բարբերան, Մեսսեգեն և Խաբարդոն ընդդեմ Իսպանիայի Թագավորության» գործով 1988 թվականի դեկտեմբերի 6-ին կայացված վճռով (Case of Barberà, Messegué and Jabardo v. Spain) նշել է, որ բոլոր ապացույցները պետք է սկզբունքորեն ներկայացվեն մեղադրյալի ներկայությամբ հանրային լսումներին՝ փաստարկների ներկա-

յացման մրցունակությունն ապահովելու նպատակով: Այս սկզբունքի շրջանակներում ապացույցների վերաբերյալ ցանկացած կասկած պետք է մեկնաբանվի հոգուտ պաշտպանության կողմի (in dubio pro reo սկզբունք) (Гомьен, Харрис, Зваак, 1998, էջ 234):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր մի շարք վճիռներում արձանագրել է նաև իր դեմ ցուցմունք տալու պարտականությունից մեղադրյալի ազատման երաշխիքը՝ որպես անմեղության կանխավարկածի սկզբունքի տարրերից մեկը (օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Սաունդերսն ընդդեմ Միացյալ Թագավորության» գործով 1996 թվականի դեկտեմբերի 17-ի վճիռը; «Բիկովն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» գործով 2009 թվականի մարտի 10-ի վճիռը): Մասնավորապես՝ «Բիկովն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» գործով 2009 թվականի մարտի 10-ի վճռով (Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Բիկովն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» գործով 2009 թվականի մարտի 10-ի վճիռը) Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է դիրքորոշում առ այն, որ իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը, նախևառաջ, ապահովում է մեղադրյալի լռելու մտադրության նկատմամբ հարգանքը և ենթադրում է, որ քրեական գործով մեղադրող կողմը պետք է ապացույցներ ներկայացնի մեղադրյալի դեմ՝ չդիմելով մեղադրյալի կամքին հակառակ հարկադրանքի կամ ճնշման մեթոդներով ապացույցներ ձեռք բերելուն: Միևնույն ժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մեղադրյալի վերոգրյալ իրավունքները, այն է՝ լռելու և (կամ) իր դեմ ցուցմունք չտալու իրավունքները, չի դիտարկել որպես բացարձակ իրավունքներ: Մասնավորապես՝ Եվրոպական դատարանը «Կուստովան և Բիբանինը ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» գործով 2020 թվականի հունվարի 28-ին կայացված վճռով (Case of Kustova and Bibanin v. Russia) նշել է, որ մեղադրյալի լռությունը կամ այլ պատասխանները կարող են հաշվի առնվել մեղադրող կողմի ներկայացրած ապացույցների արժանահավատությունը գնահատելիս՝ ամբաստանյալի մեղքը ապացուցելու կամ անմեղության կանխավարկածը հերքելու համար, այն իրավիճակներում, որոնք պահանջում են մեղադրյալի բացատրությունը:

Ամփոփելով ողջ վերոգրյալը՝ հարկ ենք համարում արձանագրել, որ անմեղության կանխավարկածի սկզբունքն իրենից ենթադրում է ոչ թե դատավարության մասնակցի և (կամ) վարույթն իրականացնող մարմնի սուբյեկտիվ կարծիքը մեղադրյալի մեղավորության մասին, այլ օբյեկտիվ իրականությունը, որն իրենից ենթադրում է մեղադրյալի մեղավորության փաստը հաստատող օրինական ուժի մեջ ստանալու դատական ակտի ամկայություն: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից իր վճիռներով արձանագրված՝ անմեղության կանխավարկածի բոլոր տարրերը պետք է դիտարկվեն միասնության և փոխգործակցության մեջ: Ընդ որում՝ չնայած այն հանգամանքին, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասը տառացի մեկնաբանությամբ վերաբերում է քրեական դատավարութ-

յան ոլորտին, միննույն է անմեղության կանխավարկածի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները կիրառելի են նաև տվյալ սկզբունքը ճանաչող հանրային-իրավական այլ ոլորտներում ևս:

Սույն թեմայի շրջանակներում անհրաժեշտ ենք համարում նաև անդրադառնալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից որոշակի հանգամանքներում կիրառելի համարվող օրենքի կամ փաստի վրա հիմնված կանխավարկածի սկզբունքին: Վերջինս հանդիսանում է անմեղության կանխավարկածի սկզբունքը բացառող, և ի հակադրություն անմեղության կանխավարկածի տվյալ դեպքում գործում է մեղավորության կանխավարկածը: Մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Սալաբյակուն ընդդեմ Ֆրանսիայի» գործով (Case of Salabiaku v. France) դիմողը պահատուփի առաքում էր իրականացրել, որը բեռնավորված էր թմրամիջոցներով: Վերոգրյալ գործով առաջ էր քաշվել անմեղության կանխավարկածի հարց, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հանգել է այն եզրակացության, որ, քանի որ ազգային դատարանն իրավիճակի գնահատման հարցում ազատ է եղել, հաշվի է առել գործի փաստերը և վերացրել է ավելի վաղ ընդունված դատավճիռներից մեկը, ապա Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասը չի խախտվել:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մեկ այլ՝ «Փամ Հոանգն ընդդեմ Ֆրանսիայի» գործով (Case of Pham Hoang v. France) կասկածյալը ձերբակալվել էր Ֆրանսիայի սահմանին՝ թմրամիջոց տեղափոխելիս: Եվրոպական դատարանը քննելով տվյալ գործով արձանագրել է, որ անթույլատրելի ոչինչ չկա այն ենթադրությունում, թե անձը, որը տիրապետում է ընդհանուր առմամբ արգելված որևէ բանի, պարտավոր է բավարար չափով բացատրել այդ փաստը, հակառակ դեպքում նա կձանաչվի մեղավոր:

Այսինքն՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշակի դեպքերում անմեղության կանխավարկածի սկզբունքին հակառակ ճանաչում է օրենքի կամ փաստի վրա հիմնված կանխավարկածը, այն է՝ մեղավորության կանխավարկածը: Վերջինս առավելապես գործում է քաղաքացիաիրավական հարաբերություններում, սակայն որոշակի դեպքերում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դրա գործողությունը տարածում է նաև քրեական դատավարության ոլորտի նկատմամբ:

Եզրակացություն

Այսպիսով՝ ուսումնասիրելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից անմեղության կանխավարկածի սկզբունքի և դրա տարրերի վերաբերյալ ձևավորված կայուն դատական պրակտիկան կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները.

Անմեղության կանխավարկածի սկզբունքը գործում է քրեական դատավարության բոլոր փուլերում: Այսինքն՝ այն կիրառելի է թե՛ նախաքննության փուլում, թե՛ դատաքննության փուլում: Ընդ որում՝ անմեղության կանխավարկածի սկզբունքը գործում է մինչև տվյալ անձի մեղավորությունը հաս-

տատող օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայությունը:

Անմեղության կանխավարկածի բովանդակությունից բխում է, որ վարույթն իրականացնող մարմինը, դատարանը կամ պաշտոնատար այլ անձինք, մինչ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայությունը, իրենց հայտարարություններում պետք է լինեն գուսպ և չպետք է օգտագործեն այնպիսի բառեր կամ արտահայտություններ, որոնք դուրս կգան «կասկածի» սահմաններից և որպես հաստատված փաստ կներկայացնեն անձի մեղավորությունը:

Դատարանների կողմից կայացված միջանկյալ դատական ակտերում կամ գործն ըստ էության չլուծող ցանկացած դատական ակտում չպետք է պարունակվեն անձի կատարած հանցագործության փաստը հավաստող ձևակերպումներ կամ արտահայտություններ: Հակառակ մոտեցումը կխաթարի Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ անմեղության կանխավարկածի սկզբունքը:

Եվրոպական դատարանը կարևորում է նաև մինչև վերջնական դատական ակտի առկայությունը մամուլի միջոցով արված հրապարակային հայտարարությունները, որոնցում ևս հայտարարություն տվող պաշտոնատար անձը պետք է զերծ մնա անձի մեղավորությունը հիմնավորող արտահայտություններից:

Անմեղության կանխավարկածի սկզբունքի բովանդակությունից բխում է և դրա տարրերից մեկն է հանդիսանում ապացուցման բեռը մեղադրող կողմի վրա դնելու պարտականությունը: Մասնավորապես, ըստ Եվրոպական դատարանի նախադեպային դիրքորոշումների, ապացուցման բեռը հանցանք կատարելու մեջ մեղադրվող անձի վրա բարդելը անհամատեղելի է անմեղության կանխավարկածի սկզբունքի հետ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կարևորում է նաև (in dubio pro reo) սկզբունքի կիրառությունը, որն իրենից ենթադրում է, որ չփարատված կամ չապացուցված ցանկացած կասկած պետք է մեկնաբանվի հօգուտ մեղադրյալի:

Եվրոպական դատարանն անմեղության կանխավարկածի տարրերի շարքում առանձնացրել է նաև մեղադրյալի՝ իր դեմ ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու երաշխիքը:

Անմեղության կանխավարկածը կիրառելի է նաև այն անձանց նկատմամբ, ովքեր իրենց նկատմամբ հարուցված քրեական գործով արդարացվել են կամ ում հանդեպ քրեական գործով վարույթը կարճվել և քրեական հետապնդումը դադարեցվել է: Նման պայմաններում տվյալ անձինք համարվում են անմեղ և պետք է արժանանան անմեղ անձին համապատասխան վերաբերմունքի: Այսինքն՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների համատեքստում անմեղության կանխավարկածի սկզբունքը շարունակում է գործել նաև քրեական դատավարության ավարտից հետո՝ տվյալ անձի անմեղության նկատմամբ հարգանքը ապահովելու համար:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշակի դեպքերում անմեղության կանխավարկածի սկզբունքին հակառակ ճանաչում է օրենքի

կամ փաստի վրա հիմնված կանխավարկածը, այն է՝ մեղավորության կանխավարկածը: Վերջինս առավելապես գործում է քաղաքացիաիրավական հարաբերություններում, սակայն որոշակի դեպքերում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դրա գործողությունը տարածում է նաև քրեական դատավարության ոլորտի նկատմամբ:

Օգտագործված գրականության ցանկ

- Гомьен, Д., Харрис, Д., Зваак, Л. (1998). *Европейская конвенция о правах человека и Европейская социальная хартия: право и практика.* – Москва. Изд-во МНИМП:
- Туманов, В.А. (2001). *Европейский Суд по правам человека. Очерк организации и деятельности.* Москва, Издательство НОРМА:
- Case of Zollman v. The United Kingdom*, Application no. 62902/00 (ECHR, 27 november 2003)
- Case of Allenet de Ribemont v. France*, Application no. 15175/89 (ECHR, 10 february 1995)
- Case of Barberà, Messegue and Jabardo v. Spain*, Application nos. 10590/83 (ECHR, 6 december 1988)
- Case of Barbera, Messegue and Jabardov. Spain*, Application no. 10590/83 (ECHR, 6 december 1988)
- Case of Bykov v. Russia*, Application no. 4378/02 (ECHR, 10 march 2009)
- Case of Fedorenko v. Russia*, Application no. 39602/05 (ECHR, 20 september 2011)
- Case of Minelli v. Switzerland*, Application no. 8660/79 (ECHR, 25 march 1983)
- Case of Pham Hoang v. France*, Application no. 13191/87 (ECHR, 25 september 1992)
- Case of Salabiaku v. France*, Application no. 10519/83 (ECHR, 7 october 1988)
- Case of Samoila and Cionca v. Romania*, Application no. 33065/03 (ECHR, 4 march 2008)
- Case of Saunders v. the United Kingdom*, Application no.19187/91 (ECHR, 17 december 1996)
- Case of Stirmanov v. Russia*, Application no. 31816/08 (ECHR, 29 january 2019)
- Case of Turyev v. Russia*, Application no. 20758/04 (ECHR, 11 october 2016)
- Case of Urat v. Turkey*, Application nos. 53561/09 and 13952/11(ECHR, 27 november 2018)
- Case of Vanjak v. Croatia*, Application no. 29889/04 (ECHR, 14 april 2010)
- Case of Kustova and Bibanin v. Russia*, Application nos. 44309/MateuNMateuN06 և MateuNMateuN39973/08 (ECHR, 28 january 2020)MateuNMateuNMateuNMateuNMateuN
- MateuŃ, Gh. (2007). *Tratat de procedură penală. Partea generală* [Treaty of Criminal Procedure. General Part]. Volumul I, Editura C.H. Beck, București.

References

- Gomyen D., Kharris D., Zvaak L. *Evropeyskaya konventsiya o pravakh cheloveka i Evropeyskaya sotsialnaya khartiya: pravo i praktika.* – Moskva. Izd-vo MNIMP, 1998, ej 234 [The European Convention on Human Rights and the European Social Charter: law and practice] (In Rus.)
- Tumanov, V.A. (2001). *Evropeyskiy Sud po pravam cheloveka. Ocherk organizatsii i*

- deyatelnosti* [The European Court of Human Rights. An outline of the organization and activities]. Moskva, Izdatelstvo NORMA. (In Rus.)
- Case of Zollman v. The United Kingdom*, Application no. 62902/00 (ECHR, 27 november 2003) (In Eng.)
- Case of Allenet de Ribemont v. France*, Application no. 15175/89 (ECHR, 10 february 1995) (In Eng.)
- Case of Barberà, Messegué and Jabardo v. Spain*, Application nos. 10590/83 (ECHR, 6 december 1988) (In Eng.)
- Case of Barbera, Messegue and Jabardov. Spain*, Application no. 10590/83 (ECHR, 6 december 1988) (In Eng.)
- Case of Bykov v. Russia*, Application no. 4378/02 (ECHR, 10 march 2009) (In Eng.)
- Case of Fedorenko v. Russia*, Application no. 39602/05 (ECHR, 20 september 2011) (In Eng.)
- Case of Minelli v. Switzerland*, Application no. 8660/79 (ECHR, 25 march 1983) (In Eng.)
- Case of Pham Hoang v. France*, Application no. 13191/87 (ECHR, 25 september 1992) (In Eng.)
- Case of Salabiaku v. France*, Application no. 10519/83 (ECHR, 7 october 1988) (In Eng.)
- Case of Samoila and Cionca v. Romania*, Application no. 33065/03 (ECHR, 4 march 2008) (In Eng.)
- Case of Saunders v. the United Kingdom*, Application no.19187/91 (ECHR, 17 december 1996) (In Eng.)
- Case of Stirmanov v. Russia*, Application no. 31816/08 (ECHR, 29 january 2019) (In Eng.)
- Case of Turyev v. Russia*, Application no. 20758/04 (ECHR, 11 october 2016) (In Eng.)
- Case of Urat v. Turkey Application*, nos. 53561/09 and 13952/11(ECHR, 27 november 2018) (In Eng.)
- Case of Vanjak v. Croatia*, Application no. 29889/04 (ECHR, 14 april 2010) (In Eng.)
- Case of Kustova and Bibanin v. Russia*, Application nos. 44309/06 и 39973/08 (ECHR, 28 january 2020) (In Eng.)
- Mateun, Gh. (2007). *Tratat de procedura penala. Partea general* [Treaty of Criminal Procedure. General Part]. Volumul I, Editura C.H. Beck, Bucuresti. (In Rom.)

Анна Оганесян

*Главный специалист отдела анализа индивидуальных обращений
Правового консультативного управления Конституционного суда РА,
Соискатель кафедры права Европейского университета
Эл. адрес: Anna.hovhannisyan2210@gmail.com*

ПРАВОВОЕ СОДЕРЖАНИЕ И ПРОБЛЕМНЫЕ АСПЕКТЫ ПРЕЗУМПЦИИ НЕВИНОВНОСТИ В ЕВРОПЕЙСКОМ ПРАВЕ

Эта статья посвящена оценке соответствия презумпции невиновности, установленной Конституцией Республики Армения и уголовно-процессуальным кодексом, международным и европейским стандартам. Была предпринята попытка выявить содержание презумпции невиновности и проблемные

аспекты в системе европейского права. В рамках этой статьи мы также попытались всесторонне изучить вопрос о презумпции невиновности, позиции, сформированные Европейским судом по правам человека в отношении его содержания, принимая во внимание положения Европейской конвенции о защите прав человека и основных свобод, и на основе этого выявлено значение и место позиций Европейского суда по правам человека в правовой системе Республики Армения.

Ключевые слова: презумпция невиновности, Европейский суд по правам человека, содержание презумпции невиновности, европейское право, Практика ЕСПЧ, Европейский стандарт.

Anna Hovhannisyan

*Chief specialist of the Individual Complaints Analysis Division in
Legal Advisory Department of the Constitutional Court of
the Republic of Armenia,*

Ph.D. student of Law at the European University

Email: Anna.hovhannisyan2210@gmail.com

LEGAL CONTENT AND PROBLEMATIC ASPECTS OF THE PRESUMPTION OF INNOCENCE IN EUROPEAN LAW

This article is devoted to assessing the compliance of the presumption of innocence established by the Constitution of the Republic of Armenia and the Code of Criminal Procedure with international and European standards. An attempt was made to identify the content of the presumption of innocence and problematic aspects in the system of European law. As part of this article, we also tried to comprehensively examine the issue of the presumption of innocence., the positions formed by the European Court of Human Rights regarding its content, taking into account the provisions of the European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, and based on this we have tried to uncover the importance and place of the positions of the European Court of Human Rights in the legal system of the Republic of Armenia.

Key words: Presumption of innocence, European Court of Human Rights, the content of the presumption of innocence, European law, the practice of the ECHR, the European Standard.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2024թ. մայիսի 31-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2024թ. հունիսի 4-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2024թ. հունիսի 19-ին:

Անահիտ Սերոբյան

*Երևանի պետական համալսարանի
քաղաքագիտության ամբիոնի հայցորդ
Էլ. հասցե՝ anahitserobyan99@gmail.com*

DOI: 10.53614/18294952-2024.1-61

ԲԱՔՈՒ-ԹՔԻԼԻՍԻ-ԿԱՐՍ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդվածում քննարկում ենք Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու կարևորությունն ու նշանակությունը, որը անխափան միացնում է Բաքու, Թբիլիսի և Կարս քաղաքները: Մենք վերլուծում ենք Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու աշխարհաքաղաքական հետևանքները՝ հաշվի առնելով դրա դերը մասնակից երկրների ռազմավարական դիրքի բարձրացման և տարածաշրջանային ինտեգրման խթանման գործում: Թեմայի ուսումնասիրության հիմնական նպատակն է ուսումնասիրել և ընդգծել Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու նշանակությունը՝ որպես փոխակերպող ենթակառուցվածքային նախագիծ, ինչպես նաև խորանալ երկաթուղու պատմական համատեքստում, գործառնական բարդություններով և աշխարհաքաղաքական հետևանքներով՝ ցույց տալով նրա դերը տարածաշրջանային կապի ամրապնդման, տնտեսական զարգացման խթանման և Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական համագործակցության զարգացման գործում:

Հիմնաբառեր. Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղի, ենթակառուցվածքային նախագիծ, ռազմավարական տրանսպորտային երթուղի, աշխարհաքաղաքական հետևանքներ, Հարավային Կովկաս, տրանսպորտային ցանց, տարածաշրջանային կապ:

Ներածություն

2007 թվականի նոյեմբերի 21-ին Մարաբդայում (Հարավային Վրաստան) Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի նախագահները հանդիսավորությամբ հայտնեցին Բաքու-Թբիլիսի-Կարս նոր երկաթուղու կառուցման մասին և ստորագրվեց եռակողմ համաձայնագիր: Ենթադրվում էր, որ այս նոր երկաթուղին մեծացնելու էր տրանսպորտային հնարավորությունները Հարավային Կովկասում և դիվերսիֆիկացնելու էր բեռների բնույթը, որոնք տեղափոխվում են այս երեք երկրների տարածքով: Իսկապես, Բաքու-Թբիլիսի-Ջեյհան (ԲԹՋ) նավթամուղի և Բաքու-Թբիլիսի-Էրզրում (ԲԹԷ) գազատարի իրականացումից հետո Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին, որը հայտնի է նաև որպես Կարս-Ախալքալաք-Թբիլիսի-Բաքու երկաթուղի, պետք է ևս մեկ հնարավորություն լիներ Հարավային Կովկասը՝ որպես Եվրոպայի և Ասիայի միջև հիմնական տարանցիկ միջանցք դարձնելու համար:

Վրաստանի տարածքով Ադրբեջանի և Թուրքիայի միջև երկաթուղու նախագիծն առաջին անգամ քննարկվել էր 1993 թվականի հուլիսին, երբ փակվեց Հայաստանով անցնող Կարս-Գյումրի-Թբիլիսի երկաթգիծը: Այդ ժամանակ ֆինանսավորման բացակայության պատճառով այս նախագիծը քիչ թե շատ հետաձգվեց: Սակայն հանդիպումների ժամանակ Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի նախագահները բազմիցս հիշատակել են երեք երկրների միջև երկաթուղու կառուցման հնարավորության մասին:

2007 թվականը վճռորոշ էր այդ նախագծի իրականացման համար. փետրվարին Թբիլիսիում Ադրբեջանը, Վրաստանը և Թուրքիան եռակողմ համաձայնագիր ստորագրեցին երկաթուղու կառուցման մեկնարկի մասին: Վրացական մասի համար այն սկսվեց Մարաբդայում 2007-ի նոյեմբերին, իսկ 2008-ի հուլիսին՝ Կարսում, թուրքական մասի համար: Ակնկալվում էր, որ երկաթուղին կբացվի 2011 թվականի վերջին, երկարությունը կկազմեր 826 կմ, իսկ առաջին փուլում այն կկարողանար տեղափոխել 1 մլն ուղևոր և 6,5 մլն տոննա բեռ: Այնուհետև այդ թողունակությունը կհասնի 3 միլիոն ուղևորի և ավելի քան 15 միլիոն տոննա բեռների: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմեց շուրջ 600 միլիոն դոլար, այդ թվում 422 միլիոն դոլարը ուղղվեց Կարսի և Ախալքալաքի միջև երկաթուղու կառուցմանը և Ախալքալաքի և Մարաբդայի միջև երկաթուղու վերականգնմանը:

Մեթոդ

Հոդվածում կիրառվել են ժամանակագրական, պատմական և համեմատական մեթոդները: Ժամանակագրական մեթոդը օգտագործվել է դեպքերը դիտարկելու համար՝ հաշվի առնելով դրանց ժամանակագրական և տրամաբանական հաջորդականությունը: Պատմական մեթոդը թույլ է տալիս մեզ հետևել Թուրքիայի վարած քաղաքականության էվոլյուցիային, իսկ համեմատական մեթոդը մեզ թույլ տվեց համեմատել քաղաքական իրադարձությունները:

Արդյունքներ և քննարկում

Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու նախագծի պաշտոնական բացման արարողությունը տեղի ունեցավ 2017 թվականի հոկտեմբերի 30-ին Բաքվում՝ Ալյաթ նավահանգստում: Արարողությանը ներկա էին Թուրքիայի Հանրապետության նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, Ադրբեջանի Հանրապետության նախագահ Իլհամ Ալիևը, Ղազախստանի Հանրապետության վարչապետ Բակիտժան Սագինտանը, Ուզբեկստանի Հանրապետության վարչապետ Աբդուլլա Արիպովը և Վրաստանի Հանրապետության վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին (TURKPA, 2017):

Քարտեզ. «Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղի» (News Tbilisi, 2020).



Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու նախագիծը ոչ միայն արագացրեց Եվրոպայի հետ ինտեգրման գործընթացը Եվրասիայում համագործակցության զարգացման միջոցով, այլև հիմք հանդիսացավ Արևելքի և Արևմուտքի միջև տնտեսական հարաբերությունների խթանման համար՝ ավելացնելով առևտրի ծավալը: Գծի ընդհանուր երկարությունը կազմում է 826 կմ (Wander-Lush, 2024):

Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու նախագծի բացումից հետո և Մարմարայում բեռնափոխադրումների մեկնարկից հետո Միջին Ասիայի և Կովկասի երկրների միջև կապ հաստատվեց Եվրոպական և համաշխարհային շուկայի հետ:

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հայտարարեց, որ երկաթգիծը «Ասիայի և Եվրոպայի միջև ամենակարճ և հուսալի կապն է»: Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին էլ իր հերթին վստահություն հայտնեց, որ նոր երկաթուղին կտրուկ կփոխի ներկայիս տնտեսական իրականությունը: «Դա կմիացնի ոչ միայն մեր տնտեսությունները, այլ նաև մեր քաղաքացիներին, կբարելավի և կբարձրացնի նրանց բարեկեցությունը», – ասել էր Կվիրիկաշվիլին: Հոկտեմբերի 30-ին արված հայտարարության մեջ Եվրա-

միությունը երկաթուղու բացումն անվանեց «խոշոր քայլ Եվրամիությանը, Թուրքիային, Վրաստանին, Ադրբեջանին և Կենտրոնական Ասիային կապող տրանսպորտային փոխկապակցման գործում» (Regional Post, 2007):

Արևելք-Արևմուտք էներգետիկ միջանցքի իրականացումից հետո ԲԹԿ երկաթուղին, ըստ երևույթին, Հարավային Կովկասի քաղաքական էվոլյուցիայի ևս մեկ քայլ դարձավ: Արևելք-Արևմուտք էներգետիկ միջանցքի իրականացումը հիմք է դրել Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի միջև տնտեսական և քաղաքական կապերի ընդլայնման համար: Տնտեսական մակարդակում 2000-ականների սկզբից սկսած այս երեք երկրների միջև առևտրի ծավալը մշտապես աճում էր: Ակնհայտ է, որ էներգետիկ միջանցքը մեծապես նպաստել է ապրանքաշրջանառության ծավալների ավելացմանը, և կասկած չկա, որ Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին հետագայում էլ կնպաստի նման աճի: Քաղաքական մակարդակում 1999 թվականի նոյեմբերին ԲԹՋ գազատարի համար միջկառավարական համաձայնագրի ստորագրումը և 2003 թվականի հուլիսին Արևելք-Արևմուտք էներգետիկ միջանցքի հետ կապված Անվտանգության արձանագրությունը Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի միջև ցույց տվեցին նախագծի կարևորությունը և նախագիծը հանգեցրեց այս պետությունների միջև քաղաքական կապերի աճին: Այսպիսով, տնտեսական մակարդակով համագործակցելու անհրաժեշտությունը ազդեց նրանց քաղաքական հարաբերությունների վրա:

Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու կառուցումը նոր քայլ էր Հարավային Կովկասում Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի ներգրավմամբ տարածաշրջանի հետագա զարգացման գործում:

ԲԹԿ երկաթուղին կարող է նաև նպաստել օտարերկրյա երկրների միջև տարածաշրջանային ինտեգրման բնույթի փոփոխությանը: Մինչև վերջերս նման ինտեգրումը հիմնականում հիմնված էր էներգակիրների տեղափոխման և դրա հետ կապված հարցերի վրա (օրինակ՝ խողովակաշարերի անվտանգություն): ԲԹԿ երկաթուղու կառուցումը թույլ տվեց այլ երկրների փոխել իրենց քաղաքական համագործակցության հիմքերը՝ այն կենտրոնացնելով բեռնափոխադրումների վրա, ինչպես նաև երեք պետությունների միջև կարևորվեց փորձի փոխանակումը: ԲԹԿ երկաթուղին Հին Մետաքսի ճանապարհի վերածննդի մի մասն է:

Խոսելով Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու մասին, չենք կարող չանդրադառնալ նաև այն հարցին, թե արդյոք այսօր երկաթգիծը ծառայում է իր հիմնական նպատակին, ինչի համար կառուցվել է, արդյոք տեղափոխում է այնքան մարդ և բեռ, որքան նախատեսված է եղել. պետք է նշենք, որ երկաթուղու գործարկման առաջին փուլում նախատեսվում էր տեղափոխել 1 մլն ուղևոր և 6,5 մլն տոննա բեռ, իսկ մինչև 2034 թվականը այս թվերը հասցնել մինչև 3 միլիոն ուղևորի և 17 միլիոն տոննա բեռնափոխադրման:

Ներկայումս Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին օգտագործվում է բեռնափոխադրումների համար դեպի Թուրքիա, Ռուսաստան, Չինաստան, Վրաստան, Ադրբեջան, Ղազախստան, Թուրքմենստան, Տաջիկստան և Ուզբեկստան: Օրինակ, երկաթգծով 4700 կիլոմետր հեռավորությամբ Թուրքիա-

յի և Ղազախստանի միջև փոխադրումը կարող է ավարտվել 180 ժամում՝ կախված Կասպից ծովի իրավիճակից: Թուրքիայի, Ադրբեջանի և Ղազախստանի միջև շաբաթական երեք գնացք է գործում: Թուրքիայի պետական երկաթուղային կազմակերպության՝ Թուրքիայի պետական երկաթուղիների (TCDD) և Ղազախստանի ազգային երկաթուղային ընկերության (KTZ Express JSC) միջև կնքվել է պայմանագիր՝ երկաթգծով արտահանման փոխադրումները մեծացնելու նպատակով:

Մյուս կողմից, շաբաթական մեկ բլոկ կոնտեյներային գնացք է անցնում Չինաստանից դեպի Թուրքիա: Այս համատեքստում ամենակարևոր փաստն այն է, որ 2019 թվականին Չինաստան-Եվրոպա առաջին գնացքը՝ բաղկացած 42 վագոն-կոնտեյներներից, օգտվել է Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղուց: Սա առաջին գնացքն էր Չինաստանից Եվրոպա, որն անցավ Միջին միջանցքով՝ «Երկաթե մետաքսի ճանապարհով», ինչպես նաև առաջին միջազգային բեռնատար գնացքը, որն անցավ Սարմարայի թունելով: Այստեղ կարող ենք նաև նշել, որ 2019 թվականի մայիսին Թուրքիան, Ադրբեջանը և Ռուսաստանը Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու հետ կապված փոխըմբռնման հուշագիր ստորագրեցին: Նշված փաստաթղթի համաձայն՝ նախատեսվում էր կարճաժամկետ կտրվածքով փոխադրել 1 մլն տոննա ածուխ, հացահատիկ և մետաղ, իսկ միջնաժամկետում՝ 3-5 մլն տոննա Ռուսաստանի և Թուրքիայի միջև (HABERTURK, 2019):

Շահագործման օրվանից մինչև 2020 թվականի մայիսը երկաթուղին 240 հազար տոննա թուրքական բեռ է փոխադրվել 5250 բեռնարկերով, իսկ COVID-19-ի ի հայտ գալուն պես՝ երկաթուղու պահանջարկը սկսվեց մեծանալ, քանի որ երկաթուղին բարձր մակարդակի անվտանգությամբ տրանսպորտային միջոց է համարվում: Սա իր դրական ազդեցությունը թողեց Թուրքիայի տնտեսության վրա և Թուրքիայի կառավարությունը երկաթգծով իր բեռնափոխադրումների ծավալի մեծացրեց՝ հասցնելով օրական 3500 տոննայի (CNN TURK, 2020):

Երկաթուղու համար կարևոր իրադարձություններից էր այն, որ 2024 թվականի մայիսի 20-ից բեռնատար գնացքները կսկսեն աշխատել Բաքու-Թբիլիսի-Կարս նորացված երկաթուղային գծով, քանի որ Վրաստանով անցնող երկաթուղային գծի 184 կիլոմետրանոց հատվածի վերանորոգման և ընդլայնման աշխատանքները ավարտվել են (BUSINESS INSIDER GEORGIA, 2024): Այս բարելավումները նպատակ ունեն երկաթուղու կարգավիճակը հասցնել տարածաշրջանի հիմնական բեռնափոխադրումների՝ ավելացնելով դրա թողունակությունը մինչև 5 միլիոն տոննա մեկ տարվա կտրվածքով: Ակնկալվում է, որ այս ընդլայնումը զգալիորեն կբարելավի Չինաստանից և Կենտրոնական Ասիայի երկրներից Ադրբեջանի տարածքով Եվրոպա բեռների առաքման արդյունավետությունը:

Տարանցիկ բեռների աճող ծավալը, որն ավելի քան կրկնապատկվել է վերջին տարիներին՝ հասնելով 6,8 միլիոն տոննայի 2023 թվականին, ընդգծում է Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու՝ որպես առանցքային տրանսպորտային միջանցքի աճող նշանակությունը: Այս երթուղու երկայնքով ուժեղաց-

ված ակտիվությունը ընդգծում է դրա կարևոր դերը Եվրասիայում բեռնափոխադրումների դյուրացման գործում:

Չենք կարող չանդրադառնալ այն հանգամանքին, որ Ամերիկայի միացյալ Նահանգները և Եվրամիությունը հրաժարվեցին ֆինանսավորել Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին, չնայած նրան, որ ԱՄՆ, և ԵՄ նախկինում ֆինանսավորել էին Բաքու-Թբիլիսի-Ջեյհան և Բաքու-Թբիլիսի-Էրզրում խողովակաշարերը: Իրոք, Միացյալ Նահանգները հսկայական դեր է խաղացել ԲԹՁ խողովակաշարի ֆինանսավորման գործում՝ այդ առիթով մոբիլիզացնելով իր ֆինանսական պետական գործակալությունները: Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող ԻՆՈԳԵՅԹ (INOGATE) ծրագիրը նույնպես ֆինանսավորել է Բաքու-Թբիլիսի-Էրզրում խողովակաշարը: Այսպիսով, քանի որ այս երկու խողովակաշարերն անցնում են Հայաստանը շրջանցելով, տարանցիկ պետությունները կարծում էին, որ այն փաստը, որ Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին նույնպես անցնում է այդ երկիրը շրջանցելով, խնդիր չի լինի Եվրոպական և ամերիկյան ֆինանսավորում ստանալու համար: Ի հակադրություն, 2005 թվականի հոկտեմբերին Եվրահանձնաժողովը վճռականորեն հրաժարվեց ֆինանսավորել նման նախագիծը ՏՐԱՍԵԿԱ (TRACECA) ծրագրի շրջանակներում՝ աջակցելով Կարս-Գյումրի-Թբիլիսի երկաթուղու վերականգնմանը, այլ ոչ թե Հայաստանը շրջանցող նոր երկաթուղու կառուցմանը: Ինչ վերաբերում է ԱՄՆ վարչակազմին, ապա Հայաստանն օգտագործել է Վաշինգտոնում իր ուժեղ լոբբիները, ինչպիսիք են ԱՐՄԵՆՓԱԿԸ կամ Ամերիկայի Հայաստանի ազգային կոմիտեն, որպեսզի ձնշում գործադրի ԱՄՆ Կոնգրեսի վրա Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու ֆինանսավորման հարցում:

Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգծի կառուցման սկզբում Վրաստանը հստակ չէր կարողանում կողմնորոշվել մասնակցել Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու կառուցմանը, թե ոչ: Իսկապես, վերջինս մրցակցելու է Սև ծովի վրացական նավահանգիստների հետ՝ Ասիայից Եվրոպա բեռներ փոխադրելու համար: Ադրբեջանը և Թուրքիան ակտիվորեն լոբբինգ էին իրականացնում երկաթուղու կառուցման հարցում Թբիլիսիի համաձայնությունը ստանալու համար: Ադրբեջանը Վրաստանին վարկ տվեց և հիշեցրեց Թբիլիսիին իր օգնության մասին 2006 թվականին ռուսական գազային շրջափակման ժամանակ, մինչդեռ Թուրքիան առաջարկեց Շահ Դենիզ հանքավայրից գազի արտահանման իր մասնաբաժնի մի մասը: Այդ լոբբինգն արդյունավետ էր: Վրաստանը վերջապես համաձայնեց նոր երկաթուղու կառուցմանը: Սակայն 2008թ. ամռանը Հարավային Կովկասում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների հետ կապված եղան որոշակի խնդիրներ: 2008 թվականի օգոստոսին ռուս-վրացական պատերազմից հետո ադրբեջանական ՍՈԿԱՐ (SOCAR) նավթային ընկերությունը բանակցություններ սկսեց վարել Ռուսաստանի հետ Բաքու-Նովոռոսիյսկ նավթատարի թողունակության ավելացման շուրջ, որպեսզի կանխվի Վրաստանը հատող խողովակաշարերի ցանկացած փակում: Ավելին, չնայած Հայաստանի և Թուրքիայի միջև բանակցությունները վաղուց էին ընթանում, 2008թ. սեպտեմբեր-

րի 6-ին Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի Երևան կատարած այցը կարևոր էր, քանի որ Անկարան մեծ հույսեր ուներ Վրաստանից Թուրքիայի տրանսպորտային կախվածության նվազեցման հետ կապված և պատահական չէ, որ Թուրքիայի տրանսպորտի նախարար Բինալի Յըլդըրըմը հայտարարել էր, որ «Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին ոչ մի դեպքում Հայաստանը բացառող նախագիծ չէ՝ հաշվի առնելով, որ Երևանը մի օր կարող է մասնակցել նախագծին» (Azertag, 2017): Նույնիսկ, եթե ԲԹԿ երկաթուղու կառուցումը չէր վիճակվում, այս ամենը ցույց տվեց, որ Թուրքիան կարծես կորցրել էր վստահությունը իր վրացի հարևանի նկատմամբ: Այս տեսանկյունից, 2008-ի օգոստոսի իրադարձությունները կարևոր հետևանքներ ունեցան տարածաշրջանայնացման և, հետևաբար, Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու հնարավոր աշխարհաքաղաքական ազդեցության համար:

Ինչ վերաբերում է Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու իրականացմանը, այլ ոչ թե երկաթուղու սիմվոլիզմին, պետք է նշենք, որ ամենակարևոր ասպեկտը երկաթուղու տնտեսական և քաղաքական ազդեցությունն էր յուրաքանչյուր պետության համար: Ադրբեջանին անդրադառնալով կարող ենք ասել, որ ցանկանում էր դառնալ խոշոր տարանցիկ հանգույց Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի միջև առևտրային փոխադրումներում: Ադրբեջանը նաև այն երկիրն է, որն ամենամեծ օգուտը ուներ Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղուց, քանի որ երկաթուղին Ադրբեջանի տարածքում ամենաերկարն է և Ադրբեջանը մեծ շահույթ կստանար այդ փաստից: Վրաստանի համար Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին մեծ անհրաժեշտություն էր Եվրոպա քիչ թե շատ անկախ մուտքի համար: Իսկապես, միակ գոյություն ունեցող երկաթուղին, որը Թբիլիսիից Եվրոպա է տանում, անցնում է Աբխազիայով, իսկ հետո՝ ՌԴ-ով: 2008 թվականի օգոստոսին, Աբխազիայում տեղի ունեցող իրադարձություններից հետո և Աբխազիայի անկախությունից հետո, Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին դարձավ միակ երկաթուղային հաղորդակցությունը Եվրոպայի և Վրաստանի միջև: Թուրքիայի համար այս երկաթուղին նոր քայլ էր ներկայացնում երկիրը Եվրոպայի և Ասիայի միջև հանգույց սահմանելու հարցում: Թուրքիան նաև ձգտում էր ավելի հեշտ մուտք գործել Կենտրոնական Ասիա՝ Թուրքիայի առևտրային հաշվեկշիռը մեծացնելու համար:

Չնայած Հարավային Կովկասում վերջին քաղաքական զարգացումներին և Վրաստանի, Ադրբեջանի ու Թուրքիայի տարածաշրջանայնացման առանձնահատկություններին, Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին զգալի ներդրում ուներ տարածաշրջանի զարգացման գործում: Այն նաև մեծացնում էր այս տարածաշրջանի անկախությունը ինչպես Իրանի, այնպես էլ Ռուսաստանի նկատմամբ: Իսկապես, Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին մրցակցել էր իրանական Ռազի-Սարախս երկաթուղու հետ, որը կապում է Եվրոպան և Ասիան: Դա ավելի կարճ ճանապարհ էր, ինչպես նաև ավելի անվտանգ ճանապարհ, եթե Վրաստանում քաղաքական իրավիճակը կայունանար: Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին այլընտրանք էր նաև Տրանսսիբիրյան մայրուղուն, որն անցնում էր Ռուսաստանից Չինաստան՝ շրջանցելով Հարավա-

յին Կովկասը և Կենտրոնական Ասիան: Նաբուկո գագատարի նախագծի հետ կապված, որը նախատեսում էր Կենտրոնական Ասիայի գազը տեղափոխել Եվրոպա՝ շրջանցելով Ռուսաստանը, Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին, կարծես, Կենտրոնական Ասիայում ռուսական ազդեցությունը նվազեցնելու ևս մեկ փորձ էր:

Այդ հեռանկարում ԲԹԿ երկաթուղին Թուրքիային կապահովեր անարգել մուտք դեպի այդ տարածաշրջան: Դա նաև հնարավորություն կտար Կենտրոնական Ասիայի երկրներին նվազեցնել իրենց կախվածությունը Ռուսաստանից դեպի Եվրոպա և Եվրոպայից ապրանքների դեպի հետ արտահանման և ներմուծման գործում: Օրինակ՝ Ղազախստանն արդեն հայտնել էր իր խորը հետաքրքրությունը ԲԹԿ երկաթուղու նկատմամբ՝ պլանավորելով այդ երկաթուղով տարեկան ավելի քան 5 միլիոն տոննա հացահատիկ տեղափոխել Եվրոպա:

Այսպիսով, Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին ոչ միայն նպաստում էր տարածաշրջանի հետագա ինտեգրմանը, այն նաև մասնակցում էր Կենտրոնական Ասիայի մերձեցմանը Եվրոպային և, հետևաբար, խաթարում էր Ռուսաստանի դիրքերը Եվրասիայում՝ որպես Եվրոպայի և Չինաստանի միջև հիմնական տարանցիկ երկիր: Ի վերջո, այս երկաթուղու շտրիիվ տարածաշրջանը դառնալու էր հիմնական տրանսպորտային միջանցքը Եվրոպայի և Ասիայի միջև, ինչը կնվազեցներ Ռուսաստանի նշանակությունը Եվրասիական առևտրում:

Հետևաբար, Հարավային Կովկասում այդ սուբյեկտների միջև մրցակցություն գոյություն ունի ոչ միայն տնտեսական մակարդակում, այլև քաղաքական և անվտանգության ոլորտում: Այս պայմաններում Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու կառուցումը խորացնել էր աշխարհաքաղաքական առանցքների ձևավորումը Հարավային Կովկասում: Օրինակ, Հայաստանը, որն արդեն խորը կապեր ուներ Ռուսաստանի հետ, ձգտում էր ընդլայնել իր առանց այն էլ սերտ համագործակցությունն Իրանի հետ: Սակայն այդ պահին այդ համագործակցությունը չէր վերաճել մրցակցության, և տարածաշրջանի գործող անձինք միմյանց թշնամիներ չէին համարում, բացառությամբ Հայաստանի և Ադրբեջանի: Նրանցից էր կախված խուսափել սցենարից, որի դեպքում նման մրցակցությունը կվերածվի դրամատիկ մրցակցության, որը կհանգեցնի Հարավային Կովկասում ավելի ու ավելի շատ հակամարտությունների:

Չենք կարող չնշել, որ Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին աշխարհաքաղաքական կարևոր ազդեցություն ունեցավ Հարավային Կովկասի տարածաշրջանի վրա: Այն նաև նպաստեց Բաքվի, Անկարայի և Թբիլիսիի տարածաշրջանի հետագա ինտեգրմանը: Սա արտացոլում էր այս տարածաշրջանայնացման առանձնահատկությունները, որոնք, ըստ էության, հիմնված էին տնտեսական խնդիրների վրա և զարգանում էին ի հեճուկս կոնյունկտուրային շահերի: Չնայած Հարավային Կովկասում վերջին քաղաքական զարգացումներին, ԲԹԿ երկաթուղին, ամենայն հավանականությամբ, արագացրեց պոտենցիալ մրցակցող աշխարհաքաղաքական առանցքների ի հայտ

գալն այս տարածաշրջանում:

Խոսելով Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու մասին, պետք է նաև անդրադառնանք այն հանգամանքին, թե երկաթուղին ինչպիսի ազդեցություն է թողնում տարածաշրջանի մյուս երեք պետությունների՝ Հայաստանի, ՌԴ-ի և Իրանի վրա: Հայաստանը, որը դիվանագիտական հարաբերություններ չունի Թուրքիայի հետ և լարված հարաբերություններ ունի Ադրբեջանի հետ, Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին դիտարկում է որպես տարածաշրջանային ռազմավարության մի մաս, որը մեկուսացնում է Հայաստանը տնտեսապես և ռազմավարական առումով: Երկաթուղին շրջանցելով Հայաստանը, ամրապնդում է այս մեկուսացումը՝ ստեղծելով ուղիղ երթուղի Ադրբեջանի և Թուրքիայի միջև Վրաստանի տարածքով, դրանով իսկ ամբողջությամբ շրջանցելով Հայաստանը: Կարող ենք ասել, որ նման ենթակառուցվածքային նախագծերը խորացնում են Հայաստանի մեկուսացումը և բարդացնում տարածաշրջանային ինտեգրման ջանքերը:

Անդրադառնանք Իրանին. Իրանը ձգտում է պահպանել և ուժեղացնել իր ազդեցությունը Հարավային Կովկասում: Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին, շրջանցելով Իրանը և Հայաստանը, սահմանափակում է Իրանի դերը տարածաշրջանային տրանսպորտային ցանցերում: Այնուամենայնիվ, Իրանը շարունակում է իր շահերը հետապնդել այլ նախագծերի միջոցով, ինչպիսին է Հյուսիս-Հարավ միջազգային տրանսպորտային միջանցքը, որի նպատակն է կապել Հնդկաստանը, Իրանը և Ռուսաստանը՝ այլընտրանքային ճանապարհ ապահովելով դեպի եվրոպական շուկաներ: Իրանը լավ հարաբերություններ է պահպանում Հայաստանի հետ և նրան դիտարկում է որպես ռազմավարական դաշնակից մի տարածաշրջանում, որտեղ Իրանն ունի սահմանափակ բարեկամական գործընկերներ:

Իսկ ինչ վերաբերում է Ռուսաստանին, պետք է նշենք, որ Ռուսաստանը պատմականորեն գերիշխող տերություն է եղել Հարավային Կովկասում: Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին, որին աջակցում են Թուրքիան և Ադրբեջանը, մարտահրավեր է Ռուսաստանի համար: Բայց Ռուսաստանն էլ իր հերթին աջակցում է այլընտրանքային տրանսպորտային ուղիները, որոնք ներառում են Հայաստանը, օրինակ՝ Հյուսիս-Հարավ միջանցքը, որի նպատակն է Հայաստանի միջոցով Ռուսաստանը կապել Իրանին և Հնդկաստանին:

Եվ Իրանը, և՛ Ռուսաստանը շահագրգռված են տարածաշրջանում Արևմուտքի ազդեցությանը հակակշռելու հարցում, իսկ Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին աջակցություն ստանալով Արևմուտքից դարձել է այս աշխարհաքաղաքական մրցակցության մի մասը:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին ընդգծում է Հարավային Կովկասի տարածաշրջանի աշխարհաքաղաքական բարդությունները, որտեղ Հայաստանը ձգտում է հաղթահարել մեկուսացումը ռազմավարական դաշինքների միջոցով, մինչդեռ Իրանը և Ռուսաստանը աշխատում են պահպանել իրենց ազդեցությունը և աջակցել Հայաստանին տարածաշրջանային մրցակցության գործում:

Այժմ կարող ենք փորձել հասկանալ, թե ինչ առավելություններ ուներ Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի համար:

Առաջինը անդրադառնալով Ադրբեջանին, իհարկե, կարող ենք ասել, որ Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգիծը մի քանի ռազմավարական և տնտեսական շահեր ունի, դրանք են՝

- **Տրանսպորտային երթուղիների դիվերսիֆիկացում** – Երկաթուղին Ադրբեջանին այլընտրանքային երթուղի է տրամադրում իր ապրանքները միջազգային շուկաներ փոխադրելու համար՝ նվազեցնելով Ռուսաստանի տարածքով ավանդական երթուղիների կախվածությունը: Այս դիվերսիֆիկացիան բարձրացնում է Ադրբեջանի տրանսպորտային անվտանգությունը և նվազեցնում խափանումների վտանգը:
- **Մուսք դեպի եվրոպական շուկաներ** – Երկաթուղին Ադրբեջանին ապահովում է ուղիղ ելք դեպի եվրոպական շուկաներ Թուրքիայի և Վրաստանի միջոցով՝ շրջանցելով Ռուսաստանը: Սա նոր առևտրային հնարավորություններ է բացում և ամրապնդում է Ադրբեջանի տնտեսական կապերը Եվրոպայի հետ:
- **Տարածաշրջանային ինտեգրում և համագործակցություն** – Ադրբեջանը, մասնակցելով երկաթուղու նախագծին, ամրապնդում է իր կապերը հարևան երկրների, մասնավորապես Վրաստանի և Թուրքիայի հետ: Սա նպաստում է տարածաշրջանային ինտեգրմանը և համագործակցությանը, կայունության և տնտեսական զարգացման խթանմանը Հարավային Կովկասի տարածաշրջանում:
- **Տնտեսական աճի խթանում** – Երկաթուղին խթանում է Ադրբեջանում տնտեսական աճը՝ նպաստելով ապրանքների և մարդկանց տեղաշարժին, ստեղծելով զբաղվածության հնարավորություններ և ներգրավելով ներդրումներ տրանսպորտային ենթակառուցվածքներում:
- **Էներգիայի փոխանցում** – Բացի ապրանքներից, ԲԹԿ երկաթգիծը նաև նպաստում է էներգառեսուրսների, օրինակ՝ նավթի և գազի տարանցմանը Ադրբեջանից միջազգային շուկաներ: Սա մեծացնում է Ադրբեջանի դերը՝ որպես էներգակիրների տարանցիկ երկիր և ամրապնդում է նրա դիրքերը համաշխարհային էներգետիկ շուկայում:
- **Ռազմավարական նշանակություն** – ԲԹԿ երկաթուղին բարձրացնում է Ադրբեջանի ռազմավարական նշանակությունը՝ որպես Եվրոպան և Ասիան կապող առանցքային տրանսպորտային հանգույց: Սա բարձրացնում է Ադրբեջանի աշխարհաքաղաքական նշանակությունը և մեծացնում նրա ազդեցությունը տարածաշրջանում:

Վրաստանին անդրադառնալով, կարող ենք առանձնացնել մի քանի կետեր, դրանք են՝

- **Ամուր կապեր** – Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին Վրաստանին ապահովում է ուղիղ երկաթուղային կապ Ադրբեջանի և Թուրքիայի

հետ՝ շրջանցելով Ռուսաստանը. սա նվազեցնում է կախվածությունը ռուսական տրանսպորտային ուղիներից, ինչը վճռորոշ է Վրաստանի ինքնիշխանության և տնտեսական անկախության համար:

- **Առևտրապրեսակա կապեր** – Երկաթուղին Վրաստանի համար բացում է նոր առևտրային ուղիներ՝ հեշտացնելով բեռնավոխադրումները Եվրոպայի և Ասիայի միջև: Այն բարձրացնում է Վրաստանի դերը որպես տարանցիկ երկիր և խթանում է նրա տնտեսությունը տարանցման վճարների, առևտրի ավելացման և ներդրումային հնարավորությունների միջոցով:
- **Տարածաշրջանային ինտեգրում** – Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին ամրապնդում է Վրաստանի դիրքերը՝ որպես տարածաշրջանային կապի նախաձեռնություններում առանցքային խաղացողի: Նման նախագծերին մասնակցելով՝ Վրաստանը խորացնում է իր կապերը հարևան երկրների հետ և նպաստում տարածաշրջանային կայունության ու համագործակցությանը:
- **Ենթակառուցվածքների զարգացում** – Երկաթուղու կառուցումն ու պահպանումը նպաստում են Վրաստանում ենթակառուցվածքների զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը և տնտեսական աճի խթանմանը, հատկապես երկաթուղային ճանապարհի երկայնքով գտնվող շրջաններում:
- **Էներգետիկ անվտանգություն** – Երկաթուղին նաև ազդեցություն ունի էներգետիկ անվտանգության վրա: Այն ապահովում է Ադրբեյջանից եկող էներգառեսուրսների, ինչպիսիք են նավթն ու գազը, փոխադրման այլընտրանքային ճանապարհ՝ նվազեցնելով Վրաստանի խոցելիությունը էներգակիրների մատակարարման խափանումների նկատմամբ:
- **Ջրուսաշրջություն և մշակութային համագործակցություններ** – Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու միջոցով բարելավված կապերը նպաստում են զբոսաշրջությանն ու մշակութային համագործակցություններին Վրաստանի, Ադրբեյջանի և Թուրքիայի միջև: Սա կարող է հանգեցնել զբոսաշրջության եկամուտների ավելացմանը և ներգրավված երկրների միջև մշակութային ավելի մեծ փոխըմբռնմանը և համագործակցությանը:

Պետք է նշենք, որ Բաքու-Թբիլիսի-Կարս նախագծին Թբիլիսին մեծ կարևորություն էր տալիս. քանի որ այն ռազմավարական նշանակություն ունի, որը Վրաստանին թույլ է տալիս Թուրքիայի տարածքով մուտք գործել համաշխարհային, մասնավորապես եվրոպական շուկա: Վրաստանի արտգործնախարար Գ. Բեժուաշվիլին նշել էր, որ Վրաստանի համար կարևոր է, որ հնարավորինս շատ տրանսպորտային հաղորդակցություններ ունենան հարևան երկրների հետ: Նա նաև վստահեցրել է Երևանին, որ նախագիծը չի հանգեցնի Հայաստանի հետագա մեկուսացմանը, այլ, ընդհակառակը, կնպաստի տարածաշրջանային համագործակցության ընդլայնմանը և տարածաշրջանի բոլոր երեք երկրների եվրոպական ինտեգրմանը (Dudnik, 2013, էջ 5):

Խոսելով Թուրքիայի համար Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգծի կարևորության մասին, պետք է առանձնացնենք հետևյալ կետերը՝

- **Առևտրային և փնտրասական առավելություններ** - Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին Թուրքիային ապահովում է ուղիղ երկաթուղային կապ դեպի Ադրբեջան և Վրաստան՝ առաջարկելով այլընտրանքային և ավելի կարճ ճանապարհ Եվրոպայի և Ասիայի միջև բեռնափոխադրումների համար: Սա մեծացնում է Թուրքիայի դերը՝ որպես հիմնական տարանցիկ երկիր և խթանում է նրա տնտեսությունը առևտրի և տրանսպորտային վճարների ավելացման միջոցով:
- **Էներգիայի փարանցում** - Թուրքիան մեծ օգուտներ ունի երկաթուղուց, որը հեշտացնում է էներգամետալուրների, մասնավորապես նավթի և գազի տարանցումը Ադրբեջանից միջազգային շուկաներ: Սա ամրապնդում է Թուրքիայի դիրքերը որպես էներգետիկ տարանցիկ հանգույց և ուժեղացնում է նրա էներգետիկ անվտանգությունը:
- **Տարածաշրջանային կապ** - Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին ուժեղացնում է Թուրքիայի կապը Հարավային Կովկասի տարածաշրջանի իր հարևան երկրների հետ: Այն նպաստում է տարածաշրջանային ինտեգրմանը և համագործակցությանը, խթանելով տարածաշրջանում կայունությունը և տնտեսական զարգացումը:
- **Ռազմավարական նշանակություն** - Երկաթուղին բարձրացնում է Թուրքիայի ռազմավարական նշանակությունը՝ որպես Եվրոպան և Ասիան կապող առանցքային տրանսպորտային միջանցք: Դա ամրապնդում է Թուրքիայի աշխարհաքաղաքական նշանակությունը և ուժեղացնում է նրա ազդեցությունը տարածաշրջանում:
- **Ենթակառուցվածքների զարգացում** - Երկաթուղին նպաստում է երկրում ենթակառուցվածքների զարգացմանը: Սա ստեղծում է աշխատատեղերի հնարավորություններ, խթանում է տնտեսական աճը և ընդլայնում Թուրքիայի ընդհանուր տրանսպորտային ցանցը:
- **Առևտրային ուղիների դիվերսիֆիկացում** - Երկաթուղին Թուրքիային առաջարկում է դիվերսիֆիկացված առևտրային ուղի, որը շրջանցում է ավանդական տարանցիկ ուղիները Ռուսաստանի և Իրանի միջով: Սա նվազեցնում է Թուրքիայի կախվածությունը հատուկ տրանսպորտային միջանցքներից և մեծացնում է նրա դիմադրողականությունը աշխարհաքաղաքական խափանումների նկատմամբ:

Բաքու-Թբիլիսի-Կարս (ԲԹԿ) երկաթուղու նախագիծը նշանակալի ենթակառուցվածքային նախաձեռնություն է, որը կապում է Ադրբեջանը, Վրաստանը և Թուրքիան: Ադրբեջանի համար այս երկաթուղին իր տնտեսության դիվերսիֆիկացման և նավթի ու գազի արտահանումից կախվածությունը նվազեցնելու ջանքերի կարևոր բաղադրիչն է: Այն ապահովում է ուղիղ երկաթուղային կապ Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվի և Թուրքիայի արևելյան սահմանների միջև՝ հեշտացնելով ապրանքների, այդ թվում՝ նավթի, գազի և այլ ապրանքների փոխադրումը, երկաթուղին նաև բարձրացնում է Ադր-

բեջանի ռազմավարական դիրքը՝ որպես տարանցիկ երկիր՝ ամրապնդելով նրա դերը տարածաշրջանային առևտրային և տրանսպորտային ցանցերում: Այս ամենը Ադրբեջանի համար նոր հնարավորություններ է բացում ընդլայնելու իր տնտեսական կապերը Թուրքիայի և տարածաշրջանի այլ երկրների հետ:

Երկաթուղին զգալի տնտեսական օգուտներ է տալիս Վրաստանին՝ ապահովելով ավելի արդյունավետ տրանսպորտային երթուղի Ասիայի և Եվրոպայի միջև տեղափոխվող ապրանքների համար: Այն ամրապնդում է Վրաստանի դիրքերը որպես առանցքային տարանցիկ երկրի՝ հեշտացնելով առևտուրը: Բացի այդ, երկաթուղին նպաստում է Վրաստանի ենթակառուցվածքների զարգացման ավելի լայն նպատակներին՝ բարելավելով կապը տարածաշրջանում և բարելավելով նրա մրցունակությունը որպես տարանցիկ հանգույց:

Թուրքիան կարող է շահել երկաթուղուց՝ ամրապնդելով իր դիրքը՝ որպես Եվրոպայի և Ասիայի միջև կարևոր տրանսպորտային կապ: Երկաթուղին Թուրքիային ուղիղ երկաթուղային կապ է ապահովում Կասպից ծովի տարածաշրջանի և Կենտրոնական Ասիայի հետ՝ շրջանցելով ավանդական ուղիները Ռուսաստանի և Իրանի միջով:

Երկաթուղին ուժեղացնում է Թուրքիայի դերը՝ որպես տարանցիկ միջանցք Եվրոպայի և Ասիայի միջև փոխադրվող ապրանքների համար՝ աջակցելով տարածաշրջանային լոգիստիկ հանգույց դառնալու նրա հավակնություններին: Այն նաև ընդլայնում է Թուրքիայի տնտեսական կապերը Ադրբեջանի և Վրաստանի հետ՝ խթանելով ավելի մեծ համագործակցություն:

Իսկ խոսելով երկաթուղու տարածաշրջանային նշանակության մասին, պետք է նշենք, որ Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին ունի ավելի լայն աշխարհաքաղաքական ազդեցություն, մասնավորապես Հարավային Կովկասի տարածաշրջանի համատեքստում: Այն նպաստում է տարածաշրջանային կայունությանը և համագործակցությանը՝ խթանելով տնտեսական ինտեգրումը և ընդլայնելով տարածաշրջանի երկրների միջև կապը:

Երկաթուղին նպաստում է եվրասիական տրանսպորտային ավելի լայն ցանցի զարգացմանը՝ հեշտացնելով առևտուրն ու տարանցումը Եվրոպայի, Ասիայի և Մերձավոր Արևելքի միջև: Այն համահունչ է Եվրասիական մայրցամաքում ընդգրկող անխափան տրանսպորտային միջանցք ստեղծելու տեսլականին:

Ընդհանուր առմամբ, Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու նախագիծը նշանակալի տնտեսական, ռազմավարական և աշխարհաքաղաքական նշանակություն ունի Ադրբեջանի, Վրաստանի, Թուրքիայի և ավելի լայն տարածաշրջանի համար: Այն ուժեղացնում է կապը, նպաստում է տնտեսական զարգացմանը և ամրապնդում է տարածաշրջանային համագործակցությունը՝ նպաստելով Հարավային Կովկասում և նրա սահմաններից դուրս կայունությանն ու բարգավաճմանը:

Եզրակացություն

Այսպիսով, Հարավային Կովկասը մոտենում էր շրջադարձային կետին : Ավելի քան 15 տարի Ադրբեջանը, Վրաստանը և Թուրքիան իրականացրել էին տրանսպորտային նախագծեր, որոնք ընդլայնել էին նրանց համագործակցությունը: Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին նոր քայլ էր այս գործընթացում, որը նպաստում էր ԱՀՊ երկրների միջև համագործակցության ավելի մեծ բազմազանությանը, որը մինչ այժմ սահմանափակվում էր էներգետիկ հարցերով: Սակայն Ռուսաստանի վճռական արձագանքը 2008 թվականի օգոստոսին Հարավային Օսիայի վրա Վրաստանի հարձակմանը ցույց տվեց, որ Ռուսաստանն այլևս չի հանդուրժի հետխորհրդային տարածքում իր ազդեցության որևէ խաթարում: Բաքվի, Անկարայի և Թբիլիսիի առջև դրված էր երկու տարբերակ՝ այն կարող էր շարունակել մեկուսացնել Հայաստանը և խաթարել Ռուսաստանի ազդեցությունը, բայց պատրաստվել ավելի վճռական արձագանքի, կամ կարող էր շարունակել իր ռեգիոնալացումը՝ միաժամանակ փորձելով Հայաստանին ներգրավել տարածաշրջանային խնդիրների լուծման մեջ: Եվ զարմանալի չէր Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի այցը Երևան, քանի որ Թուրքիան Կովկասում կայունության և համագործակցության հարթակ ստեղծելու կոչ էր արել, ըստ երևույթին դա նշանակում էր, որ Բաքուն, Անկարան և Թբիլիսին ընտրել էին երկրորդ տարբերակը:

Եզրափակելով, կարող ենք ասել, Բաքու-Թբիլիսի-Կարս (ԲԹԿ) երկաթգիծը շատ կարևոր ձեռքբերում է տարածաշրջանային ենթակառուցվածքների զարգացման գործում, որն ունի լայնածավալ ազդեցություն մասնակից երկրների և դրանից դուրս: Իր ստեղծման օրվանից երկաթուղին հայտնվել է որպես կարևոր տրանսպորտային միջանցք՝ հեշտացնելով առևտուրը, ընդլայնելով կապերը և խթանելով տնտեսական զարգացումը Հարավային Կովկասում և Եվրասիական տարածաշրջաններում:

Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի համատեղ ջանքերով Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին հաղթահարել է բազմաթիվ մարտահրավերներ՝ դառնալով տարածաշրջանային համագործակցության և ինտեգրման խորհրդանիշ: Երկաթուղու բացումը նշանակալից իրադարձություն էր տրանսպորտային ծախսերի կրճատման, առևտրային ուղիների դիվերսիֆիկացման և էներգետիկ անվտանգության խթանման գործում՝ Կասպից և Սևծովյան տարածաշրջանների միջև ուղիղ երկաթուղային կապ ապահովելով:

Ստանդեղով Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու ապագայի մասին, պետք է ասենք, որ երկաթուղին հսկայական ներուժ ունի խթանելու հետագա տնտեսական աճը, ներդրումներ ներգրավելու և ավելի մեծ տարածաշրջանային համագործակցություններ ձեռք բերելու համար: Քանի որ ենթակառուցվածքների բարելավումները շարունակվում են, և լոգիստիկ արդյունավետությունը մեծանում է, երկաթուղին պատրաստվում է ավելի ու ավելի առանցքային դեր խաղալ տարածաշրջանի սոցիալ-տնտեսական լանդշաֆտի ձևավորման գործում:

Այնուամենայնիվ, կարևոր է գիտակցել, որ Բաքու-Թբիլիսի-Կարս երկա-

թուղու պոտենցիալ հնարավորությունների լիարժեք իրացումը կախված է մնացած մարտահրավերների հաղթահարումից, այդ թվում՝ լոգիստիկ խոչընդոտները, կանոնակարգման ներդաշնակեցումը և աշխարհաքաղաքական անորոշությունները: Ավելին, կայուն զարգացման պրակտիկային պետք է առաջնահերթություն տրվի, որպեսզի երկաթուղու օգուտները հավասարաչափ բաշխվեն բոլոր շահագրգիռ կողմերի միջև, ներառյալ տեղական համայնքները:

Եզրափակելով, կարող ենք ասել, որ Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին, բացի իր տրանսպորտային նշանակությունից, դարձավ ազգերի միջև համագործակցության խորհրդանիշ: Օգտագործելով ենթակառուցվածքային ներդրումների փոխակերպման ուժը՝ Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին կարող է ծառայել որպես խաղաղության, բարգավաճման և ընդհանուր առաջընթացի կատալիզատոր Հարավային Կովկասում և նրա սահմաններից դուրս:

Օգտագործված գրականության ցանկ

- Azertag: (2017). The Azerbaijan State News Agency. <https://azertag.az/en/>
- BUSINESS INSIDER GEORGIA: (2024). “Известно, когда поезда начнут курсировать по железнодорожной линии Баку–Тбилиси–Карс”. URL: <http://surl.li/pdivvk>
- CNN TURK: (2020). “Увеличена пропускная способность железнодорожной линии Баку–Тбилиси–Карс”. URL: <http://surl.li/yqbmux>
- HABERTURK: (2019). “По железнодорожной линии Баку–Тбилиси–Карс за два года перевезено 275 тысяч тонн грузов”. URL: <http://surl.li/yjgpb>
- News Tbilisi: (2020). “По ЖД Баку–Тбилиси–Карс впервые проехал экспортный поезд, направляющийся в Китай”. URL: <http://surl.li/ienjcz>
- Today.az: (2008). Turkish Transport Minister: “Baku-Tbilisi-Kars not Meant to Exclude Armenia”, September 13, 2008 URL: <http://www.today.az/news/politics/47519.html> (Մուտք՝ 26.02.2024)
- Dudnik, A. (2013). “The Baku-Tbilisi-Kars (BTK) railroad project in the geopolitics of the Central Caucasian countries, Turkey, and Russia//THE CAUCASUS & GLOBALIZATION. Vol. 7. Issue 1-2. էջ 65-73:
- Regional Post: (2017). “Baku-Tbilisi-Kars railway officially opened”. URL: <https://www.regionalpost.org/en/articles/baku-tbilisi-kars-railway-officially-opened.html>
- TURKPA: (2017). “The opening ceremony of the Baku-Tbilisi-Kars railway”. URL: <https://turkpa.org/news/671-the-opening-ceremony-of-the-baku-tbilisi-kars-railway>
- Wander-Lush: (2024). “Everything You Need to Know About the Baku Tbilisi Kars Railway”. URL: <https://wander-lush.org/baku-tbilisi-kars-railway-train/>

References

- Azertag: (2017). The Azerbaijan State News Agency. <https://azertag.az/en/> (In Eng.)
- BUSINESS INSIDER GEORGIA: (2024). “Известно, когда поезда начнут курсировать по железнодорожной линии Баку–Тбилиси–Карс” [It is known when trains will start

- running on the Baku–Tbilisi–Kars railway line]. URL: <http://surl.li/pdivvk> (In Russ.)
- CNN TURK: (2020). “*Uvelichena propusknaya sposobnost zheleznodorozhnoy linii Baku–Tbilisi–Kars*” [The capacity of the Baku–Tbilisi–Kars railway line has been increased]. URL: <http://surl.li/yqbmux> (In Russ.)
- HABERTURK: (2019). “*Po zheleznodorozhnoy linii Baku–Tbilisi–Kars za dva goda perevezeno 275 tysyach tonn gruzov*” [275 thousand tons of cargo were transported along the Baku–Tbilisi–Kars railway line in two years]. URL: <http://surl.li/yjgpab> (In Russ.)
- News Tbilisi: (2020). “*Po ZhD Baku–Tbilisi–Kars vpervye proekhal eksportnyy poezd, napravlyayushchiysya v Kitay*” [An export train heading to China traveled along the Baku–Tbilisi–Kars railway for the first time]. URL: <http://surl.li/ienicz> (In Russ.)
- Today.az: (2008). Turkish Transport Minister: “Baku–Tbilisi–Kars not Meant to Exclude Armenia”, September 13, 2008 URL: <http://www.today.az/news/politics/47519.html> (In Eng.)
- Dudnik, A. (2013). “The Baku–Tbilisi–Kars (BTK) railroad project in the geopolitics of the Central Caucasian countries, Turkey, and Russia// *THE CAUCASUS & GLOBALIZATION*. Vol. 7. Issue 1–2. Eј 65–73: (In Eng.)
- Regional Post: (2017). “BAKU–TBILISI–KARS RAILWAY OFFICIALLY OPENED”. URL: <https://www.regionalpost.org/en/articles/baku-tbilisi-kars-railway-officially-opened.html> (In Eng.)
- TURKPA: (2017). “*The opening ceremony of the Baku–Tbilisi–Kars railway*”. URL: <https://turkpa.org/news/671-the-opening-ceremony-of-the-baku-tbilisi-kars-railway> (In Eng.)
- Wander–Lush: (2024). “*Everything You Need to Know About the Baku Tbilisi Kars Railway*”. URL: <https://wander-lush.org/baku-tbilisi-kars-railway-train/> (In Eng.)

Анаит Серобян

*Соискатель кафедры политологии Ереванского
государственного университета
Эл. адрес: anahitserobyana99@gmail.com*

ЗНАЧЕНИЕ И ЭКСПЛУАТАЦИОННЫЕ ПРЕИМУЩЕСТВА ЖЕЛЕЗНОЙ ДОРОГИ БАКУ–ТБИЛИСИ–КАРС

В статье мы обсуждаем важность и значение железной дороги Баку–Тбилиси–Карс, которая беспрепятственно соединяет города Баку, Тбилиси и Карс. Мы анализируем геополитические последствия железной дороги Баку–Тбилиси–Карс, принимая во внимание ее роль в усилении стратегического положения стран–участниц и содействии региональной интеграции. Основная цель исследования темы – изучить и подчеркнуть значение железной дороги Баку–Тбилиси–Карс как преобразующего инфраструктурного проекта, а также углубиться в исторический контекст железной дороги, ее эксплуатационные сложности и геополитические последствия, показав ее роль в укреплении региональная связь, содействие экономическому развитию и продвижению Азербайджана, Грузии, а также развитию дипломатического сотрудничества

между Турцией.

Ключевые слова: Железная дорога Баку–Тбилиси–Карс, инфраструктурный проект, стратегический транспортный маршрут, геополитические последствия, Южный Кавказ, транспортная сеть, региональная связь.

Anahit Serobyan

Ph.D. student of Political Science Department at

Yerevan State University

Email: anahitserobyan99@gmail.com

THE IMPORTANCE AND OPERATIONAL ADVANTAGES OF THE BAKU–TBILISI–KARS RAILWAY

In the article, we discuss the importance and significance of the Baku–Tbilisi–Kars railway, which seamlessly connects the cities of Baku, Tbilisi and Kars. We analyze the geopolitical implications of the Baku–Tbilisi–Kars railway, taking into account its role in enhancing the strategic position of participating countries and promoting regional integration. The main purpose of the topic study is to explore and highlight the significance of the Baku–Tbilisi–Kars railway as a transformative infrastructure project, as well as to delve into the railway’s historical context, operational complexities and geopolitical implications, showing its role in strengthening regional connectivity, promoting economic development and promoting Azerbaijan, Georgia and in the development of diplomatic cooperation between Turkey.

Key words: Baku–Tbilisi–Kars railway, infrastructure project, strategic transport route, geopolitical consequences, South Caucasus, transport network, regional connection.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2024թ. մայիսի 13-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2024թ. մայիսի 17-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2024թ. հունիսի 11-ին:

Կարլեն Խաչատրյան

*Երևանի պետական համալսարանի
Տնօրենագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան,
յնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ
Էլ. հասցե՝ karlen.khachatryan@ysu.am*

Գուրգեն Գասպարյան

*Երևանի պետական համալսարանի
Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի
ամբիոնի սահպրենտ, յնտեսական գիտությունների թեկնածու,
Էլ. հասցե՝ gurgengasparyan@ysu.am*

DOI: 10.53614/18294952-2024.1-78

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՐԱԿԸ ՈՐՊԵՍ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԽՐՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Վերջին տասնամյակում պետության կայացվածության մասին ուսումնասիրությունները բավականին արդիական են դարձել: Հետազոտողներին և քաղաքականություն մշակողներին հետաքրքրում է պետության կայացվածության հիմքում ընկած գործոնները և փխրուն պետության հաղթահարման հիմնական ուղենիշերը: Մասնագետները Պետության փխրունության համաթիվը օգտագործում են աշխարհի տարբեր երկրների կայունության մակարդակը որոշելու համար: Հոդվածում ուսումնասիրվել է փխրուն պետության տեսական հիմնահարցերը, ներկայացվել են Պետության փխրունության համաթիվն իր 12 ենթացուցիչներով և պետության կառավարման որակը բնութագրող վեց հիմնական ցուցիչները: Էկոնոմետրիկ գործիքների կիրառմամբ գնահատվել է Պետության փխրունության համաթիվի վրա Պետական կառավարման որակի ցուցիչների ազդեցությունը: Բացահայտվել է, որ Պետությո-

յան փխրունության համաթվի վրա նշանակալի ազդեցություն ունեն պետական կառավարման որակի վեց ցուցանիշներից չորսը: Մոդելից պարզ է դարձել, որ այդ չորս ցուցիչները 88 տոկոսով բացատրում են Պետության փխրունության համաթվի տատանողականության մակարդակը: Ընդ որում, կառավարման արդյունավետության և քաղաքական կայունության ցուցիչների ազդեցությունը ամենամեծն է, ուստի քաղաքականություն մշակելիս հատկապես պետք է իրականացնել այնպիսի ծրագրեր, որոնք կհանգեցնեն այդ ցուցիչների գնահատականի բարձրացման:

Հիմնաբառեր. պետության կայացածություն, ապաֆունկցիոնալ պետություն, պետական կառավարում, փխրուն պետություն, կառավարման որակ, պետության փխրունության համաթիվ, ռեգրեսիոն վերլուծություն

Ներածություն

Պետության փխրունության համաթիվը, որը նախկինում հայտնի էր որպես Չկայացած պետությունների համաթիվ, լայնորեն օգտագործվում է աշխարհի երկրների կայունության և խոցելիության աստիճանը գնահատելու համար: Այն հնարավորություն է տալիս պատկերացում կազմել երկրի քաղաքական, սոցիալական, տնտեսական և անվտանգային խնդիրների, մարտահրավերների մասին: Պետության փխրունության համաթիվը վճռորոշ դեր է խաղում հակամարտությունների վերլուծության և խաղաղության կառուցման ոլորտում՝ առաջարկելով պետության փխրունության համապարփակ գնահատում: Թեև այն ունի իր սահմանափակումները, համաթիվը տալիս է արժեքավոր պատկերացումներ, որոնք կարող են տեղեկացնել քաղաքականությանը և գործելակերպին հակամարտությունները կանխելու և կայուն զարգացումը խթանելու ջանքերում:

Պետության փխրունության համաթիվը արժեքավոր գործիք է՝ գնահատելու և լուծելու պետության փխրունության խնդիրները: Տրամադրելով փխրունության չափման և մոնիթորինգի համակարգված շրջանակ՝ համաթիվը քաղաքականություն մշակողներին, պրակտիկ աշխատողներին և հետազոտողներին հնարավորություն է տալիս բացահայտել խնդրահարույց ոլորտները, հետևել ժամանակի ընթացքում դրանց միտումներին և մշակել նպատակային միջամտություններ՝ ապահովելու ճկունություն և խթանելու կայունությունը:

Համաշխարհային կառավարման ցուցիչները վճռորոշ դեր են խաղում զարգացման աջակցության և քաղաքականության վերլուծության ոլորտում՝ առաջարկելով կառավարման որակի համապարփակ գնահատում: Չնայած որոշ սահմանափակումներին, ցուցանիշները տալիս են արժեքավոր պատկերացումներ՝ քաղաքականության զարգացման և ներառական աճին նպաստելու ջանքերի վերաբերյալ: Պետության կառավարման որակը բնութագրող ցուցիչները հնարավորություն են տալիս պատկերացում կազմել երկրում կառավարման վիճակի, առկա խնդիրների և զարգացման միտումների վերաբերյալ:

Հոդվածում խնդիր է դրվել բացահայտել պետության փխրունության վրա պետական կառավարման որակի ազդեցությունը:

Մեթոդ

Հետազոտության ընթացքում կիրառվել են տվյալների հավաքագրման, վերլուծության և համադրության, տեսական և գործնական նյութի պատմական և տրամաբանական վերլուծությունների զուգակցման, համեմատական վերլուծության, համադրությունների և դատողությունների, վարկածների առաջադրման, մաթեմատիկական մոդելավորման մեթոդները: Մասնավորապես՝ օգտագործվել է բազմակի ռեգրեսիոն վերլուծություն՝ Ուայթի ձգգրտված ստանդարտ սխալների կիրառմամբ: Մոդելի համար ստուգվել են Գաուս-Մարկովի պայմանները, և ցույց է տրվել, որ ստացվել են անշեղ և ունակային գնահատականներ:

Ապաֆունկցիոնալ պետության հայեցակարգային շրջանակը

Ապաֆունկցիոնալ (չկայացած, փխրուն) պետությունների շեղված բնութագրերը բավականին հանգամանորեն վերլուծվել են երեք տարբեր գիտնականների՝ Զ. Միգդալի (1988), Ռ. Զեքսոնի (1993) և Ս. Հանթինգթոնի (2006) աշխատություններում: Ընդ որում, յուրաքանչյուր հեղինակ իր պատկերացումները հիմնավորել է՝ օգտագործելով գիտական մոտեցում և համապատասխան կառուցակարգեր: Այս երեք հեղինակները միմյանցից անկախ մեկնաբանում և գնահատում են ուսումնասիրվող խնդիրը մեթոդաբանական միատեսակությամբ՝ հղում անելով իդեալական-տիպիկ պետականության դրույթներին: Հետագայում մեկ այլ հետազոտող Գրեֆթաթը ներկայացնում է ապաֆունկցիոնալ պետության հայեցակարգը (Greffrath, 2012, էջ 281)՝ առավել մեծ ուշադրություն դարձնելով դրա տեսական հիմքերին:

Չկայացած պետության հայեցակարգում, ոչ բացահայտ առկա է նորմալից շեղվելու միտումը, հետևաբար, դա պետություն է, որը դադարել է գործել ընդունված նորմերին համապատասխան, պետություն, որը չի կարող հասնել որոշակի նպատակների կամ՝ պետություն, որն ըստ որոշակի հատկանիշների անկարողունակ է: Այս դատողությունները, թեպետ, ընդունվել են որպես Գրեֆթաթի ուսումնասիրության ելակետ, այնուամենայնիվ, նա նկատում է, որ առաջանում են որոշակի վիճահարույց դրույթներ. օրինակ, վիճարկվում է այդ ձախողման, թերության, շեղման կամ ապաֆունկցիոնալության բնույթը: Դա հանգեցրել է նրան, որ պետության ձախողմանն առնչվող գործնականում յուրաքանչյուր հրապարակում հանգեցվում է պետության դեֆիցիտի եզակի և յուրօրինակ ակտանիշներին, որոնցից յուրաքանչյուրը նկարագրվում է ստեղծագործորեն և յուրօրինակ ձևով (Englebert, 1997, էջ 767-775):

«Չկայացած պետություն» եզրույթը չի նշանակում ձգգրիտ սահմանված և դասակարգելի իրավիճակ, այլ, ավելի շուտ, այն հանդես է գալիս որպես երևույթ բնութագրելու համար մի ընդարձակ հասկացություն, որը կարող

է տարբեր կերպ մեկնաբանվել: «Չկայացած պետություն» (Failed State) եզրույթը համեմատաբար նոր է, առաջին անգամ գործածվել է 1990-ականների սկզբին: Ջ. Հելմանը և Ս. Ռաթները իրենց հոդվածում գրում են. «Հայիթիից արևմտյան կիսագնդում, մինչև Հարավսլավիայի մնացորդները Եվրոպայում, Սոմալիից, Սուդանից և Աֆրիկայում Լիբերիայից մինչև Կամբոջա՝ Հարավարևելյան Ասիայում, ի հայտ է գալիս անհանգստացնող նոր երևույթ. չկայացած ազգային պետությունը, որը բացարձակապես ի վիճակի չէ իրեն որպես միջազգային հանրության անդամ պահելու...Թեև զարգացող աշխարհի տառապանքը մեղմելը վաղուց գլխավոր խնդիր է, ձախողված պետությունների փրկությունը նոր, և շատ առումներով տարբերվող մարտահրավեր է» (Helman, Ratner, 1993, էջ 3-20): Ընդ որում, հեղինակները գտնում են, որ թեև «մարդու իրավունքների (ներառյալ՝ կյանքի իրավունքը) զանգվածային ոտնահարումները բավական անհանգստացնող են, սակայն այդ պետություններին օգնելու անհրաժեշտությունն ավելի կարևոր է դառնում այն փաստով, որ նրանց խնդիրները հակված են տարածվելու»: Ջ. Հելմանը և Ս. Ռաթներն առանձնացնում են պետությունների երեք խումբ, որոնց գոյատևումը վտանգված է.

1) *չկայացած պետություններ*, ինչպիսիք են Բոսնիան, Կամբոջան, Լիբերիան և Սոմալին, որոնց կառավարման կառույցները խաթարվել են հանգամանքների ազդեցությամբ,

2) *ձախողված պետություններ*, ինչպիսիք են Եթովպիան, Վրաստանը և Զաիրը, որտեղ փլուզումը մոտ չէ, բայց կարող է տեղի ունենալ մի քանի տարվա ընթացքում,

3) *նորանկախ պետություններ*՝ նախկին Հարավսլավիայի և Խորհրդային Միության տարածքներում ձևավորված երկրներ, որոնց կենսունակությունը դժվար է գնահատել:

Ցյուրիխյան համալսարանի պրոֆեսոր Դ. Թյուրերը գրում է, որ ներկայումս գոյություն ունեցող «չկայացած պետությունները», ամենից առաջ, «երրորդ աշխարհի» երկրներն են, որոնց վրա ազդել են մի շարք պատմական և աշխարհաքաղաքական գործոններ (Thurer, 1999, էջ 734): Քաղաքական և իրավական տեսանկյունից՝ Դ. Թյուրերը «չկայացած պետությունը» սահմանում է որպես «պետություն, որը, թեև պահպանել է իրավակարողությունը, այնուամենայնիվ, բոլոր գործնական նպատակների համար կորցրել է դա իրականացնելու կարողությունը»:

Պետության փխրունության համաթիվը (Fragile States Index) և դրա գնահատման մեթոդաբանությունը

Պետության փխրունության համաթիվը (FSI) առաջին անգամ ներդրվել է Խաղաղության հիմնադրամի կողմից 2005 թվականին՝ որպես պետությունների փլուզման կամ հակամարտությունների խոցելիության գնահատման միջոց: Ի սկզբանե անվանվել է «Ձախողված պետությունների համաթիվ» և նպատակ է ունեցել ընդգծել այն մարտահրավերները, որոնց բախվում են

թույլ և անկայուն պետությունները հակամարտությունների, պատերազմների ժամանակ: Տարիների ընթացքում համաթիվը մի քանի անգամ վերանայվել է՝ բարելավվելով գնահատման մեթոդաբանությունը և հաշվարկման ճշգրտությունը: 2014 թվականին այն վերանվանվել է որպես Պետության փխրությունության համաթիվ՝ առավել հստակ ընդգծելու, որ այստեղ էականը փխրությունության, այլ ոչ թե ձախողման վրա կենտրոնանալն է: Այս ցուցանիշի առանցքային յուրահատկությունը բազմաչափ մոտեցումն է, որը թույլ է տալիս հաշվի առնել պետության փխրությունության տարբեր գործոններ (Stewart, 2002, էջ 20–34):

Պետության փխրությունության համաթիվն օգտագործում է բազմաչափ մոտեցում՝ գնահատելու պետության փխրությունները՝ հաշվի առնելով տարբեր քաղաքական, սոցիալական, տնտեսական և անվտանգային 12 ենթացուցիչներ:

<p>Համախմբվածության ցուցիչներ</p>	<ul style="list-style-type: none"> • Անվտանգության ապարատ (Security Apparatus): • Խմբավորված էլիտաներ (Factionalized Elites) • Խմբային բողոք (Group Grievance):
<p>Տնտեսական ցուցիչներ</p>	<ul style="list-style-type: none"> • Տնտեսական անկում (Economic Decline): • Անհամաչափ տնտեսական զարգացում (Uneven Economic Development) • Արտագաղթ և ուղեղների արտահոսք (Human Flight and Brain Drain)
<p>Քաղաքական ցուցիչներ</p>	<ul style="list-style-type: none"> • Պետության լեգիտիմություն (State Legitimacy) • Հանրային ծառայություններ (Public Services) • Մարդու իրավունքներ և օրենքի գերակայություն (Human Rights and Rule of Law)
<p>Սոցիալական ցուցիչներ</p>	<ul style="list-style-type: none"> • Ժողովրդագրական ճնշում (Demographic Pressures) • Փախստականներ և հարկադրված տեղահանվածներ (Refugees and Internally Displaced Persons) • Արտաքին միջամտություն (External Intervention)

Գծապատկեր 1. Պետության փխրությունության համաթիվի ցուցիչներն ու ենթացուցիչները¹:

Համախմբվածության ցուցիչներն են.

- *Անվտանգության ապարատ (Security Apparatus)*: Այս ցուցիչը դիտարկում է պետության անվտանգության սպառնալիքները, ինչպիսիք են ռմբակոծությունները, հարձակումները և մարտերի հետ կապված մահերը, ապստամբությունները, հեղաշրջումները կամ ահաբեկչությունը: Անվտանգության ապարատը նաև հաշվի է առնում լուրջ հանցավոր գործոնները, ինչպիսիք են կազմակերպված հանցավորությունը և սպանությունները, ինչպես նաև ներքին անվտանգության նկատմամբ քաղաքացիների վստահությունը:
- *Խմբավորված էլիտաներ (Factionalized Elites)*: Այս ցուցիչը դիտարկում է պետական ինստիտուտների մասնատվածությունը էթնիկ, դասակարգային, կլանային, ռասայական կամ կրոնական գործոններով

¹ Կազմվել է հեղինակների կողմից:

պայմանավորված, ինչպես նաև իշխող վերնախավերի միջև փոխհարաբերությունները: Այն չափում է իշխանության համար պայքարի սրությունը, քաղաքական մրցակցությունը, քաղաքական փոփոխությունները, և ընտրական գործընթացների առկայության դեպքում դրանց նկատմամբ վստահության աստիճանը:

- *Խմբային բողոք (Group Grievance):* Այս ցուցիչը կենտրոնանում է հասարակության տարբեր խմբերի միջև տարաձայնությունների և հակասությունների վրա, մասնավորապես՝ սոցիալական կամ քաղաքական բնութագրերի վրա հիմնված բաժանումների և ծառայությունների կամ ռեսուրսների հասանելիության և քաղաքական գործընթացում ընդգրկվելու հարցում նրանց դերի վրա:

Տնտեսական ցուցիչներն են.

- *Տնտեսական անկում (Economic Decline):* Այս ցուցիչը հաշվի է առնում երկրի ներսում տնտեսական անկման հետ կապված գործոնները: Օրինակ, ցուցանիշը դիտարկում է տնտեսական անկման հիմնական օրինակաչափությունները, չափվում է մեկ շնչի հաշվով եկամտի, համախառն ազգային արդյունքի, գործազրկության մակարդակի, գնաձի, արտադրողականության, պարտքի, աղքատության մակարդակի կամ բիզնեսի սնանկության միջոցով:
- *Անհամաչափ տնտեսական զարգացում (Uneven Economic Development):* Այս ցուցանիշը հաշվի է առնում անհավասարությունը տնտեսությունում՝ անկախ տնտեսության փաստացի վիճակից: Օրինակ, ցուցանիշը դիտարկում է կառուցվածքային անհավասարությունը, որը հիմնված է խմբային հատկանիշների վրա (օրինակ՝ ռասայական, էթնիկական, կրոնական կամ ինքնության այլ խմբի) կամ հիմնված է կրթության, տնտեսական կարգավիճակի կամ տարածաշրջանի վրա (օրինակ՝ քաղաք-գյուղ բաժանումը):
- *Արտագաղթ և ուղեղների արտահոսք (Human Flight and Brain Drain):* Այս ցուցիչը հաշվի է առնում արտագաղթի (տնտեսական կամ քաղաքական պատճառներով) տնտեսական ազդեցությունը և այն հետևանքները, որոնք այն կարող է ունենալ երկրի զարգացման վրա: Մի կողմից, դա կարող է ներառել միջին խավի կամավոր արտագաղթը, մասնավորապես՝ բնակչության տնտեսապես արտադրողական հատվածների (ձեռնարկատերերը, հմուտ աշխատողները) իրենց հայրենի երկրում տնտեսական վիճակի վատթարացման պատճառով կամ ավելի լավ հնարավորությունների ակնկալիքով երկիրը լքելը: Մյուս կողմից, դա կարող է ներառել մասնագետների կամ մտավորականների հարկադիր տեղահանումը, ովքեր փախչում են իրենց երկրից հալածանքների կամ բռնաճնշումների պատճառով:

Քաղաքական ցուցիչներն են.

- *Պետության լեգիտիմություն (State Legitimacy):* Այս ցուցանիշը հաշվի է առնում իշխանության ներկայացուցչականությունն ու բաց լինելը և նրա փոխհարաբերությունները քաղաքացիների հետ: Ցուցանիշը

դիտարկում է պետական ինստիտուտների և գործընթացների նկատմամբ բնակչության վստահության մակարդակը և գնահատում է ազդեցությունը, երբ այդ վստահությունը բացակայում է, որը դրսևորվում է զանգվածային հանրային ցույցերի, քաղաքացիական անհնազանդության կամ զինված ապստամբությունների աճի միջոցով:

- *Հանրային ծառայություններ (Public Services):* Այս ցուցիչը վերաբերում է հիմնական պետական գործառնություններին և պետության կողմից հասարակությանը մատուցվող առանցքային ծառայությունների առկայությանը: Մի կողմից, դա կարող է ներառել այնպիսի ծառայությունների մատուցում, ինչպիսիք են առողջապահությունը, կրթությունը, ջրամատակարարումը և ջրահեռացումը, տրանսպորտային ենթակառուցվածքը, էլեկտրաէներգիան, ինտերնետը և կապը: Մյուս կողմից, այն կարող է ներառել պետության կարողությունը՝ պաշտպանելու իր քաղաքացիներին, օրինակ՝ արտաքին սպառնալիքներից, ահաբեկչությունից և բռնությունից:
- *Մարդու իրավունքներ և օրենքի գերակայություն (Human Rights and Rule of Law):* Այս ցուցիչը դիտարկում է թե որքանով են մարդու հիմնարար ազատությունները և իրավունքները պաշտպանված: Ցուցանիշն ուսումնասիրում է, թե արդյոք առկա են իրավական, քաղաքական և սոցիալական իրավունքների ոտնահարում, ներառյալ անհատների, խմբերի և հաստատությունների իրավունքները (օրինակ՝ մամուլի նկատմամբ ոտնձգություն, դատական համակարգի քաղաքականացում, քաղաքական հակառակորդների ճնշումներ):

Սոցիալական ցուցիչներն են.

- *Ժողովրդագրական ճնշում (Demographic Pressures):* Այս ցուցիչը հաշվի է առնում պետության վրա ճնշումները, որոնք բխում են հենց բնակչությունից կամ շրջակա միջավայրից: Օրինակ՝ ցուցանիշը չափում է բնակչության ճնշումը՝ կապված սննդի ապահովման, ջրի և կենսական այլ ռեսուրսների հասանելիության մակարդակը, ինչպես նաև հիվանդությունների և համաձարակների տարածվածության աստիճանը:
- *Փախստականներ և հարկադրված տեղահանվածներ (Refugees and Internally Displaced Persons):* Այս ցուցիչը չափում է ճնշումը պետությունների վրա, որն առաջացել է սոցիալական, քաղաքական, բնապահպանական կամ այլ պատճառներով խոշոր համայնքների հարկադիր տեղահանման հետևանքով, չափելով տեղահանվածությունը երկրի ներսում, ինչպես նաև փախստականների հոսքը դեպի այլ երկրներ: Ցուցանիշը չափում է փախստականներին ըստ ապաստանի երկրների՝ հիմք ընդունելով փաստը, որ բնակչության ներհոսքը կարող է լրացուցիչ ճնշում գործադրել հանրային ծառայությունների վրա և, երբեմն, կարող է ավելի լայն մարդասիրական և անվտանգության մարտահրավերներ ստեղծել ընդունող պետության համար, եթե այդ պետությունը չունի կլանող կարողություններ և համապա-

տասխան ռետուրսներ:

- *Արտաքին միջամտություն (External Intervention)*: Այս ցուցիչը հաշվի է առնում արտաքին դերակատարների ազդեցությունը պետության գործունեության վրա: Մի կողմից, արտաքին միջամտությունը կենտրոնանում է արտաքին դերակատարների ներգրավվածությանը անվտանգային հարցերին, օրինակ՝ ինչպես գաղտնի, այնպես էլ բացահայտ պետության ներքին գործերին միջամտությունը: Մյուս կողմից, արտաքին միջամտությունը կենտրոնանում է նաև արտաքին դերակատարների, այդ թվում՝ վերազգային կազմակերպությունների տնտեսական ներգրավվածության վրա՝ լայնածավալ վարկերի, զարգացման ծրագրերի կամ արտաքին օգնության, բյուջետային շարունակական աջակցության, ֆինանսների վերահսկողության կամ պետության տնտեսական քաղաքականության կառավարման միջոցով՝ առաջացնելով տնտեսական կախվածություն:

Յուրաքանչյուր ցուցանիշ գնահատվում է՝ որակական և քանակական ցուցիչների միջոցով, ինչպիսիք են փորձագիտական գնահատումները, հարցումները և տվյալների երկրորդական աղբյուրները: Այնուհետև այս միավորները համախմբվում են՝ յուրաքանչյուր երկրի համար բաղադրյալ միավորը հաշվարկելու համար, ինչն էլ որոշում է նրա վարկանիշը համաթվի վրա: Թեև մեթոդաբանությունը ժամանակի ընթացքում զարգացել է, հիմնական շրջանակը մնում է նույնական՝ թույլ տալով պետական փխրունության միտումների վերաբերյալ վերլուծություն իրականացնել:

Պետության փխրունության համաթիվը լայնորեն օգտագործվել է քաղաքականություն մշակողների, հետազոտողների և պրակտիկ մասնագետների կողմից՝ վերլուծելու պետության փխրունության միտումները և մշակելու ռազմավարություններ հակամարտությունների կանխարգելման և խաղաղության կառուցման համար: Նրա հիմնական ուժեղ կողմերից մեկը անկայունության վտանգի տակ գտնվող երկրները բացահայտելու և համապատասխանաբար միջամտությունների առաջնահերթություն տալու կարողությունն է:

Պետության փխրունության համաթիվը կարևոր դերակատարում է ունեցել նաև պետական փխրունության և հակամարտությունների դինամիկայի վերաբերյալ ակադեմիական հետազոտություններում: Գիտնականներն օգտագործել են համաթիվը տեսական շրջանակները փորձարկելու, էմպիրիկ ուսումնասիրություններ իրականացնելու և պետության փխրունության դրդապատճառներն ուսումնասիրելու համար (Fearon, Laitin, 2003, էջ 75-90): Բազմաթիվ գիտնականներ և քաղաքականություն մշակողներ օգտագործել են Պետության փխրունության համաթիվը՝ վերլուծելու պետության փխրունության միտումները և մշակելու հակամարտությունների կանխարգելման և խաղաղության ամրապնդման ռազմավարություններ: Օրինակ, Սմիթը և Լոպեսը պնդում են, որ Պետության փխրունության համաթիվն առաջարկում է համապարփակ շրջանակ՝ հասկանալու պետական փխրունության բարդ դինամիկան՝ հնարավորություն տալով քաղաքականություն մշակողներին

միջամտությունների առաջնահերթություն սահմանել և արդյունավետ բաշխել ռեսուրսները (Smith, Lopez, 2016, էջ 418-437) : Ջոնսը և Բրաունը ընդգծում են այս համաթվի օգտակարությունը պետության փլուզման նախանշանները վաղ հայտնաբերելու և ռիսկերը մեղմելու համար կանխարգելիչ գործողությունների ուղղորդման գործում (Jones, Brown, 2016, էջ 743-758):

Պետության փխրունության համաթիվը շարունակում է զարգանալ և հարմարվել փոփոխվող իրողություններին: Աճում է հետաքրքրությունը համաթիվը լրացնելու որակական հետազոտական մեթոդներով, ինչպիսիք են դեպքերի ուսումնասիրությունը և դաշտային աշխատանքը, որպեսզի ապահովվի պետության փխրունության ավելի մանրամասն և դետալային պատկերացում: Անդրադառնալով այս մարտահրավերներին և կիրառելով նոր մոտեցումներ՝ Պետության փխրունության համաթիվն ունի ներուժ՝ մնալու արժեքավոր գործիք գալիք տարիներին պետության փխրունությունը գնահատելու և կարգավորելու համար:

Պետական կառավարման որակի գնահատման առանձնահատկությունները

Պետական կառավարման որակի գնահատումն իրագործվում է վեց խումբ պարամետրերով (Worldwide Governance Indicator), որոնք են՝

1. *պետական մարմինների հաշվեպահականությունը և բնակչության կարծիքի բնորոշումը (Voice and Accountability)*՝ իշխանության ընտրություններին քաղաքացիների մասնակցության հնարավոր աստիճանը, ինչպես նաև խոսքի ազատության ամկայությունը, միավորումների և ԶԼՄ ազատությունը:
Հիմնաբառեր. բռնի տեղահանված արցախցիներ, արցախցիների սոցիալական խնդիրներ, միգրացիա, բնակարանային ապահովում, հիփոթեքային վարկավորում, վարձակալության գներ:

Ներածություն

Ամբողջ աշխարհում 20-րդ դարի երկրորդ կեսից սկսած նկատվում է միգրացիոն գործընթացի կտրուկ աճ, դրա պատճառները շատ տարբեր կարող են լինել, օրինակ՝ արժանապատիվ կյանքի հնարավորությունների բացակայություն, աղքատություն և գործազրկություն, կոռուպցիա, քաղաքական և ռազմական բախումներ, կլիմայի փոփոխություններ: Մեր երկրում անվտանգության և աղքատության խնդիրների հետ մեկտեղ արտագաղթի խնդիրը եղել է հասարակության ուշադրության էպիկենտրոնում: 1988-ի երրաշարժի, Արցախյան առաջին պատերազմի, անկախացման ճանապարհին սոցիալ-տնտեսական անարդյունավետ վերափոխումների արդյունքում ձևավորված աղքատության պայմաններում 800 հազարից մինչև մեկ միլիոն մարդ Հայաստանից արտագաղթեց, որը բնակչության աշխատանքային միգրացիայի ձևով մինչև այսօր էլ շարունակվում է: 2022 թվականի փետրվարի 24-ին սկսված ռուս-ուկրաինական պատերազմը այս համատեքստում կերպարանափոխեց միգրացիոն գործընթացը Հայաստանում: Հազարավոր ռուսներ տեղափոխվեցին Հայաստան, դրանով իսկ խթանելով տնտեսական ակտիվությունը: Ամեն ինչ կընթանար հարթ և մեր տնտեսությունը կվերափոխվեր ստեղծված նոր իրավիճակում, եթե չլիներ 2023թ. սեպտեմբերի 19-ին Ադրբեյջանի կողմից սանձազերծված պատերազմը, ապա դրան հաջորդած Արցախի կորուստը, և հազարավոր մարդկանց բռնի տեղահանումը: Այժմ, Հայաստանի տնտեսությունը կանգնած է նոր մարտահրավերնի դիմաց: Ջրկվելով հայրենի հողից, չունենալով կացարան և արժանապատիվ աշխատանք մեր հայրենակիցներից շատերը մտածում են արտագաղթի մասին, և այս համատեքստում արտագաղթի կանխարգելման ուղղությամբ համապատասխան միջոցառումների ուսումնասիրությունը չափազանց արդիական է: Հետազոտության հիմնական նպատակն է՝ ուսումնասիրել բռնի տեղահանված արցախցիների ներկա սոցիալական խնդիրները և առաջարկել այդ խնդիրների լուծման ուղղությամբ քայլեր սեփական առաջարկների և այլ երկրների փորձի կիրառման համատեքստում:

Գրականության ակնարկ

Միգրացիայի հիմնախնդիրները միշտ եղել են գիտական տարբեր ուղղությունների (քաղաքագիտություն, տնտեսագիտություն, ժողովրդագրություն) հետազոտողների հետաքրքրության շրջանակում: 20-րդ դարի 2-րդ կեսից հետո, կապված գլոբալացման գործընթացի հետ, միգրացիոն գործընթացը սկսեց մեծ թափ հավաքել ամբողջ աշխարհում: Մետաղադրամի

մի կողմում 3-րդ աշխարհի երկրներն էին, որտեղ արտագաղթը դարձել էր անվտանգությանը սպառնացող շատ լուրջ խնդիր, իսկ մյուս կողմում՝ զարգացած երկրները, որի քաղաքացիների հարկերի հաշվին հովանավորվում էին փախստականները և կարմրեցնում տեղի քաղաքական գունապնակում առկա ներկերը:

1988 թվականից Խորհրդային Հայաստանում սկսված, այնուհետև Հայաստանի անկախ հանրապետության ժառանգած արտագաղթի կտրուկ աճի հետևանքով, մեր երկրում միգրացիայի տենդեցները ուսումնասիրելու անհրաժեշտություն առաջացավ: Ա. Խ. Կարապետյանը, Ս. Ա. Կարապետյանը, ակադեմիկոս Վ. Ե. Խոջաբեկյանը, Լ. Մ. Դավթյանը, Գ. Եգանյանը, Կ. Կոյունջյանը և շատ ուրիշների կողմից կատարվեց Խորհրդային Հայաստանի ժողովրդական զարգացումների, մասնավորապես աշխատուժի միգրացիայի ուսումնասիրություն (Խոջաբեկյան, 2001, էջ 47-50): 2012 թ. լույս տեսավ «Միգրացիան և հմտությունները, Հայաստանի ազգային զեկույցը» Եվրոպական կրթական հիմնադրամի կողմից, որտեղ պատմականորեն նկարագրվում է ՀՀ միգրացիոն խնդիրների արմատները և դրա պատմական զարգացումը: 2013 թվականին հրատարակվեց պրոֆ. Հ. Սարգսյանի, Ք. Անտոնյանի և Կ. Խաչատրյանի «Միգրացիա, միտումներ և հետևանքներ» աշխատանքը, որտեղ ուսումնասիրվեց միգրացիան դրական և բացասական լույսի ներքո (Սարգսյան, 2013, էջ 10-12):

Միգրացիայի հիմնախնդիրներին նվիրված հետազոտություն է իրականացվել Տ. Վարդանյանի կողմից՝ կապված ռուս-ուկրաինական հակամարտության համապատկերում Հայաստան միգրացիոն հոսքերի հետ (Վարդանյան, 2022, էջ 2-5):

Միջազգային միգրացիայի շուրջ գլոբալ մարտահրավերների և հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ են իրականացվել Զ. Թադևոսյանի (Թադևոսյան, 2023, էջ 3-4), Տ. Մկրտչյանի (Մկրտչյան, 2023, էջ 8-9) կողմից:

Մարդկային կապիտալի վերարտադրության համատեքստում միգրացիոն վերլուծություն է արվել Գ. Ղարիբյանի, Ա. Խառատյանի, Ռ. Իսահակյան կողմից (Ղարիբյան, 2017, էջ 87-93):

Հետազոտության մեթոդաբանություն

Չնայած տարբեր երկրներում արտագաղթի վերաբերյալ հետազոտությունները բազմազան են, դրա շարժառիթները, տնտեսական ազդեցությունը, սոցիալ-քաղաքական հետևանքները հասկանալու և գնահատելու համար կա տեղեկատվության սահմանափակություն: Ուստի, միգրացիայի տեղային հիմնախնդիրները հետազոտելու տեսանկյունից նպատակահարմար է նկարագրական և համեմատական վերլուծությունների մեթոդոլոգիան:

Հետազոտության ընթացքում կիրառելի մեթոդներից մեկը եղել է ինդուկցիայի մեթոդը, ըստ որի ուսումնասիրվել են տարբեր երկրներում միգրացիայի պատճառները և պետության կողմից դրա կանխարգելման հետ կապված հաջողված քաղաքականությունը:

Ուսումնասիրության ընթացքում, վերլուծության միջոցով, թիրախավորվել են բռնի տեղահանված արցախցիների առանցքային խնդիրները կապված գործազրկության, բնակարանային ապահովման, ոչ բավարար ֆինանսական աջակցության հետ: Թիրախավորումից հետո գնահատվել է առկա իրավիճակը և դրա դինամիկան վիճակագրական հաշվետվությունների ուսումնասիրության միջոցով և առաջարկվել են լուծումներ:

Բռնի տեղահանված արցախցիների սոցիալական վիճակը և հնարավոր միգրացիայի միտումը բացատրելու համար կատարվել է սոցիոլոգիական հարցում: Հարցումը կատարվել է Google forms-ի միջոցով օնլայն տարբերակով: Այն իրականացվել է անանուն ձևով, նպատակ ունենալով բացատրել մարդկանց իրական մտահոգությունները ապագայի վերաբերյալ և հնարավոր միգրացիայի պատճառները: Հարցաթերթիկը բաղկացած է հարցվողի սեռի, տարիքի, կրթության, ծննդավայրի, Արցախում ապրելու նպատակի, Արցախում սեփական գույքի և աշխատանքի առկայության, ՀՀ-ն տեղափոխվելուց հետո բնակության վայրի, կացարանի վարձավճարի, զբաղվածության, միգրացիայի ցանկության, հնարավոր միգրացիայի վայրի, և հետ պահող գործոնի վերաբերյալ: Հարցման մասնակիցները 2023 թ. սեպտեմբերի 24-ից հետո եկած և ՀՀ-ում բնակություն հաստատած չափահաս Արցախցիներ են: Ընդամենը հարցմանը մասնակցել է 709 անձ, իսկ տվյալների հավաքագրումն իրականացվել է 21.12.2023–02.10.2024թթ. ժամանակահատվածում: Հարցվածների մեծ մասը՝ 74,6%-ը կանայք են, իսկ մնացած 25,4 %-ը տղամարդիկ:

Արդյունքներ

Հայ ժողովուրդը իր բազմամյա պատմության ընթացքում ունեցել է շատ ու շատ օրհասական պահեր և 2023թ. սեպտեմբերի 19-ը հենց այդ պահերից մեկն էր: Արցախի Հանրապետության կորուստը և մոտ 120 հազար մարդկանց բռնի տեղահանումը հայոց պատմության ամենաբարդ էջերից մեկն է, սակայն, ցավոք սրտի, դա միայն այսբերգի երևացող մասն է: Այս ողբերգությունը իր հետ բերելու է շատ լուրջ սոցիալ-տնտեսական խնդիրների շրջանակ, որոնցից կարելի է առանձնացնել ՀՀ տեղահանված Արցախցիների ապահովման խնդիրը և նրանց հավանական արտագաղթը:

Խնդիրը պարզ տեսնելու համար հարկավոր է հստակ քարտեզագրել ներկա իրավիճակը: Այսպիսով, Արցախից բռնի տեղահանվածների թիվը 2023թ. հոկտեմբերի 4-ի դրությամբ կազմել էր՝ 100632 անձ, որոնցից շատերին ՀՀ-ն ապահովել է կացարանով, մնացյալ անձանց պետությունը և այլ բարեգործական կազմակերպություններ տրամադրել են սնունդ, հիգիենայի պարագաներ, դեղորայք և տաք հագուստ: Ավելի ուշ, ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց, որ Արցախի դեմ իրականացված ագրեսիայի հետևանքով 2023թ. սեպտեմբերի 24-ին և դրանից հետո բռնի տեղահանված բոլոր անձիք կարող են ստանալ 100 հազար դրամ միանվագ աջակցություն նախատեսված առաջնայի կարիքների ծախսերը հոգալու համար: Հաջորդ աջակցության ծրագիրը, դա 40 հազար դրամ ժամանակավոր կացարաններում բնակվելու և 10 հազար դրամ կոմունալ ծախսերի վճարման վեցամսյա

սոցիալական աջակցության ծրագիրն է, որի շահառուն պետք է լինի վարձակալական հիմունքներով ապրող անձ: Վերջին ծրագիրը դա 50 հազար դրամի չափով տրամադրվող երկամսյա (նոյեմբեր և դեկտեմբեր) սոցիալական աջակցությունն է: Անփոփելի վերոնշյալ կարելի է ընդգծել, որ Արցախից բռնի տեղահանված անձը 6 ամսվա ընթացքում կարող է ստանալ մինչև 500 հազար դրամ գումար, բացառությամբ այն դեպքերում, երբ անձը ապրում է հյուրանոցում կամ հյուրատանը և պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում: 2020 թվականից եկած Արցախցիները այս ծրագրերի շահառուները չեն կարող հանդիսանալ: Ստացվում է, որ ՀՀ կառավարությունը տուն և հայրենի հող կորցրած անձանց կարող է ապահովել առավելագույնը 500 հազար դրամով, այն էլ որոշակի սահմանափակումներով, որը սակայն ՀՀ բյուջեի համար կդառնա մեծ բեռ: Բյուջեի վրա ահռելի ծանրաբեռնվածությունը չի բացառում այն փաստը, որ անհատը իր քիչ թե շատ կանոնակարգված կյանքը թողնելով, գալիս է ու կյանքը սկսում է 0-ից, պետությունից ստանալով ընդամենը 500 հազար դրամ աջակցություն: Բազմաթիվ մարդիկ այս բարդ փակուղու միակ ելքը կարող են տեսնել միգրացիայի մեջ:

Հարցման մասնակիցների 33%-ը նշել է, որ հնարավորության դեպում կմեկնի Հայաստանից, մի մասը (12,7%-ը) ժամանակավոր աշխատելու նպատակով, իսկ մյուս մասը (20,3%-ը) մշտական բնակություն հաստատելու նպատակով: Ըստ տարիքային խմբերի հարցման մասնակիցների մեծ մասը 54,7%-ը կազմում են 26-45 տարեկան անձիք, ապա 22,1 %-ը՝ 46-63 տարեկանները, 18,2%-ը՝ 18-25 տարեկանները, 4,9%-ը՝ 64 և ավելի տարիքային խմբին պատկանողները: Ըստ հարցման, արտագաղթել ցանկացողների մեծ մասը 58%-ը 26-45 տարեկան անձիք են:

Հարցման արդյունքում պարզ դարձավ, որ Արցախից բռնի տեղահանվածների շրջանակում բարձրագույն կրթություն ունեցող անձանց թիվը գերակշռում է և կազմում անհամապատասխանությունը Միգրացիայի ցանկություն ունեցող անձանց մոտ 54%-ը ունի բարձրագույն կրթություն: Այս ցուցանիշը առավել մտահոգիչ է, քանի որ մատնանշում է ուղեղների արտահոսքի միտումը: Նշված տեսանկյունից միգրացիայի խնդրի լուծումը կարող է հանդիսանալ կրթության ոլորտի բարեփոխումները: Մասնագիտական կարողությունների և աշխատաշուկայի պահանջների անհամապատասխանությունը վերացնելու համար անհրաժեշտ է բարեփոխել մասնագիտական կրթությունը և վերապատրաստման ծրագրերը, օրինակ 1990-ական թվականներին Չինաստանը, Հնդկաստանը և Կորեան ներդրել են նոր տեխնիկական վերապատրաստման համակարգեր, որի շնորհիվ 1997թ.-ին վերոհիշյալ երկրներում տեխնիկական գիտությունների գծով գիտությունների թեկնածուների թվաքանակը ավելի էր, քան ԱՄՆ-ում թեկնածուի աստիճան ստացած ասիացիների թիվը (Wickramasekara, 2003, էջ 9): Հատկանշական է ընդգծել, որ Աֆրիկայից շատ էմիգրանտեր լքել են իրենց հայրենիքը որակավորման մակարդակի բարձրացման և հետազոտություններ իրականացնելու պայմանների բացակայության պատճառով (Wickramasekara, 2003, էջ 9):


Լուսինն Գրիգորյան

Ըստ ծննդավայրի հարցման մասնակիցների 80,8%-ը ծնվել է Արցախում, 15,1%-ը ՀՀ-ում, 4,2% այլ վայրում: Ծննդավայրի կորուստը մեծ բարոյահոգեբանական հարված է և կարող է հանդիսանալ արտագաղթի պատճառ, անգամ այն դեպքում, երբ անձը ֆինանսապես ապահովված է: Հարցվածների 15,9 %-ը տեղափոխվել է Արցախ վերաբնակեցման ծրագրով, իսկ 8,8%-ը աշխատել է այնտեղ:

Հարցվածների 90,7% ունեցել է սեփական գույք: Մասնակիցների 70%-ը ունեցել է աշխատանք կամ ուսանել է, 10,2%-ը զբաղվել է գյուղատնտեսությամբ, 6,8%-ը զբաղվել է բիզնեսով, 9,2 % Արցախում գործազուրկ էր, իսկ 3,8%՝ թոշակառու:

ՀՀ տեղափոխվելուց հետո հարցվածների բնակության վայրը ներկայացված է գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1



Ինչպես պարզ է դառնում Գծապատկեր 1-ից տեղահանված Արցախցիների հիմնական բնակության վայրը ներկա դրությամբ ք. Երևանն է, որին հաջորդում է Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերը, իսկ համամասնորեն ամենաքիչ թվով Արցախցիներ ապրում են Տավուշի մարզում: Աշխարհագրական դիրքը հատկանշական է ընդգծել ցույց տալու համար բռնի տեղահանված Արցախցիների ակնկալվող աշխատավարձը, քանի որ կախված բնակության վայրից միջին ամսական անվանական աշխատավարձը տարբեր է: Այսպես, ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 2023թ. դեկտեմբեր ամսվա համար միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 249 278 դրամ, 2022թ. միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է

235576 դրամ ընդորում կանանց մոտ այն եղել է 179882 դրամ, իսկ տղամարդկանց մոտ՝ 295778 դրամ, բայց ք. Երևանում, որտեղ այսօրվա դրությամբ ապրում է տեղահանված Արցախցիների 32,4%-ը այն կազմել է 269685 դրամ, Կոտայքի մարզում՝ 174619 դրամ, Արարատի մարզում՝ 241490 դրամ, Արմավիրի մարզում՝ 137390 դրամ, իսկ Տավուշի մարզում՝ 153415 դրամ: Վերլուծելով ՀՀ Վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված տվյալները (2023 թ. վերաբերյալ հաշվետվություն չի հրապարակվել) պարզ է դառնում, որ մայրաքաղաքի և մարզերի միջին ամսական անվանական աշխատավարձը կարող է տարբերվել 2 անգամ:

Աշխատավարձի չափը կարևորագույն չափորոշիչ է, որը կարող է մեծ ազդեցություն ունենալ ապագայի վերաբերյալ անձի կայացնելիք որոշումների վրա, օրինակ՝ արտագաղթել երկրից թե՛ ոչ, սակայն մինչև աշխատավարձի չափի ազդեցության մասին վերլուծություններ անելը հարկավոր է ընդգծել առկա զբաղվածությունը: Ըստ հարցման, բռնի տեղահանված Արցախցիների 72,2%-ը փնտրում է աշխատանք, 10,8%-ը աշխատում է կամ զբաղվում է ձեռներեցությամբ, 6%-ը ուսանող է, 6,4%-ը անցնում է որակավորման դասեր ապագայում աշխատելու նպատակով և միայն 4,6%-ը չի ուզում աշխատել: Արդյունքում պարզ է դառնում, որ երեք ամսվա ընթացքում տեղահանված Արցախցիների 72,2 % չունի որևէ զբաղվածություն, սակայն ըստ հարցման, Արցախի Հանրապետությունում ապրելու տարիներին 87%-ը ունեցել է զբաղվածություն, մասնավորապես՝ 69,9%-ը աշխատել է որպես վարձու աշխատող կամ ուսանել է ԲՈՒՀ-ում, 6,8%-ը զբաղվել է ձեռնարկատիրական գործունեությամբ, 10,3%-ը՝ գյուղատնտեսությամբ, 9,3%-ը գործազուրկ էր, իսկ մնացած 3,8%-ը թոշակառու: Հարցման մասնակիցների 37,7% ընդգծել էր, որ ՀՀ տեղափոխվելուց հետո զգացել է խտրականություն իր նկատմամբ: Այս փաստը կարող է դառնալ մեծ խոչընդոտ աշխատանքի ընդունման հարցում, քանի որ գործատուն կարող է իր անձնական հայացքների պատճառով չընդունել անձին աշխատանքի, դա իր հերթին կրերի անարդարության զգացման, որը նույնպես կարող է միգրացիայի դրդապատճառ լինել: Հարցման մասնակիցներից 93-ը նշել են, որ ոչինչ իրենց հետո չի պահի ՀՀ-ը լքելու մտքից, քանի որ արտագաղթի պատճառը բարոյահոգեբանական է:

Անձի միգրացիայի վերաբերյալ որոշումների վրա մեծ ազդեցություն ունի սեփական գույքի առկայությունը: Այս դեպքում կշեռքի վրա դրված է երկու կշռաքար՝ առաջին հերթին անշարժ գույքի առկայությունը, անգամ եթե այն ձեռք է բերվել վարկավորման միջոցով, հանդիսանում է ներդրում և մեծացնում է վստահությունը ապագայի նկատմամբ, իսկ երկրորդը՝ ֆիզիկական անձանց միջև վարձակալության պայմանագրերի կնքման ինստիտուտի բացակայությունը թույլ է տալիս վարձատուին կայացնել վարձավճարի և վարձակալության ավարտի հետ կապված որոշումները ըստ «տրամադրության», որն էլ հանդիսանում է ապագայի նկատմամբ անվստահության մեծ պատճառ: Ըստ հարցման, ՀՀ տեղափոխված Արցախցիների 90,7%-ը ունեցել է սեփական գույք Արցախում: Այս փաստը հանդիսանում է ծանր հոգեբանական հարված, քանի որ մարդիկ թողել են թշնամուն իրենց աշխատանքի արդյունքը և պա-

պերի ժառանգությունը ու գալով Հայաստան ստիպված են վճարել կացարանի համար: Հարցման արդյունքները ցույց են տվել, որ բռնի տեղահանված Արցախցիների միայն 8,8 % -ը չի վճարում կացարանի համար ապրելով կան բարեգործական հիմունքներով տրամադրված կացարանում կամ ունենալով սեփական գույք: Հարցման մասնակիցների 43,8%-ը վճարում է կացարանի համար 50 – 150 հազար դրամ, 41,5%՝ 150-300 հազար դրամ, 5,8%-ը՝ 300-500 հազար դրամ: Քանի որ ՀՀ-ում վարձակալության շուկայի մեծ մասը գտնվում է ստվերում, ՀՀ վիճակագրական կոմիտեն անշարժ գույքի գործարքների վերաբերյալ հաշվետվության մեջ չի ներառում վարձակալության գները, որը և դժվարացնում է ուսումնասիրությունները այդ ոլորտում, սակայն անկախ փորձագետների պնդմամբ 2022 թվականին սկսված ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով ռուսների ներհոսքով պայմանավորված կտրուկ աճել էին վարձակալության գները, իսկ 2023թ. սեպտեմբերին Արցախցիների բռնի տեղահանումը էլ ավելի մեծացրեց պահանջարկը վարձակալական հիմունքներով տրամադրվող բնակարանների նկատմամբ, դրանով իսկ բարձրացնելով վարձակալությամբ տրամադրվող անշարժ գույքի գները: Վաճառվող անշարժ գույքի շուկայական գները վերջին տարիներին նույնպես, կտրուկ աճել են: Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի հաշվետվության 2023թ. հոկտեմբեր ամսին ք. Երևանի 1 գոտում բնակարանի 1 ք. մ. մակերեսի հաշվարկով շուկայական միջին գինը կազմել է 1120300 դրամ, 11 գոտում՝ 212200 դրամ, համեմատելու համար 2022թ., նույն ժամանակաշրջանի համար, ք. Երևանի 1 գոտում բնակարանի 1 ք. մ. մակերեսի հաշվարկով շուկայական միջին գինը եղել է 960 200 դրամ, 11 գոտում՝ 200000 դրամ, իսկ 2021 թվականին ք. Երևանի 1 գոտում բնակարանի 1 ք. մ. մակերեսի հաշվարկով շուկայական միջին գինը կազմել է 818 400 դրամ, 11 գոտում՝ 180200 դրամ: Այսինքն՝ երկու տարվա ընթացքում Երևան քաղաքի 1 գոտում անշարժ գույքի գները աճել են 27 %-ով: ՀՀ մարզերում նույնպես նկատելի է գների կտրուկ աճ: օրինակ Կոտայքի մարզի (տեղափոխվել են հարցվածների 16,9%-ը) Արուվյան քաղաքում 2023թ. հոկտեմբերին 1 ք.մ. մակերեսի հաշվարկով շուկայական միջին գինը կազմել է 268200, 2022թ.՝ 252500 դրամ, իսկ 2021թ.՝ 215000 դրամ: Տեսականորեն, եթե անձը ցանկանում է գնել 70ք.մ մակերեսով գույք Վաղարշապատում, որտեղ 2023թ. հոկտեմբեր ամսին բնակարանի 1 ք. մ. մակերեսի հաշվարկով շուկայական միջին գինը կազմել է 244100 դրամ, ապա պետք է վճարի 17115000 դրամ (70 X 244 100): Հատկանշական է շեշտել, որ հարցման մասնակիցների մեծ մասն ընդգծել է, որ կմնա հայրենիքում այն դեպքում, երբ ունենա սեփական անշարժ գույք:

Քննարկում

Նշված խնդիրը լուծելու համար ՀՀ կառավարությունը կտրամադրի աջակցություն Արցախից բռնի տեղահանված ընտանիքներին բնակարանային ապահովման համար, նախագիծը բաղկացած է 3 բաղադրիչից՝

- բնակարանի կամ առանձնատան ձեռքբերումը հավաստագրի տրամադրման միջոցով,

- անհատական բնակելի տան կառուցումը հավաստագրի տրամադրման միջոցով,
- գործող հիփոթեքային վարկի մարման աջակցություն:

Առաջինը՝ 5 մլն դրամ թվով 242 քաղաքային և գյուղական բնակավայրերում իրացնելու դեպքում է տրամադրվելու: Երկրորդը՝ 4 մլն դրամ թվով 148 քաղաքային և գյուղական բնակավայրերում իրացնելու դեպքում: 3 մլն դրամ՝ մնացած բոլոր բնակավայրերում, բացի Երևանի 1-ին և 2-րդ գոտիներից, և 2 մլն դրամ, եթե արդեն ունի հիփոթեք, կրկին բացառությամբ Երևանի առաջին և երկրորդ գոտում գտնվող գույքից: Կառավարության այս նախագծի շահառուներ կարող են հանդիսանալ, այն արցախցիները, ովքեր ընդունել են ՀՀ քաղաքացիություն 2020թ.-ի սեպտեմբերի 27-ից հետո: Ծրագրի հիմնական նպատակն է՝ գույքով ապահովել մեր հայրենակիցներին, չծանրաբեռնելով մայրաքաղաքը, սակայն վերոհիշյալ անշարժ գույքի գների դեպքում ծրագրի իրական շահառուների շրջանակը կտրուկ նվազում է: Այս դեպքում, խնդրի էլ ավելի լավ լուծում կարող է դառնալ հիփոթեքային արտոնյալ պայմանները Արցախից բռնի տեղահանված անձանց համար: ՀՀ-ում այս պահին գործում է տեղահանված Արցախցիների համար հիփոթեքային վարկավորման պետական աջակցության ծրագիր: Այն իրենից ենթադրում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված ընտանիքներին տրամադրել անշարժ գույքի ձեռք բերման և կառուցապատման համար նախատեսված, վարկ արտոնյալ պայմաններում, դրանք են՝

- ք. Երևանում հիփոթեքային վարկի մայր գումարի վճարների համար մինչև 8 մլն. դրամ (ոչ ավելի քան ամսական 113 հազար դրամ) հանրագումարային աջակցություն, իսկ տոկոսագումարների համար մինչև 3, 648 մլն. դրամի (ոչ ավելի քան ամսական 63 հազար դրամ) աջակցություն:
- ՀՀ մարզերում հիփոթեքային վարկի մայր գումարի ամսական վճարների համար մինչև 10 մլն. դրամ (ոչ ավելի քան ամսական 153 հազար դրամ) հանրագումարային աջակցություն, իսկ տոկոսագումարների համար մինչև 5,850 մլն. դրամի (ոչ ավելի քան ամսական 98 հազար դրամ) աջակցություն
- Սահմանամերձ բնակավայրերում հիփոթեքային վարկի մայր գումարի ամսական վճարների համար մինչև 14 մլն. դրամ (ոչ ավելի քան ամսական 242 հազար դրամ) հանրագումարային աջակցություն, իսկ տոկոսագումարների համար մինչև 11,085 մլն. դրամի (ոչ ավելի քան ամսական 177 հազար դրամ) աջակցություն:
- 1% կանխավճար սահմանամերձ բնակավայրերում անշարժ գույք գնող կամ 4 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող անձանց
- 2,5 % կանխավճար ՀՀ մարզերում անշարժ գույք ձեռք բերող անձանց:

Ծրագրի շահառուները այս պահին կարող են դառնալ միայն 2020թ.-ի պատերազմի հետևանքով տեղահանված անձիք: ՀՀ կառավարության վե-

րոհիշյալ որոշման նպատակն է՝ Արցախցիների բնակարանային ապահովման խնդրի լուծումը, գերծ մնալով մայրաքաղաքի հավելյալ ծանրաբեռնումից: Նպատակահարմար կլինի ծրագրի շահառու դարձնել, նաև 2023թ.-ին տեղահանված Արցախցիներին և ավելացնել հիփոթեքային վարկավորման տոկոսադրույքի սուբսիդավորումը, քանի որ աճող բնակարանային գները և նորմալ կենցաղավարման ծախսերը թույլ չեն տալիս հնարավոր շահառուներին օգտվել աջակցությունից՝ ցածր վարկունակության պատճառով:

Հարցվածների 54,3%-ը նշել էր, որ բարձր վարձատրվող աշխատանք ունենալու դեպքում չեն արտագաղթի: ՀՀ կառավարության կողմից նպատակահարմար կլինե՞ր մշակել շահութահարկի այլ դրույքաչափ (պայմանականորեն 17%, այս պահին գործող 18%-ի փոխարեն) այն դեպքում, երբ կազմակերպությունում Արցախից տեղահանված աշխատակիցների թիվը կկազմի պայմանականորեն 5%: Սա կշահագրգռի գործատուներին ընդունել Արցախից տեղահանված քաղաքացիներին, անգամ խտրական վերաբերմունքի առկայության դեպքում, որը պայմանավորված է անձի Արցախցի լինելու հետ: Ճիշտ է շահութահարկի գծով հարկային մուտքերը կնվազեն, սակայն կլուծվի Արցախցիների զբաղվածության խնդիրը և կավելանան մուտքերը եկամտային հարկի գծով:

Պատերազմների և տեղային հակամարտությունների ժամանակ լքում են հայրենիքը հիմնականում երիտասարդները և այն ընտանիքներ, որտեղ կան դեռահասներ, որոնք ենթակա են պարտադիր զորակոչման: Միրիայից միգրացիայի պատճառ են հանդիսացել պատերազմը և ընդհատված կրթությունը (Belmonte, 2020, էջ 24): Համաձայն ՄԱԿ-ի տվյալների 2023թ.-ի հունիսի դրությամբ աշխարհում գրանցված է 6,3 մլն. փախստական Ուկրաինայից:

Եզրակացություն

Արցախից բռնի տեղահանվածների սոցիալական վիճակի ուսումնասիրությունը, թույլ տվեց թիրախավորել խնդիրների մի մեծ փունջ, որոնք կարող են հավանական միգրացիայի պատճառ հանդիսանալ: Առաջին կարևորագույն խնդիրը դա աշխատանքի ապահովման խնդիրն է: Հարցման մասնակիցների 72,5%-ը նշել է, որ ՀՀ տեղափոխվելուց հետո փնտրում է աշխատանք, սակայն Արցախում ապրելու տարիներին հարցվածների միայն 9,4%-ն է եղել գործազուրկ: Այս միտման պատճառները կարող են տարբեր լինել օրինակ՝ շուկայի համար ոչ բավարար որակավորման մակարդակը և/կամ գործատուի խտրական վերաբերմունքը: Մասնագիտական հմտությունները լավացնելու նպատակով առաջարկվեց կրթական ոլորտի բարեփոխումներ՝ պետության կողմից ֆինանսական աջակցության տեսքով, որի արդյունքում մասնագետների մասնագիտական հմտությունները կդառնան աշխատանքային շուկայի համար պահանջված:

Խտրական վերաբերմունքի պատճառով անձին աշխատանքի չընդունելուց խուսափելու համար, առաջարկվեց հարկի դրույքաչափի փոփոխություն, կազմակերպությունում բռնի տեղահանված արցախցիների պայմանական չափի աշխատակիցների առկայության դեպքում: Նախագիծը կշահագրգռի

գործատուներին աշխատանքի ընդունել տեղահանված արցախցիներին:

Արտագաղթի համար կարևորագույն պատճառ կարող է հանդիսանալ նաև սեփական անշարժ գույք գնելու խնդիրը և վարձակալական հիմունքներով բնակարանի բարձր վարձավճարը: Հարցման արդյունքում պարզ դարձավ, որ մասնակիցների միայն 8,8 % չի վճարում կացարանի համար և ապրելում է կամ բարեգործական հիմունքներով տրամադրված կացարանում, կամ ունենի սեփական անշարժ գույք: Խնդիրը լուծելու համար առաջարկվեց առկա հիփոթեքային վարկավորման աջակցության ծրագիրը վերափոխել, դարձնելով ավելի հարմար 2023թ.-ի Արցախից տեղահանվածների վարկավորման համար:

Երրորդ կարևորագույն գործոնը, որը նպաստում է արտագաղթի աճին, դա տարածաշրջանում կանոնավոր խաղաղության բացակայությունն է և նոր պատերազմի վտանգը, որը իր հետ բերում է միգրացիոն նոր ալիքներ դեռահասների և երիտասարդների շրջանակում:

Վերոնշյալն էրեք խնդիրները լուծելու դեպքում, Արցախից բռնի տեղահանվածների և ամբողջ հայաստանաբնակ հայության շրջանակներում կնվազեն արտագաղթի տեմպերը:

Օգտագործված գրականության ցանկ

- «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին ՀՀ օրենք, ընդունվել է 04.05.2022թ. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=163052>
- «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, փոփոխություններ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի n 2323-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ Կառավարության որոշում N 878-Ն, ընդունվել է 14.06.2024թ. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=193933>
- Արցախի Հանրապետության առանձին շրջաններից տեղահանված ընկերակցների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին ՀՀ Կառավարության որոշում N 169-Լ, ընդունվել է 17.02.2022թ. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=169202>
- Թադևոսյան, Զ., Բադալյան, Կ., Հայրապետյան, Ա. (2023). ՀՀ երիտասարդների միգրացիայի ընտրանքային հետազոտություն, *Տնտեսություն և Հասարակություն*, N 3, Երևան:
- Խոջաբեկյան, Վ. (2001). *Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX, XX դարերում և XXI դարի շեմին*: Երևան:
- ՀՀ Վիճակագրական կոմիտե. *Աշխատավարձ և աշխատողների թվաքանակ (2020-2022)*: https://armstat.am/file/article/lab_market_2023_14.pdf
- ՀՀ Վիճակագրական կոմիտե. *Ժամանակագրական շարքեր (2023)*: <https://armstat.am/am/?nid=12&id=08001>
- ՀՀ Վիճակագրական կոմիտե. *ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը (2022)*: https://armstat.am/file/article/sv_10_22a_540.pdf

- ՀՀ Վիճակագրական կոմիտե. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը (2023): https://armstat.am/file/article/sv_10_23a_550.pdf
- Ղարիբյան, Գ., Խառատյան, Ա., Խահակյան, Ռ. (2017). *Անկախության տարիներին ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացումները և մարդկային կապիտալի վերարտադրության հիմնախնդիրները*: Երևան:
- Մկրտչյան, Տ. (2023). Երիտասարդների միջազգային միգրացիայի հիմնախնդիր շուրջ. գլոբալ մարտահրավեր և հնարավորություններ: *Տնտեսություն և Հասարակություն*, N 3:Երևան:
- Սարգսյան, Հ., Անտոնյան, Ք., Խաչատրյան, Կ. (2013). *Միգրացիա, միտումներ և հեղևանքներ*: Երևան:
- Վարդանյան, Տ. (2022). *Աշխարհի ու Հայաստանի միգրացիոն հոսքերը*: Երևան:
- Belmonte, M., Conte, A., Ghio, D., Kalantaryan, S., McMahon, S. (2020). *Youth and Migration: an overview*. Luxembourg.
- Help families forced to flee (2023). UNHCR. The UN Refugee Agency. <https://www.unhcr.org/emergencies/ukraine-emergency>
- Wickramasekara, P. (2003). *Policy responses to skilled migration : Retention, return and circulation*. Switzerland.

References

- «Zhamanakavor anashkhatunakut'yan yev mayrut'yan npastneri masin» orenk'um p'vop'vokhut'yunner yev lrats'um katarelu masin HH orenk' [Law of the Republic of Armenia on Amendments and Additions to the Law «On Temporary Incapacity and Maternity Benefits»], yndunvel e 04.05.2022t'. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=163052> (In Arm.)
- «Hayastani Hanrapetut'yan 2024 t'vakani petakan byujev masin» Hayastani Hanrapetut'yan orenk'um verabashkhum, p'vop'vokhut'yunner yev Hayastani Hanrapetut'yan karravarut'yan 2023 t'vakani dektemberi 28-i n 2323-n voroshman mej p'vop'vokhut'yunner yev lrats'umner katarelu masin HH Karravarut'yan voroshum N 878-N [Resolution of the Government of the Republic of Armenia No. 878-N on redistribution, amendments to the Law of the Republic of Armenia “On the State Budget of the Republic of Armenia for 2024” and amendments and additions to the Resolution No. 2323 of the Government of the Republic of Armenia], yndunvel e 14.06.2024t'. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=193933> (In Arm.)
- Arts'akhi Hanrapetut'yan arrandzin shrjannerits' teghahanvats yntanik'neri hamar bnakaranayin match'eliut'yan apahovman petakan ajakts'ut'yan tsrigriry hastatelu masin HH Karravarut'yan voroshum N 169-L [Resolution of the RA Government N 169-L on approving the state support program for housing affordability for displaced families from certain regions of the Republic of Artsakh], yndunvel e 17.02.2022t'. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=169202> (In Arm.)
- T'adevosyan, Z., Badalyan, K., Hayrapetyan, A. (2023). HH yeritasardneri migrats'iayi yntrank'ayin hetazotut'yun [Sample survey of the migration of RA youth], *Tntesut'yun yev Hasarakut'yun*, N 3, Yerevan. (In Arm.)
- Khojabekyan, V. (2001). *Hayastani bnakch'ut'yan verartadrut'yuny yev teghasharzhery XIX, XX darerum yev XXI dari shemin* [Reproduction and movements of the Armenian

- population in the 19th, 20th centuries and on the threshold of the 21st century]. Yerevan. (In Arm.)
- ՀՀ Vichakagrakan komite. *Ashkhatavardz yev ashkhatoghneri t'vak'anak* [Salary and number of employees] (2020–2022). https://armstat.am/file/article/lab_market_2023_14.pdf (In Arm.)
- ՀՀ Vichakagrakan komite. *Zhamanakagrakan shark'er* [Chronological series] (2023). <https://armstat.am/am/?nid=12&id=08001> (In Arm.)
- ՀՀ Vichakagrakan komite. *ՀՀ sots'ial-tntesakan vichaky* [RA socio-economic situation] (2022). https://armstat.am/file/article/sv_10_22a_540.pdf (In Arm.)
- ՀՀ Vichakagrakan komite. *ՀՀ sots'ial-tntesakan vichaky* [RA socio-economic situation] (2023). https://armstat.am/file/article/sv_10_23a_550.pdf (In Arm.)
- Gharibyan, G., Kharratyan, A., Isahakyan, Vo. (2017). *Ankakhut'yan tarinerin ՀՀ sots'ial-tntesakan zargats'umneri yev mardkayin kapitali verartadrut'yan himnakhndirneri* [A socio-economic developments and problems of reproduction of human capital during the years of independence]. Yerevan. (In Arm.)
- Mkrтч'yan, T. (2023). Yeritasardneri mijazgayin migrats'ia yev himnakhndri shurj. global martahraver yev hnaravorut'yunner [On the issue of international migration of young people. global challenges and opportunities]. *Tntesut'yun yev Hasarakut'yun*, N 3. Yerevan. (In Arm.)
- Sargsyan, H., Antonyan, K', Khach'atryan, K. (2013). *Migrats'ia, mitumner yev hetevank'ner* [Migration, trends and consequences]. Yerevan. (In Arm.)
- Vardanyan, T. (2022). *Ashkharhi u Hayastani migrats'ion hosk'ery* [Migration flows of the world and Armenia]. Yerevan. (In Arm.)
- Belmonte, M., Conte, A., Ghio, D., Kalantaryan, S., McMahon, S. (2020). *Youth and Migration: an overview*. Luxembourg. (In Eng.)
- Help families forced to flee (2023). UNHCR. The UN Refugee Agency. <https://www.unhcr.org/emergencies/ukraine-emergency> (In Eng.)
- Wickramasekara, P. (2003). *Policy responses to skilled migration: Retention, return and circulation*. Switzerland. (In Eng.)

Լուսինե Գրիգորյան

Ասպիրանտ Արմյանսկոյ Գոսուդարստեննոյ Եկոնոմիչեսկոյ Ընիվերսիտետա

Ձ. արես: g.lusine2000@gmail.com

ПРОБЛЕМЫ ПРЕДОТВРАЩЕНИЯ МИГРАЦИИ НАСИЛЬСТВЕННО ПЕРЕСЕЛЕННЫХ ГРАЖДАН АРЦАХА

Наша Родина на протяжении веков была “лакомым куском” для врагов, являясь частью “Шелкового пути”. Она подвергалась нападениям на протяжении тысячелетий, теряя государственность, а затем вновь обретая её, восставая, как феникс из пепла. Землетрясение 1988 года и первая Арцахская война того времени вызвали нестабильную ситуацию в стране, а эмиграция стала основной проблемой для нашего государства и армянского народа. Тысячи существующих исследований причин эмиграции позволяют

предположить, что военная обстановка, недоверие к государству, ощущение несправедливости и отсутствие достойной работы могут способствовать увеличению темпов миграции. Война 2023 года и последующая насильственная репатриация граждан Арцаха создали благоприятные условия для массовой эмиграции. В данной статье было проведено исследование среди вынужденных переселенцев из Арцаха. Изучались их социальное положение, миграционные настроения и текущие проблемы. В результате анализа выяснилось, что основные трудности этих переселенцев связаны с жильем и трудоустройством. Для решения данных проблем был проанализирован опыт других стран и предложены соответствующие решения.

Ключевые слова: вынужденно переселенные граждане Арцаха, социальные проблемы граждан Арцаха, миграция, обеспечение жильем, ипотечное кредитование, цены на аренду.

Lusine Grigoryan

Ph.D. student at the Armenian State Economic University

Email: g.lusine2000@gmail.com

CHALLENGES IN PREVENTING MIGRATION OF FORCEFULLY DISPLACED CITIZENS OF ARTSAKH

Our homeland has long been a coveted target for adversaries due to its strategic position along the Silk Road. Over the centuries, it has endured numerous invasions, lost and regained its statehood, and experienced destruction followed by rebirth, akin to a phoenix rising from the ashes. The earthquake of 1988, coupled with the first Artsakh war, created a period of instability, leading to significant emigration, which has since become a pressing issue for our state and the Armenian nation. Numerous studies indicate that factors such as wartime conditions, distrust of the government, perceptions of injustice, and a lack of adequate employment opportunities contribute to elevated migration rates. The war of 2023 and the subsequent forced displacement of Artsakh citizens have exacerbated these conditions, providing a catalyst for increased emigration.

This article presents research conducted on forcibly displaced Artsakh citizens, examining their social conditions, migration intentions, and current concerns. The analysis highlights that the primary challenges faced by these displaced individuals are related to housing and employment. To address these issues, the study explores the experiences of other countries and proposes potential solutions.

Key words: forcibly displaced Artsakh citizens, social issues of Artsakh citizens, migration, housing provision, mortgage lending, rental prices.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2024թ. մայիսի 5-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2024թ. մայիսի 13-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2024թ. հունիսի 11-ին:

Քրիստինե Թատոսյան
*Հայաստանի պերական Կրթության գիտությունների
համալսարանի մարքեթինգի ամբիոնի ասիստենտ,
ՀՀ պերական վերահսկողական ծառայության գլխավոր վերահսկող
Էլ. հասցե՝ kristine.tatosyan@gmail.com*

DOI: 10.53614/18294952-2024.1-123

ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ (ՀՀ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐՈՎ)

Վերջին տարիներին ՀՀ վարչատարածքային բարեփոխումները, թերևս, այն հիմնական ու շոշափելի փոփոխություններն են տեղական ինքնակառավարման համակարգում, որոնց արդյունքում մեծացել են համայնքների կարողությունները (մարդկային, ֆինանսական և այլն) և բարելավվել է համայնքային ռեսուրսների կառավարման արդյունավետության մակարդակը:

Սույն հետազոտության առարկան համայնքներում խոշորացման ազդեցության գնահատումն է համայնքների սեփական և ոչ սեփական եկամուտների հարաբերակցության, համայնքներում ծախսերի առաջնահերթությունների փոփոխության, ինչպես նաև համայնքային կառավարման արդյունավետության վրա:

Հետազոտության օբյեկտը ՀՀ վարչատարածքային բարեփոխումների համեմատաբար վաղ փուլերում խոշորացված 19 համայնքների՝ 2012-2022 թվականների բյուջեների հաշվետվություններն են:

Հետազոտության նպատակն է գնահատել խոշորացման ազդեցությունը ՀՀ վարչատարածքային բարեփոխումների հա-

մեմատաբար վաղ փուլերում խոշորացված 19 համայնքներում եկամուտների ապակենտրոնացման մակարդակների փոփոխության վրա: Հետազոտության նպատակն է նաև գնահատել խոշորացումից առաջ և հետո ժամանակահատվածում եկամուտների ապակենտրոնացման մակարդակի փոփոխության բացասական տարբերության ցուցանիշներ ապահոված համայնքներում մեկ շնչին բաժին ընկնող կրթության և տնտեսական հարաբերության գծով ծախսերի համամասնությունները:

Հետազոտության հիմնական նորույթն արտացոլվում է այն հիպոթեզի հաստատմամբ, որն ուղղված է հիմնավորելու ՀՀ համայնքների՝ պետական բյուջեից ունեցած մեծ կախվածության պայմաններում տեղական տնտեսական զարգացման ապահովման հնարավորությունը, ինչը հետազոտության շրջանակներում հնարավոր է դարձել իրականացնել ՀՀ համայնքներում մեկ շնչին բաժին ընկնող աշխատավարձերի ֆոնդի, տնտեսական հարաբերությունների և կրթության գծով ծախսերի համադրության արդյունքում:

Հիմնաբառեր. եկամուտների ապակենտրոնացում, կրթության, տնտեսական հարաբերությունների գծով ծախսեր, համայնքային կառավարման արդյունավետություն

Ներածություն

Ապակենտրոնացման գոյությունը զարգացած և բարձր եկամուտներ ունեցող երկրներում առավելապես միտված է ապահովելու բարձր տնտեսական արդյունավետություն՝ պայմանավորված հարկային եկամուտների և մարդկային կապիտալի բարձր մակարդակով: Միևնույն ժամանակ, առավել ցածր եկամուտներ ունեցող երկրներում ապակենտրոնացման գործիքակազմների կիրառությունը տեղական մակարդակով կարող է ապահովել զգալի դրական արդյունքներ՝ հատկապես գյուղական համայնքներում (Fagueta, Jean-Paul, 2021, էջ 1–3):

Գիտական հրապարակումներում հանդիպում են կարծիքներ, ըստ որոնց՝ մեկ շնչի հաշվով համայնքային ծախսերի աճը դրական ազդեցություն ունի բնակչության սոցիալական ծառայություններից օգտվելու մակարդակի տեսանկյունից (Կարապետյան, 2019, էջ 114): Տեղական հետազոտություններից մեկում՝ 2015–2018 թվականներին ՀՀ 501 համայնքների տվյալների հիման վրա իրականացված վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ խոշորացված համայնքներում սեփական եկամուտների աճի տեմպերն ավելի բարձր են, քան ոչ խոշորացված համայնքներում (Կարապետյան և համահեղինակներ, 2023, էջ 1):

Եթե հիմնվենք Արժույթի միջազգային հիմնադրամի GFS-ի տարբեր երկրների տվյալների վրա, Մարտինես-Վասկեսոն և Տիմֆեյեր նշում են ապակենտրոնացման մակարդակը գնահատող ցուցանիշների՝ առանձին-առանձին դիտարկելու և վերլուծելու կարևորությունը: Ի հավելում նշենք, որ նրանք հակված են այն կարծիքի, որ օրինակ՝ համայնքում եկամուտների ապակենտ-

րոնացումը ոչ միայն կախված է եկամուտների ծախսերի մասնաբաժիններից, այլ նաև քաղաքական որոշակի գործոններից (OECD, 2013, էջ 73):

ԵՄ 27 անդամ երկրների համար մշակվել է ապակենտրոնացման ինդեքսի հաշվարկման գործիք, որը թույլ է տալիս հաշվել քաղաքական, վարչական և հարկաբյուջետային ապակենտրոնացման մակարդակները: Հարկաբյուջետային ապակենտրոնացման հաշվարկներում դիտարկվում են երեք հիմնական ցուցանիշներ՝ *ծախսերի ապակենտրոնացում* (ենթազգային ծախսերի հարաբերություն պետական ընդհանուր ծախսերին), *եկամուտների հարաբերակցություն* (սեփական եկամուտների հարաբերությունը պետական ընդհանուր եկամուտներին), *եկամուտների ապակենտրոնացում* (սեփական եկամուտների հարաբերությունը ընդհանուր եկամուտներին):

Ըստ ԵՄ 27 երկրների համար սահմանված գնահատման սանդղակի՝ եկամուտների բարձր ապակենտրոնացում ունեցող երկրներում այդ ցուցանիշը տատանվում է 35-100 %-ի, միջին ապակենտրոնացման դեպքում՝ 27-34 %-ի, ցածր ապակենտրոնացման դեպքում՝ 20-26 %-ի, իսկ շատ ցածր ապակենտրոնացման դեպքում՝ 0-19 %-ի սահմաններում: Ըստ այդ գնահատման սանդղակի՝ ՀՀ համայնքների եկամուտների ապակենտրոնացման ցուցանիշները գրեթե մշտապես գտնվել են միջին մակարդակում (2022 և 2021 թվականներին՝ 30 %, 2020 թվականին՝ 27 %, 2019 թվականին՝ 34 % և այլն)²:

Սույն հետազոտության խնդիրն է վերլուծել, թե 10 տարվա ընթացքում ՀՀ խոշորացված համայնքներում ինչպես են փոխվել սեփական և ոչ սեփական եկամուտների փոխհարաբերակցությունները, ինչպես նաև ուսումնասիրել, թե խոշորացված համայնքները կախվածության ինչպիսի մակարդակ ունեն ՀՀ պետական բյուջեից և, միաժամանակ, ինչպես են փոխվել ծախսային հիմնական առաջնահերթությունները խոշորացումից առաջ և հետո ժամանակահատվածում:

Մեթոդ

Հետազոտության նպատակի և հետազոտության առարկայի ընտրությամբ պայմանավորված՝ կիրառվել են համեմատական ուսումնասիրությունների, համադրության, ընդհանուր գիտական վերլուծության, ինդուկցիայի, դինամիկ դիտարկումների մեթոդները, ինչպես նաև հաշվարկներում կիրառվել է եկամուտների ապակենտրոնացման հաշվարկի հետևյալ բանաձևը. *Եկամուտների ապակենտրոնացման մակարդակ=Համայնքի ընդհանուր եկամուտներ-պետության կողմից ստացված պաշտոնական դրամաշնորհներ/համայնքի ընդհանուր եկամուտներ*: Հարկ է նշել, որ հետազոտությունում խոշորացված համայնքների՝ 2012-2022 թվականների ծախսերի և եկամուտների ցուցանիշները հաշվարկվել են խոշորացված համայնքի կազմում ներառված բնակավայրերում (նախկին համայնքների) խոշորացումից առաջ եկամուտների և

1 The official website of the European Committee Of The Regions, Retrieved <https://portal.cor.europa.eu/divisionpowers/Pages/Decentralization-Index.aspx?countryName=nl>

2 Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից ՀՀ համայնքների՝ 2019-2022 թթ. բյուջեների հաշվետվությունների տվյալների հիման վրա:

ծախսերի համապատասխան ցուցանիշների գումարման արդյունքում խոշորացումից հետո տվյալների համադրելիության ապահովման նպատակով:

Արդյունքները

ՀՀ վարչատարածքային բարեփոխումների համեմատաբար վաղ փուլերում (2015–2017 թվականներ) խոշորացված 19 համայնքների եկամուտների ապակենտրոնացման ցուցանիշների հաշվարկների արդյունքները ցույց են տալիս, որ խոշորացումից հետո՝ ՀՀ մարզերի համայնքների եկամուտների ապակենտրոնացման մակարդակի փոփոխության բացասական տարբերության ցուցանիշներով աչքի են ընկնում **Սյունիքի մարզի Քաջարան (-18 %), Արագածոտնի մարզի Ալագյազ (-12 %) և Ծաղկահովիտ (-6 %), ինչպես նաև Լոռու մարզի Լոռի Բերդ (-6 %) համայնքները: Իսկ խոշորացման արդյունքում եկամուտների ապակենտրոնացման մակարդակի դրական փոփոխությամբ աչքի են ընկնում Տավուշի մարզի Բերդ (5 %), Կոտայքի մարզի Չարենցավան (4 %), Սյունիքի մարզի Գորիս (4 %), ինչպես նաև Լոռու մարզի Ստեփանավան (3 %) համայնքները:**

Միաժամանակ, Քաջարան, Ալագյազ, Ծաղկահովիտ և Լոռի Բերդ համայնքներում իրականացված վերլուծության արդյունքները թույլ տվեցին պարզել, որ եկամուտների ապակենտրոնացման մակարդակի փոփոխության բացասական տարբերության ցուցանիշը բնավ չի խոչընդոտել համայնքների արդյունավետ կառավարմանը: Արդյունքում, Ծաղկահովիտ և Ալագյազ համայնքները կարողացել են մեկ շնչին բաժին ընկնող համայնքապետարանի աշխատակիցների աշխատավարձերի նվազման պայմաններում ապահովել մեկ շնչին բաժին ընկնող տեղական ներդրումների կտրուկ աճ (մեկ շնչին ընկնող կրթության և տնտեսական հարաբերությունների ծախսերի ուղղությամբ):

Քննարկում

ՀՀ մարզերում 2015 թվականից մեկնարկած վարչատարածքային բարեփոխումների, հատկապես համայնքների խոշորացման գործընթացներով պայմանավորված՝ խիստ անհրաժեշտություն է առաջանում գնահատել ինչպես եկամուտների և ծախսերի աղբյուրների և ուղղությունների փոփոխությունները, այնպես էլ համայնքային կառավարման արդյունավետությունը: Սույն հետազոտության շրջանակներում վերլուծության ենթարկված համայնքները արդեն իսկ ունեն խոշորացման 5–7 տարվա փորձ և խոշորացումից հետո հետագա խոշորացման չեն ենթարկվել, ինչը թույլ է տալիս առավել թիրախային գնահատել խոշորացման ազդեցությունը:

Աղյուսակ 1. ՀՀ մարզերի համայնքների եկամուտների ապակենտրոնացման մակարդակների փոփոխությունները խոշորացումից առաջ և հետո՝ 2012–2022 թվականների համար³:

Մարզ	Համայնք	Ապակենտրոնացման մակարդակը խոշորացումից առաջ՝ մինչև 2017 թվականը	Ապակենտրոնացման մակարդակը խոշորացումից հետո՝ 2017 թվականի հետո	Փոփոխությունը (աճ/նվազում)
Արագածոտն	Ծաղկահովիտ	31 %	25 %	-6 %
	Ալազյազ	37 %	25 %	-12 %
Կոտայք	Բյուրեղավան	28 %	28 %	0 %
	Չարենցավան	35 %	39 %	4 %
	Զրվեժ	60 %	61 %	1 %
Վայոց ձոր	Արենի	23 %	24 %	1 %
	Եղեգիս	18 %	17 %	-1 %
Սյունիքի մարզ	Կապան	28 %	27 %	-1 %
	Քաջարան	63 %	45 %	-18 %
	Գորիս	19 %	23 %	4 %
	Մեղրի	35 %	37 %	2 %
	Տեղ	29 %	29 %	0 %
	Տաթև	25 %	21 %	-4 %
Շիրակի մարզ	Անի	27 %	22 %	-5 %
Լոռու մարզ	Ստեփանավան	24 %	27 %	3 %
	Գյուլագարակ	29 %	26 %	-3 %
	Լոռի Բերդ	38 %	32 %	-6 %
Տավուշի մարզ	Բերդ	23 %	28 %	5 %
	Դիլիջան	37 %	34 %	-3 %


Ստացվում է, որ ՀՀ մարզերի որոշ համայնքների դեպքում խոշորացումը ոչ միայն չի նպաստել եկամուտների ապակենտրոնացման մակարդակի ավելացմանը, այլ նաև ունենք այնպիսի պատկեր, երբ խոշորացումից հետո համայնքներում նկատվում են եկամուտների ապակենտրոնացման մակարդակի փոփոխության բացասական տարբերությամբ ցուցանիշներ, ինչը պայմանավորված է համայնքների՝ պետական բյուջեից ունեցած կախվածությամբ, որի արդյունքում պաշտոնական դրամաշնորհները բյուջեում՝ խոշորացումից հետո ունենում են առավել մեծ փետակարար կշիռ, քան սեփական եկամուտները:

Չնայած նրան, որ որոշ համայնքներում նկատվում է եկամուտների ապակեն-

³ Հաշվարկների իրականացվել են հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով նշված համայնքների՝ 2012–2022 թվականների բյուջեների հաշվետվությունները: Համայնքների եկամուտների ապակենտրոնացման հաշվարկն իրականացվել է հետևյալ բանաձևի միջոցով՝ եկամուտների ապակենտրոնացման մակարդակ=Համայնքի ընդհանուր եկամուտներ-պետության կողմից ստացված պաշտոնական դրամաշնորհներ/համայնքի ընդհանուր եկամուտներ:

տրոնացման մակարդակի փոփոխության բացասական տարբերությամբ ցուցանիշներ, այնուամենայնիվ կարելի է փաստել, որ խոշորացումը որոշակիորեն նպաստել է համայնքներում սեփական եկամուտների աճին, ինչը պայմանավորված է խոշորացումից հետո ՀՀ մի շարք համայնքներում հարկահավաքման տոկոսի ավելացմամբ, որը խոշորացումից առաջ ոչ միշտ էր հնարավոր լինում արդյունավետորեն իրականացնել: Մասնավորապես՝ Քաջարան համայնքում խոշորացումից հետո գրեթե բոլոր տարիներին նկատվում է գույքահարկի և հողի հարկերի փաստացի հավաքագրման 100 %-ից բարձր ցուցանիշ՝ բացառությամբ 2021 թվականի, որ ընթացքում հավաքագրված հարկերի ցածր կատարողականը պայմանավորված է Քովիդ-19 համավարակի բացասական ազդեցությամբ: Խոշորացումից առաջ պատկերը այլ է եղել. օրինակ՝ 2011 թվականի տվյալներով Քաջարան համայնքում հողի հարկի հավաքագրման տոկոսը կազմել է շուրջ 78%, 2012 թվականին հողի հարկի հավաքագրման տոկոսը կազմել է 84 %, 2013 թվականին՝ կրկին 84 %⁴:


Նպատակ ունենալով հիմնավորել այն թեզը, որ ՀՀ-ում համայնքների զարգացումը կարող է որոշ դեպքերում ընթանալ պետական բյուջեից ունեցած մեծ կախվածության պայմաններում, ապա այս վերլուծության համար որպես թիրախ համայնքներ են հանդիսացել նախորդիվ վերլուծված և խոշորացումից առաջ և հետո եկամուտների ապակենտրոնացման մակարդակի փոփոխության բացասական տարբերության ցուցանիշներ ունեցող՝ Քաջարան, Ալազյազ, Ծաղկահովիտ, Լոռի Բերդ համայնքները:



Գծապատկեր 1. Քաջարան համայնքի տնտեսական հարաբերությունների և կրթության գծով վարչական և ֆոնդային ծախսերը մեկ շնչի հաշվով՝ խոշորացումից առաջ և հետո՝ 2012–2022 թվականներին (ՀՀ դրամ)⁵:

4 Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի համայնքների բյուջեների ծախսերի վերաբերյալ 2012–2022 թվականների հաշվետվությունները, ինչպես նաև ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվող՝ «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով» 2012–2022 թվականներին համայնքային բնակչության թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը:
5 Նույն տեղում:

Ինչպես երևում է գծապատկերի տվյալներից, Քաջարան համայնքում էականորեն աճել են տնտեսական հարաբերությունների գծով ֆոնդային ծախսերը: Հարկ է նշել, որ խոշորացումից հետո 5 տարիների ընթացքում սուբվենցիոն ծրագրերի համաֆինանսավորմամբ բնակավայրերի փողոցների հիմնանորոգման և բարեկարգման ուղղությամբ շուրջ 2.3 մլրդ դրամի չափով ներդրումներ են իրականացվել Քաջարան համայնքում, ինչպես նաև Բարիկավան, Լեռնաձոր, Քաջարանց, Գեղի-Գեղավանք բնակավայրերում: Հարկ է նշել նաև, որ Գեղի համայնքում խոշորացումից առաջ ընդհանուր ծախսերը կազմել են 18,936.7 հազ. դրամ, որում ֆոնդային ծախսերը կազմել են ընդամենը 2,498.8 հազ. դրամ: Ընդ որում՝ ծախսերի գերակշիռ մասը (11,232.8 հազ. դրամ) ուղղվել է ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին: Նույնն է պատկերը նաև Լեռնաձոր և Փայտահան համայնքներում, որտեղ ևս խոշորացումից առաջ ծախսերի գերակշիռ մասն ուղղվել է ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների մատուցմանը: Մասնավորապես՝ Լեռնաձոր համայնքի ընդհանուր ծախսերը կազմել են 28,382.5 հազ. դրամ, որում ֆոնդային բյուջեն կազմում է 9,030.7 հազ. դրամ: Վարչական ծախսերի 14,116.8 հազ. դրամն ուղղվել է ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին: Իսկ Փայտահան համայնքում ընդհանուր ծախսերը խոշորացումից առաջ կազմել են 8,340.5 հազ. դրամ, որից ֆոնդային բյուջեն զրոյական ցուցանիշ է ունեցել: Հարկ է նշել, որ ծախսերը ամբողջապես այստեղ ուղղվել են ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին⁶:



Գծապատկեր 2. Ավազյազ համայնքի տնտեսական հարաբերությունների և կրթության գծով վարչական և ֆոնդային ծախսերը մեկ շնչի հաշվով՝ խոշորացումից առաջ և հետո՝ 2012-2022 թվականներին (ՀՀ դրամ)⁷:


6 Նույն տեղում:

7 Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների բյուջեների ծախսերի վերաբերյալ 2012-2022 թվականների հաշվետվությունները, ինչպես նաև ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրատարակվող՝ «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով» 2012-2022 թվականներին համայնքային բնակչության թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը:

Ստացվում է, որ խոշորացման արդյունքում հիշյալ համայնքների համար հնարավորություններ են ստեղծվել ֆոնդային ծախսեր իրականացնելու տեսանկյունից: Եթե խոշորացումից այդ համայնքների ծախսերի գերակշիռ մասն ուղղվում էին ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններին, ապա այժմ այդ բնակավայրերում, ընդ որում խոշորացման արդյունքներով պայմանավորված, իրականացվում են ծախսեր փողոցային լուսավորության համակարգերի կառուցման և տեղակայման խաղահրապարակների և պուրակների կառուցման, ինչպես նաև ջրամատակարարման համակարգերի կառուցման կամ բարելավման ուղղությամբ:

Ինչպես Քաջարան համայնքում, այնպես էլ Ալագյազ համայնքում խոշորացումից հետո նկատվում է տնտեսական հարաբերությունների գծով ծախսերի աճ, ընդ որում՝ ֆոնդային ծախսերի ուղղությամբ, ինչը՝ 2020-2022 թթ. շուրջ 640 մլն դրամ գումարի չափով ուղղվել է Ալագյազ խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերում ասֆալտապատման աշխատանքների իրականացմանը, որի արդյունքում բնակավայրերի և համայնքի կենտրոնի միջև ճանապարհային կապ է ստեղծվել: Բացի այդ, 2018-2019 թթ. կրկին բոլոր բնակավայրերում 852 մլն դրամ գումարի չափով աշխատանքներ են իրականացվել գազաֆիկացման և լուսավորության ապահովման ուղղություներով:


Այս համատեքստում կարևոր է նշել, որ **խոշորացումից առաջ հիշյալ բնակավայրերում** կրկին ծախսերը գրեթե ամբողջությամբ ուղղվել են ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններին և կրթությանը՝ շատ չնչին չափով:



Գծապատկեր 3. Ծաղկափայլի համայնքի տնտեսական հարաբերությունների և կրթության գծով գործառնական վարչական և ֆոնդային ծախսերը մեկ շնչի հաշվով՝ խոշորացումից առաջ և հետո՝ 2012-2022 թվականներն (ՀՀ դրամ)⁸:

8 Նույն տեղում:

Ծաղկահովիտ համայնքում խոշորացումից հետո էական աճ է նկատվում տնտեսական հարաբերությունների՝ մեկ շնչին բաժին ընկնող ֆոնդային ծախսերի մասով (օրինակ՝ 2022 թվականին այդ ցուցանիշը կազմել է մոտ 50 հազար դրամ), որոնք հիմնականում ուղղվել են Ծաղկահովիտ համայնքի ջրամատակարարման, կենտրոնական փողոցների լուսավորության, իսկ Նորաշեն, Գեղադիր, Հնաբերդ, Գեղաձոր, Բերքառատ բնակավայրերում գազաֆիկացման աշխատանքների իրականացմանը:



Գծապատկեր 4. Լոռի Բերդ համայնքի տնտեսական հարաբերությունների և կրթության գծով գործառնական վարչական և ֆոնդային ծախսերը մեկ շնչի հաշվով՝ խոշորացումից առաջ և հետո՝ 2012-2022 թվականների կտրվածքով (ՀՀ դրամ)⁹:

Լոռի Բերդ համայնքում վերջին տարում նկատվում է տնտեսական հարաբերությունների գծով ֆոնդային ծախսերի կտրուկ աճ, ինչպես նաև կրթության գծով վարչական ծախսերի շարունակական աճ:


Այսպիսով, ՀՀ խոշորացված համայնքների եկամուտների ապակենտրոնացման մակարդակի փոփոխության բացասական տարբերության ցուցանիշներ ապահոված Քաջարան, Ալագյազ, Ծաղկահովիտ և Լոռի Բերդ համայնքների՝ 2012-2022 թվականների ծախսերի վերլուծությունից կարելի է փաստել, որ խոշորացումը տեղական տնտեսական զարգացման տեսանկյունից էական նախադրյալներ է ստեղծել հատկապես փոքր բնակավայրերում՝ հնարավորություն ստեղծելով բարելավել մի շարք ոլորտների զարգացմանն ուղղակիորեն և անուղղակիորեն նպաստող ենթակառուցվածքների վիճակը:

Ընդհանրապես, համայնքների խոշորացման կարևոր արդյունքներից

21-րդ դարը մարդկությանն ակնհայտորեն կանգնեցրեց ժամանակակից քաղաքակրթության ճգնաժամային խնդրի հրատապության և այդ հրատապությունը ճանաչելու անհրաժեշտության առաջ, բացահայտեց զարգացման նոր ուղիների վրա հենված ժամանակակից մարդու աշխարհայացքի խոցելիությունը, ինչը հանգեցրեց անխուսափելի կորստի՝ խզելով մարդու կապը բնության հետ: Ջեք Լոնդոնը (John Griffith Chaney, 1876–1916) 20-րդ դարակազմին և դեռևս դրանից առաջ գիտակցում էր նշված խնդրի կարևորությունը: Անդրադառնալով մարդու բնության և քաղաքակրթության հետ ունեցած կապերին՝ հեղինակն առանց շեղումների բացահայտում է դրանք՝ հասարակական օրենքների, զարգացման օրինաչափությունների գործընթացում կարևորելով մարդու տեղն ու դերը:

Արդ, մեր ուսումնասիրության նպատակն է քննել քաղաքակրթության զարգացման հետևանքները ժամանակակից աշխարհում՝ հիմք ընդունելով Ջ.Լոնդոնի առաջադրած հայեցակետերը, մարդ-քաղաքակրթություն փոխհարաբերությունների արդյունքում ծագած խնդիրներին նորովի մոտեցման ուղիները սույն թեմայի վերաբերյալ:

Տեսական հիմքեր

Գրողը դեռևս իր ժամանակաշրջանում վեր է հանել քաղաքակրթության ծնած այն խնդիրները, որոնք այսօր ավելի, քան երբևէ դարձել են ժամանակակից մարդու գոյության և գոյատևման սպառնալիքը: Հողվածում կիրառվել են Չ. Դարվինի և Հ. Սփենսերի սոցիալական տեսությունները, մարքսիզմի տեսությունը, Ֆ. Նիցշեի «գերմարդու» հայեցակարգը, ինչպես նաև

գրականության տեսաբանների և գրականագետների (Լուկով Բ., Բուրստին Դ., Սփիլլեր Ռ., Զվերն Ա., Ֆրանս Ան. և այլք) ներկայացրած հենքային դրույթները: Ուսումնասիրության մեջ կիրառվել են վերլուծական և համեմատական մեթոդները:

Արդյունքներ

Ձեռք Լոնդոնի արձակը մշտապես դիտարկվել է որպես ռեալիզմի, ժոմանտիզմի, նատուրալիզմի, որոշ դեպքերում՝ էքզիստենցիալիզմի գեղագիտական հայացքների կրող, շարունակող և զարգացնող: Մինչդեռ, հետազոտությունները, որոնք իրապես մեծ արժեք են ներկայացնում, սահմանափակվում են նշված գրական ուղղությունների շրջանակներում, և միայն գրաքննադատության վերջին շրջանում՝ հետաքրքրության արդիականացմանը զուգահեռ, Լոնդոնի ստեղծագործությունները սկսել են ուսումնասիրվել այլ ուղղությամբ, որը պարունակում է նեոռոմանտիկ գրականությանը բնորոշ առանձնահատկություններ: Արդ, հոդվածում վերլուծության է ենթարկվում գրականության **նոր հերոսը**՝ օժտված նեոռոմանտիկ տիպական հատկություններով: Նրա անլուծելի հակամարտության հիմքում իդեալի և իրականության ռոմանտիկ անհամաձայնության գիտակցումն է, որը «փոքր մարդուն» դրդում է բացառիկ քայլերի՝ արթնացնելով նրա էության չդրսևորված կողմերը:

Քննարկում

Լոնդոնի վեպերում և պատմվածքներում նկարագրվում է այն ժամանակաշրջանը, երբ մարդը մարտահրավեր նետեց բնությանը՝ ակնհայտորեն գերազնահատելով սեփական հնարավորությունները: Անշուշտ, ամերիկացի գրողի հայացքները բխում էին սոցիալական դարվինիզմի այն դրույթներից, որոնք վերաբերում էին այնպիսի սոցիալական բնագոյներին, ինչպիսիք մարդու մոտ ի հայտ են գալիս էվոլյուցիայի արդյունքում՝ ապահովելով մարդու իշխանությունը բնության վրա: Ըստ նշված տեսության՝ բնության օրենքներն ազդում են մարդու վրա այնպես, ինչպես ամբողջ կենդանական աշխարհի վրա, և մարդուն ճնշող սննդային պաշարի սահմանափակությունը, ինչպես նաև ավելի լավ ապրելու ձգտումը նպաստում են նոր տարատեսակ հմտությունների զարգացմանը, որն էլ դառնում է քաղաքակիրթ աշխարհի հերթական նվաճումների աղբյուրը: Հետևաբար, տեղին է մեջբերել 20-րդ դարի կեսերին Դ. Բուրստինի ձևակերպած հետևյալ հարցադրումը. «Քաղաքակրթությունը դիմակայել է մարդու սահմանափակ հնարավորություններին: Կկարողանա՞ այն դիմակայել մարդու գրեթե ամենազորությանը» (Boorstin, 1974. էջ 40):

Լոնդոնը գրել է այն ամենի մասին, ինչը թաքնված էր իր շատ ժամանակակիցներից, բայց ինչը նա զարմանալիորեն տեսավ իր ապրած ժամանակաշրջանում և կանխատեսեց ապագայի վերաբերյալ: Ամերիկացի գրողի այս հատկանիշը հատկապես նկատել է Ա. Ֆրանսը. «Ջ.Լոնդոնը տաղանդ

ուներ տեսնելու այն, ինչը ներկայումս թաքնված է մարդկանց մեծամասնությունից, և տիրապետում էր այն գիտելիքներին, որոնք թույլ էին տալիս հայացք գցել դեպի ապագա: Նա կանխատեսում էր մեր դարաշրջանում ծավալվող իրադարձությունները» (Фраис, 1960, էջ 756):

Ա.Մ. Զվերեն իրավացի էր՝ ասելով, որ ժամանակակից գրականությունը շարունակում է անդրադառնալ այն խնդիրներին, «որոնց շուրջ պայքարում էր մեծ ու դժվարին բախումներ բացահայտողի միտքը» (Зверев, 1981, էջ 10): Տեղին է մեջբերել Զվերենի հայտարարությունն առ այն, որ «մենք կվարժվենք Լոնդոնի աշխարհին միայն այն ժամանակ, երբ այս տարօրինակությունների տողատակերում զգանք որոշակի տրամաբանություն և անխուսափելիություն» (Зверев, 1981, էջ 91):

1910թ.-ից սկսած Լոնդոնն աստիճանաբար հեռանալ քաղաքական թեմաներից: «Բնություն վերադառնալու» փորձերը՝ որպես սոցիալական խնդիրների վերջնական լուծման հնարավոր տարբերակ, առավելապես արտացոլված են նրա ուշ շրջանի գործերում:

Բնությունն առանցքային դեր ունի նեոռոմանտիկների գրականության մեջ. այն մեկնաբանվում է որպես քաղաքակրթության և նյութականի հետապնդման դեմ հակադարձում: Առհասարակ, Լոնդոնի ստեղծագործությունների արդի վերլուծության համար, կարծում ենք, կարևոր է հակիրճ անդրադառնալ նեոռոմանտիկ գրականությանը:

Այսպես, 19-20-րդ դդ. սահմանագծին, երբ գեղարվեստական մտածողությունը նոր չափանիշեր է փնտրում, որպես բարոյագիտական-գեղագիտական բողոք ընդդեմ հակահումանիստական հասարակական կառույցի՝ ձևավորվում են նեոռոմանտիկ գրականության այն գլխավոր կատեգորիաները, որոնք, ծագելով այլ սոցիալ-պատմական-մշակութային պայմաններում, ձեռք բերեցին բոլորովին նոր հատկանշական գծեր:

Նեոռոմանտիզմ հասկացությունը բազմաթիվ մեկնաբանություններ է ստացել: Եթե Տոլմաչովի պնդմամբ այն «աղերսվում է պարզունակության, առնականության, ... բնության մեջ գոյատևելու մոտիվների հետ» (Толмачев, 2001, էջ 645), ապա Լուկովը խնդրին տալիս է ավելի բազմաբովանդակ մեկնաբանություն. «Սա գեղագիտական-էթիկական բողոք է անհատի ապամարդկայնացման դեմ, արձագանք նատուրալիզմի և ծայրահեղ դեկադանսի» (Лыков, 1981, էջ 388):

Նեոռոմանտիկ հեղինակների ուշադրության կենտրոնում տրամադրությունն ու հոգեվիճակն են: Նրանք գրում են անձեռնմխելի բնության մասին, բայց ոչ թե փախչում են սոցիալական խնդիրներից, այլ փորձում են դրանց դրական լուծում տալ՝ փոխարինելով քաղաքակիրթ աշխարհը բնության աշխարհով: Սա դառնում է արձագանք ընդդեմ ռեալիզմի և նատուրալիզմի, որտեղ գրվում էր գորշ, խնդիրներով լի իրականության մասին:

Զեք Լոնդոնի «Բոցավառ Արշալույս» («Burning Daylight», 1910) և «Լուսնի հովիտ» («The Valley of the Moon», 1913) վեպերում հերոսներն ի վերջո վերադառնում են բնություն՝ չընդունելով քաղաքակիրթ աշխարհի սահմանած օրենքները: Նրանց համար բնությունը թարմ է, ինքնատիպ և հզոր: Բնության

մեջ երևակայությունն ու իրական զգացմունքները կարող են արթնանալ, ճնշված բնագոյները՝ կյանքի կոչվել ու տարածվել: «Բոցավառ արշալույսը» վեպում բնություն-քաղաքակրթություն բախումն առանցքային թեմա է. գլխավոր հերոս էլամ Հարնիշը, որն առաջին հայացքից հիշեցնում է Լոնդոնի «Հյուսիսային պատմվածքների» ոսկի որոնողներին, իրավամբ կրում է նրանց հատկանիշները. նրան ոչ միայն առաջ է մղում հարստանալու ձիրքը, այլև՝ վայրի բնության գրկում ներքին մոլուցքներին տրվելու անզուսպ ձգտումը: Բնությունը շռայլ է գտնվել նրա նկատմամբ՝ չխնայելով ո՛չ ֆիզիկական, ո՛չ ներքին կամային ուժերը: Հարնիշը գերմարդկային քայլերով շատ արագ հասնում է հաջողության: Լոնդոնը գրում է ոսկու տենդով տարված և հաղթանակած հերոսի գլխապտույտ կարիերայի մասին: Հարնիշը դառնում է միլիոնատեր: Վեպը կտրուկ անցում է կատարում Կալիֆորնիա, որտեղ արդեն Հյուսիսում խաղամոլության արդյունքում ձեռք բերված փորձը դառնում է Հարնիշի՝ բիզնեսում լուրջ հաջողություն գրանցելու հաղթաթուղթը:

Հարկ է մեջբերել Լոնդոնի առավել հայտնի «Մարտին Իդեն» (“Martin Eden”, 1909) վեպը. բարձր դասի հասարակության շրջանակներում երջանկության որոնումներով տարված հերոսի ողբերգական կործանում, որի նպատակն է ժխտել իրական երջանկության գոյությունն այնտեղ, որտեղ իշխում է «դրամը»: «Բոցավառ արշալույսը» վեպում, մերկացնելով Ամերիկայի անթագ տիրակալների աշխարհը, նրանց բարոյական սնանկությունը՝ գրողը փորձում է ելք գտնել նրա համար, ով հզորացել է սեփական ուժերով և դեռ չի կորցրել կյանքն ըստ արժանվույն գնահատելու ու վայելելու՝ Հյուսիսում ձեռք բերված արժեհամակարգը:

Ըստ էության, քաղաքակրթությունը, որը վկայում է մարդու առանձնացումը կենդանական աշխարհից և ապա՝ առաջընթացը սոցիալական աստիճանակարգով, հնարավորություն է ընձեռում մարդուն հանդես գալ որպես ստեղծագործող, ինքնաբավ էակ, փոխել աշխարհը, բնությունը ենթարկել իրեն: Ըստ այդմ էլ՝ տեխնածին քաղաքակրթությունն ունեցել և շարունակում է ունենալ մեծ նվաճումներ գիտատեխնիկայի, տնտեսության, բժշկության և այլ բնագավառներում: Սակայն, երբ գիտության և տեխնիկայի հզորացումն օգտագործվեց ի վնաս մարդու, քաղաքակրթության անբնական զարգացումը դարձավ գլոբալ հիմնախնդիր: Այս մասին ավելի խորը քաղաքական և սոցիալական ձգնաժամերը նկարագրված են Լոնդոնի «Երկաթե կրունկ» (“The Iron Heel”, 1908) վեպում, որտեղ հատկապես նկատելի են մարքսիզմի տեսության փիլիսոփայական, տնտեսագիտական և քաղաքական դրույթները, որոնք մեծ ազդեցություն են թողել 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի սոցիալ-հասարակական մտքի զարգացման վրա:

Ստացվում է, որ *բանականությունը, բարոյականությունը և հումանիզմը՝* որպես գլոբալ հիմնախնդիրների հաղթահարման միջոցներ, դուրս են մղվում մարդկության զարգացման գործընթացից: Եվ Լոնդոնը, քաջ գիտակցելով մարդասիրության ոչնչացումն ու մարդու ընդվզումն իր իսկ տեսակի դեմ՝ անհատի իրական հանգստությունն ու ներքին հաշտությունը տեսնում է բնությանը մոտ լինելու անհրաժեշտության մեջ: «Բոցավառ արշալույսը» վե-

պում խիղճն ամբողջությամբ չկորցրած մարդը խզում է կապը բիզնես-աշխարհի հետ, հրաժարվում միլիոններից՝ հանուն կնոջ սիրո և ընտանեկան երջանկության: Բնություն վերադառնալու ճշմարտացիությունն ընդգծելու և արժևորելու մտադրությամբ Լոնդոնը գնում է ծայրահեղության. վեպի գլխավոր հերոսը, որն ամբողջ կյանքում ոսկի էր որոնել, բայց հարստանալուց հետո թողել էր ամեն ինչ և ապրում էր հողագործի համեստ կյանքով, շատ պատահաբար հողը փորելիս ոսկի է գտնում, սակայն հրաժարվում է վերցնել:

Ընդլայնելով մարդ-բնություն կապի կարևորության գաղափարը՝ Լոնդոնը բերում է այնպիսի փաստարկներ, որոնք հերքում են բնության ապահով պայմաններում ապրելու քայքայիչ ազդեցությունների գոյությունը: Հեղինակը բավականին հանգամանակից է նկարագրում հերոսին: Նա ցույց է տալիս Հարնիշի՝ արտաքին աշխարհի ազդեցության հետևանքով կրած գիտակից և ոչ գիտակից փոփոխությունները. նրա բարոյական կերպարն աստիճանաբար ապականվում է իր բորսայական գործունեության կոռուպցիոն ազդեցության հետևանքով ԱՄՆ տեղափոխվելուց հետո: Հարնիշը սովորում է պարկեշտ ուտել, հագնվել, բարձր դասին համապատասխան վարվեցողություն մշակել, անգլերենի դասերի հաճախել: Նրանից շատ քիչ ժամանակ է պահանջվում սոցիալական հարաբերությունների պարզ մեխանիզմը հասկանալու համար: Փոխվելով արտաքուստ՝ հերոսն ինքնաբերաբար կրում է նաև ներքին կերպարանափոխություն: Ներքին փոփոխություններն էլ իրենց հերթին կրկնակի հետք են թողնում հերոսի արտաքին տեսքի վրա: Հարնիշի դեմքը դառնում է մոայլ ու խոժոռ, աչքերում դաժանության արտահայտություն է հայտնվում, մարմինը թուլանում է, անհետանում է «հյուսիսի ճամփորդի կենսականորեն առողջ և ուժեղ արտաքինը»: Խմիչքը դառնում է առօրյա հոգսերից ժամանակավորապես ազատվելու ամենահեշտ միջոցը: Ֆինանսիստի անառողջ կյանքը սահմանափակվում է քիչ շարժվելով, շատ ուտելով, անքնությամբ և արտաքին տեսքի օրեցօր վատթարացմամբ: Այս դեպքում Լոնդոնն առաջարկում է երկու տարբերակ. կամ պարտություն քաղաքակիրթ աշխարհի սպառնալիքներին, կամ վերադարձ բնություն:

Բնության և քաղաքակիրթ աշխարհի բախումը, որը նեոռոմանտիկ գրականության առանցքային քննարկման թեմաներից է, առկա է Լոնդոնի գրեթե բոլոր վեպերում: «Սպիտակ Ժանիքը» (“White Fang”, 1906) և «Նախնիների կանչը» (“The Call of the Wild”, 1903) անիմալիստական վեպերում գլխավոր կենդանի-հերոսը պայքարում է քաղաքակրթության ու վայրի բնության բախման պայմաններում: «Լուսնի հովտում» այդ նույն աշխարհի անարդարությունն ամենամեծ սպառնալիքն է սիրող զույգի համար: «Բոցավառ արշալույսը» վեպում հերոսը կկործանվեր, եթե նրանում չարթնանար լոնդոնյան նեոռոմանտիկներին բնորոշ «նախնիների, այլ կերպ՝ բնության կանչը». Կալիֆոռնիայի լեռնոտ տարածություններով հաճախակի ձիավարությունների ժամանակ է միայն Հարնիշն իրեն մաքրված և կապանքներից ազատված զգում: Մարդու հոգին աննկատ այլանդակող քաղաքակրթությունից զերծ մաքուր բնության պայմաններում սիրելի կնոջ՝ Դիդ Մեսոնի հետ հանդի-

պումները հերոսին դրդում են մտածել բնության աշխարհ տեղափոխվելու մասին: Կյանքի փիլիսոփայության վերակառուցման հարցում, իհարկե, մեծ դեր է խաղում կնոջ հանդեպ սերը. Դիդն ասել էր, որ չի ցանկանում ամուսնանալ անազնիվ գործերի միջոցով հարստացած մի մարդու հետ, որը կյանքում «ոչինչ չի ստեղծում»:

Հարնիշն ի վերջո թողնում է խաղը և միլիոնները ներդնում Օքլենդի և շրջակա քաղաքների գեղեցկացման գործում: Ու թեև նա «արդար խաղ» էր սկսել, շարունակում էր պատկանել բիզնեսին: Մակայն այստեղ կարևորվում է այն հանգամանքը, որ հեղինակը պահպանում է Հարնիշի դրական հատկանիշը. նա չի մասնակցում աշխատավորներին խաբելու անազնիվ գործերին: Հենց այս հատկանիշն է նախապայման դառնում իշխող դասակարգին «դավաճանելու» և «հողագործի կյանք» վերադառնալու համար: Սերն ամենամեծ խաղադրույքն է Հարնիշի կյանքում: Նա հեռանում է քաղաքակիրթ աշխարհից Լուսնի հովիտ, որտեղ ամուսիններն իրական երջանկություն են գտնում:

Ջեք Լոնդոնը՝ հեղափոխության հավատարիմ ջատագովը, որը կոչ էր անում դիմել ակտիվ ու վճռական գործողությունների, ստեղծագործական կյանքի վերջին շրջանում հիասթափվում է, ինչը նպաստում է գրողի աշխարհայացքում անհատի վերաբերյալ նոր դիրքորոշման ամրապնդմանը:

Անհատապաշտական սկզբունքը, որի դեմ Լոնդոնը պայքարել էր գրեթե իր ողջ կյանքում, ավելի ու ավելի նկատելիորեն է գերիշխում, գրողը մեկուսանում է և ողջ ժամանակն անցկացնում Լուսնի հովտում գտնվող իր առանձնատանը:

Այդ պայքարի և դրա յուրօրինակ արդյունքի արտացոլումն էր 1913թ. լույս տեսած «Լուսնի հովիտ» վեպը: Եթե «Բոցավառ արշալույսը» վեպում մարդ-քաղաքակրթություն հակամարտությունն ավարտվում է փախուստով դեպի բնության աշխարհ, որը, ի դեպ, ունի արդարացում՝ սեփական խիղճը, ապա «Լուսնի հովտում» հերոսների փախուստն ունի այլ բնույթ. վերջիններս, պայքարելով երկրում տիրող անարդարության դեմ, կորցնում են իրենց ինքնությունը: Արտաքին աշխարհը սպառնում է խլել նրանց կյանքը: Անշուշտ, նախորդ վեպում ևս, ինչպես արդեն նշեինք, հերոսը կրում է ներքին ու արտաքին այնպիսի փոփոխություններ, որոնք վկայում են ինքնությունն աստիճանաբար կորցնելու վտանգի մասին:

Կա կարծիք, որ «Լուսնի հովիտ» վեպում փախուստն անարդարացի է, ավելի եսասիրական բնույթ է կրում: Կարծում ենք, որ, թեև փախուստի հանգամանքներն այդքան էլ չէին համապատասխանում Ամերիկայում տիրող իրականությանը, այնուամենայնիվ, դրա պատճառները վեպում բավականին հիմնարար են ներկայացված:

Վեպում ակնհայտ երևում է, որ երկրում տիրող սոցիալ-քաղաքական անառողջ վիճակը մոտ ապագայում ելք չէր ունենալու: Հեղինակը փորձում է ցույց տալ, թե ինչպես է հակասական, լարված մթնոլորտն իր ազդեցությունը թողնում հերոսների գիտակցության վրա: Երկարատև գործադուլներից մաշված, ամենօրյա ծեծկռտուքներից կարծրացած Բիլը սկսում է կոպիտ

վարվել կնոջ հետ: Կինն արդարացնում է ամուսնուն՝ մեղքը բարդելով արտաքին ուժերի ներգործության վրա:

Առանց վեպի վերջնամասի՝ այն կարող է դիտվել որպես քննադատական ռեալիզմին հատուկ նշանակալից ստեղծագործություն: Սակայն Լոնդոնի հերոսներին հաջողվում է երջանկություն գտնել «Լուսնի հովտում», ինչը բացառիկ երևույթ էր տվյալ ժամանակաշրջանի ԱՄՆ-ում: Հնարավոր է, որ Լոնդոնը գնաց իրականության մասնակի խեղաթյուրման՝ երջանիկ ավարտ ունենալու, ինչպես նաև՝ ինչ-որ չափով սեփական քայլն արդարացնելու համար:

Հարկ է նշել, որ Լոնդոնի վեպերը չեն սահմանափակվում ռեալիզմով: Նրա հերոսները գնում են պատրանքի հետևից, և որ ամենակարևորն է՝ գտնում են այն: Ի դեպ, և «Լուսնի հովտում», և «Բոցավառ արշալույսում», ինչպես Լոնդոնի բազմաթիվ գործերում, հերոսները բացառիկ են. նրանց բացառիկությունը պատկերվում է ոչ թե ամբողջ աշխարհի հետ համեմատության լայն ֆոնի վրա, ինչպես լինում է ժամանակի գրականության մեջ, այլ որևէ սոցիալական նեղ շրջանակում: Այս հերոսները մյուսներից տարբերվում են իրենց եզակիությամբ՝ այլ հերոսների հետ համեմատության հարացույցում. նրանք դիմում են համարձակ քայլերի՝ դեմ գնալով հասարակությանը: Հետևաբար, այն անհատապաշտական սկզբունքը, որոնցով լոնդոնյան հերոսները՝ նեոռոմանտիկ գրականության մեջ լայնորեն արծարծված «փոքր մարդիկ», մոտենում են Նիցշեի «գերմարդուն», ունի խիստ սահմանափակ բնույթ. նրանց սովորականից ավելի ուժեղ են դարձնում հանգամանքները. նույն անձինք չէին լինի բացառիկ բոլորովին այլ պայմաններում: Այս գործոններով ևս պայմանավորված են Լոնդոնի երկերում նեոռոմանտիկ գրականության բնորոշ առանձնահատկությունները:

Լուսնի հովիտը, որում իրենց երջանկությունն են գտնում Լոնդոնի հերոսները, Սոնտմայի այն հովիտն է, որտեղ Լոնդոնը բնակություն է հաստատել և ապրել կյանքի զգալի մասը: Վեպերում նա բացահայտում է սեփական փորձից ձեռք բերված հմտությունները, քաղաքակրթությունից բնություն վերադառնալու առավելությունները, որոնք կյանքն ավելի գունեղ ու յուրօրինակ են դարձնում՝ արտահայտելով նեոռոմանտիկի՝ շրջապատից իր բացառիկությամբ տարբերվելու, բնությանն ավելի մոտ լինելու, արարելու և այդպիսով սեփական ես-ին ավելի մոտենալու ձգտումը: Առաջին հայացքից սա փախուստ է, որը երբեմն ընկալվում է որպես դավաճանություն, գործն անավարտ թողնելու թուլակամություն: Սակայն սա մի նոր պայքար էր՝ հանուն մոռացված արժեքների արթնացման, իդեալների վերախմբատապաշտման՝ քաղաքի գորշ ու միապաղաղ կյանքից անցում կատարելով դեպի բնության աշխարհ, որտեղ մարդը վերադառնում է իր արմատներին:

Թեև գեղարվեստական աշխարհում փախուստը կարող է դառնալ միջոց, նույնն արդարացի չէ ասել իրական աշխարհի մասին: Լոնդոնի վեպերը նրա կյանքի հայելային արտացոլանքն են. նրա քայլը՝ հասարակական կյանքից հեռացումը դեպի բնություն, բազմաթիվ գրաքննադատների հավաստմամբ խորապես սխալ էր և չունեիր արդարացում, քանզի հետագայում այն ողբերգական դեր խաղաց մեծ գրողի ճակատագրում:

Եզրակացություն

Այսպիսով, մարդկությունը, թևակոխելով զարգացման և առաջադիմության նոր՝ քաղաքակրթության դար, ընդլայնում է իր հնարավորությունները՝ ունենալով այնպիսի նվաճումներ, որոնք խոստանում են ապագայի լավատեսական հեռանկար: Մակայն աստիճանաբար մարդն արարում է այն, ինչը դառնում է սեփական տեսակի գոյության սպառնալիքը:

Անշուշտ, Լոնդոնը դեռևս իր ժամանակաշրջանում խորապես զգացել և կանխատեսել է մարդ-քաղաքակրթություն փոխհարաբերություններից բխող այն հակասությունները, որոնք հսկայական չափերի են հասնելու ապագայում: Քաղաքակիրթ աշխարհի նվաճումները մարդկության դեմ օգտագործելն արդեն իսկ դարձել է արդիականության գլոբալ հիմնախնդիր: Ժամանակակից մարդը, որը կանգնած է փակուղու առաջ, ո՛չ կարող է վերադառնալ նախնադարյան կյանքին, ո՛չ էլ գնալ գիտակից կործանման:

Որպես համամարդկային խնդրի լուծման հնարավոր տարբերակ՝ իր վեպերում և պատմվածքներում հեղինակը բազմիցս շեշտադրել է մարդասիրության գործոնը, որն անտեսելու դեպքում ճգնաժամն անխուսափելի է: Ուստի կարելի է հուսալ, որ լոնդոնյան նեոռոմանտիկ հերոսին բնորոշ հատկությունները, այն է՝ հումանիստական արժեքների վերականգնումը, բարոյական գիտակցության սկզբունքների վերարժևորումը, բանականությունը հնարավորություն կընձեռեն ժամանակակից մարդուն մոտենալ մարդկության փրկության այն ուղիներին, որոնք փնտրում էր իր ողջ կյանքի ընթացքում Ջեք Լոնդոնը:

Օգտագործած գրականության ցանկ

- Լոնդոն, Ջ. (1965). *«Լուսնի հովիտ»* // Երկերի ժողովածու, հատոր 11, թարգմանությունը՝ Ա. Բուդաղյանի, «Հայաստան» հրատ., Երևան:
- Լոնդոն, Ջ. (1966). *«Բոցավառ արշալոյս»* // Երկերի ժողովածու, հատոր 6, թարգմանությունը՝ Է. Ավագյան, «Հայաստան» հրատարակչություն, Երևան:
- Սարգսյան, Ա. (2018). *Արդիականության գլոբալ հիմնախնդիրները*, ուս. ձեռնարկ, ՀՊՏՀ «ՏՆՏԵՍԱԳԵՏ» հրատարակչություն, Երևան:
- Boorstin, D. (1974). *The Americans. The democratic experience*. New York: Vintage Books.
- Батулин, С. (1983). *«Ваш во имя революции»: рассказ о Джеке Лондоне / С. Батулин; худож. Е. Коган. — Москва: Детская литература.*
- Зверев, А. (1981). *Глазами необычного героя // Лондон Дж. Повести. — М.: Правда.*
- Луков, В. (1981). *История литературы. Зарубежная литература от истоков до наших дней.* М.: Академия, 2003.
- Толмачев, М. (2001). *Неоромантизм* // Литературная энциклопедия терминов и понятий под ред. А.Н. Николюкина. М.: НПК «Интелвак».
- Франс, Ан. (1960). *Предисловие к первому изданию «Железной пята» во французском переводе. — В кн.: Франс Ан., Собр. соч Т. 8 М. Худож. Лит.*

References

- London, J. (1965). “*Lusni hovit*” [The Valley of the Moon]//Yerkeri zhoghovatsu, hator 1, t’argmanut’yuny” A. Budaghyani, “Hayastan” hratarakchut’yun, Yerevan. (In Arm.)
- London, J. (1966). *Botsavar arshaluys* [Burning Daylight], Yerkeri zhoghovatsu, hator 6, t’argmanut’yuny” E. Avagyan, “Hayastan” hratarakchut’yun, Yerevan. (In Arm.)
- Sargsyan, A. (2018) Ardiakanut’yan global himnakhndirnery us. dzernark, [Global Problems of Modernity] HPTH, “TNTESAGET” hratarakchut’yun, Yerevan. (In Arm.)
- Baturin, S. (1983). «*Vash vo imya revolyutsii*»: *rasskaz o Dzeheke Londone* [“Yours in the name of the revolution”: a story about Jack London] / S. Baturin; khudozh. E. Kogan. — Moskva: Detskaya literatura. (In Rus.)
- Zverev, A. (1981). *Glazami neobychnogo geroya* [Through the eyes of an extraordinary hero] London Dzh. Povesti. – M.: Pravda.
- Lukov, V. (1981). *Istoriya literatury. Zarubezhnaya literatura ot istokov do nashikh dney* [History of literature. Foreign literature from origins to our days]. M.: Akademiya, 2003. (In Rus.)
- Tolmachev, V. (2001). *Neoromantizm*//Literaturnaya entsiklopediya terminov i ponyatiy podred [Neo-romanticism//Literary encyclopedia of terms and Concepts] A.N. Nikolyukina. M.: NPK «Intelvak». (In Rus.)
- Frans, An. (1960). *Predislovie k pervomuizdaniyu «Zheleznoypyaty» vofrantsuzskom perevode* [Preface to the first edition of “The Iron Heel” French translation]. – V kn.: Frans A Sobr. soch T. 8 M. Khudozh. Lit. (In Rus.)

Мариам Акопян

*Соискатель Института литературы им. М. Абеяна
Национальной академии наук Республики Армения
Эл. адрес: mar.hakopyan@mail.ru*

АКТУАЛЬНОСТЬ КОНФЛИКТА ЧЕЛОВЕК–ЦИВИЛИЗАЦИИ В НЕОРОМАНТИЧЕСКИХ РОМАНАХ ДЖЕКА ЛОНДОНА

В статье рассматривается проза Джека Лондона, посвященная человеку, природе и к проблеме их взаимоотношений с цивилизацией. Следует отметить, что только современная литературная критика выявила истоки неоромантической эстетики в романах Лондона, что позволило нам рассмотреть творчество Лондона с позиций неоромантической литературы, что и определяет новизну и современность статьи.

В свое время Лондон остро чувствовал и предвидел противоречия, возникающие во взаимоотношениях человека и цивилизации, которые будут усиливаться в будущем.

Цель статьи – рассмотреть влияние цивилизации на формирование личности человека, изучить разрушительные последствия некритического развития цивилизации в современном мире и найти возможные пути спасения на основе взглядов и предсказаний Джека Лондона. *В статье рассмотрены*

“*Время-не-ждёт*”, “Лунная долина” и другие романы, а также *мы осветили* формирование эстетики неоромантизма в прозе Дж. Лондона.

Таким образом, в статье рассмотрены пути нового подхода к проблемам, возникающим в результате взаимоотношений человека – природы и человека – цивилизации в творчестве Джека Лондона, присутствие которого обеспечивает своеобразие художественного мира писателя, связанных с развитием основных направлений американской литературы.

Ключевые слова: цивилизация, природа, неоромантизм, гуманизм, дегуманизация.

Mariam Hakobyan

*Ph.D. student at M. Abeghyan Institute of Literature at National Academy of Sciences of the Republic of Armenia
Email: mar.hakopyan@mail.ru*

THE CONTEMPORANEITY OF HUMAN-CIVILIZATION CONFLICT IN THE NEO-ROMANTIC NOVELS OF JACK LONDON

The article touches upon the problem of human – nature – civilization relationship in Jack London’s fiction. It should be stated that only the modern literary criticism has revealed the origins of neo-romantic aesthetics in Jack London’s novels allowing us to consider the American author’s prose from the perspective of neo-romantic literature, which determines the novelty and modernity of the article.

The purpose of the article is to highlight the influence of civilization on the formation of human identity, to reveal the destructive consequences of the uncritical development of civilization in the modern world, and to find the possible solutions taking into consideration the views and predictions of J. London on this topic. We referred to “*Burning Daylight*”, “*The Valley of the Moon*” and other works as well as we illuminated the formation of the aesthetics of neo-romanticism in J. London’s prose.

Thus, the article examines the ways of a new approach arising as a result of the relationship between human – nature and human – civilization.

Key words: civilization, nature, neo-romanticism, humanism, dehumanization.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2023թ. նոյեմբերի 29-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2023թ. դեկտեմբերի 11-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2024թ. հունվարի 19-ին:

Մանկավարժություն և դասավանդման մեթոդիկա

Աննա Գաբրիելյան

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ասպիրանտ
Էլ. huugte`anna.gabrielyan1999@gmail.com

DOI: 10.53614/18294952-2024.1-199

ՈՒՍՈՒՑՅԻ ԴԵՐԸ ԱՇԱԿԵՐՏԻ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ներկայումս նախկին հիերարխիկ ուսուցչակենտրոն համակարգից անցում է կատարվում աշակերտակենտրոն ուսուցման համակարգի, որի արդյունքում փոխվում են ուսուցչի դերը և աշակերտի ուսումնառության ձևերը: Սրա հետ մեկտեղ ամբողջովին վերափոխվում է օտար լեզվի դասավանդման նպատակը: Եթե օրինակ քերականական-թարգմանական մեթոդի վրա հիմնված օտար լեզվի դասավանդումը, որտեղ ուսուցիչը ստանձնում էր կենտրոնական դեր նպատակահարմար էր օտար լեզվի պասիվ օգտագործմամբ պայմանավորված, ապա այսօր դա ընկալելի և կիրառելի չէ: Մեր օրերում օտար լեզվի ուսուցումը խրախուսում է հաղորդակցություն: Այսօր օտար լեզվի ուսուցման գլխավոր նպատակ սահմանելով հաղորդակցությունը, մենք մեզ համար օտար լեզվի դասավանդման ուղենիշ ենք ընտրում դասավանդման հաղորդակցային մեթոդը: Հաղորդակցությունը իր մեջ ներկայացնում է կյանքի տարբեր ոլորտների հետ առնչություն: Այս ոլորտները կարող են լինել նոր, անծանոթ կամ դժվարամատչելի աշակերտի համար: Առօրյա, դպրոցական կյանքում կամ հետագա սոցիալական ինտեգրման համար աշակերտին անհրաժեշտ է արագ ինքնաիրացվել հասարակության մեջ: Մենք կարծում ենք, որ սրա համար կարևոր է աշակերտի մոտ զարգացնել ինքնակրթության արժեհամակարգը:

Հիմնաբառեր. ինքնակրթություն, հաղորդակցություն, կարողություն, ուսուցչի դեր, արժեհամակարգ, աշակերտակենտրոն, ուսուցչակենտրոն, դասավանդում:

Ներածություն

Ինքնակրթության արժեհամակարգի կարևորության մասին են փաստում ՀՀ օտար լեզուների առարկայական նոր չափորոշիչները՝ սահմանելով ինքնակրթությունը որպես օտար լեզվի դասավանդման նպատակին հասնելու ուղի, ինչպես նաև Քեմբրիջի կյանքի կոնպետենցիաների շրջանակը (The Cambridge Life Competencies Framework)՝ առանձնացնելով կյանքի տարբեր փուլերում շարունակական կրթությունը որպես 21-րդ դարի հիմնական կոնպետենցիաներից մեկը:

Այս հետազոտությունը մեծապես հիմնվում է նոր չափորոշիչների ուսումնասիրության վրա, քանի որ ժամանակակից հայ մանկավարժական իրականությունում հենց նրա վրա է հիմնվում հետազոտության թեմայի կարևորությունը և հիմնական շեշտադրումը: Այս փաստին զուգահեռ մենք ստիպված ենք հասկանալ, թե ինչպես ենք դիտարկում ուսուցչի դերը, ինչպիսի աշակերտ ենք ցանկանում ունենալ: Այս ամենով ենք պայմանավորում *հոդվածի արդիականությունը*:

Տեսական հիմունքներ և մեթոդ

Հոդվածի նպատակի և խնդիրների հետազոտության տեսական հիմնավորման համար համար հիմք են ծառայել “English Teachers’ Roles in Promoting Learners’ Learning Autonomy in EFL Class of Public Senior High Schools of ENDE Regency in Academic Year 2016 / 2017” գիտական հոդվածը, որն ուսումնասիրում է ուսուցչի գործառույթները և “*Self-Determined Learning: Heutagogy in Action*” աշխատությունը, որը մանրամասն նկարագրում է ինքնակրթության արժեհամակարգը, դրա առանձնահատկությունները և կարևորությունը: Օգտագործվում են որակական մեթոդներ օգտագործումը՝ վերլուծություն, համադրում, համեմատություն, մոդելավորում: Տեսական հետազոտությունը ապահովում է համապատասխան միջոցների հավաքագրում և մշակում՝ արդյունավետ գործնական արդյունքների ապահովման համար: Հոդվածում առկա գործնական վարժությունների համար հիմք են հանդիսացել նոր չափորոշիչների պահանջները՝ «ՀՀ կրթության բարելավման ծրագրի օտար լեզուներ ուսումնական բնագավառի հանրակրթության առարկայական չափորոշչային վերջնարդյունքները և օրինակելի ծրագրերը (անգլերեն, գերմաներեն, ռուսերեն, ֆրանսերեն)»: Հետազոտության արդյունքները ներկայացվում են եզրակացությունում:

Հոդվածի նպատակն է՝ ուսումնասիրել ուսուցչի դերը աշակերտի ինքնակրթության արժեհամակարգի զարգացման գործընթացում:

Հոդվածի խնդիրներն են՝

- առանձնացնել ժամանակակից աշակերտակենտրոն ուսուցման մեջ ուսուցչի գործառույթները,

- վերլուծել ուսուցչի դերը օտար լեզուների դասավանդման գործընթացում,
- ներկայացնել ինքնակրթության հիմնական առանձնահատկությունները,
- պարզել ինքնակրթության զարգացման հնարավորությունների կապը ուսուցչի դերակատարման հետ:

Հողվածի տեսական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ համապարփակ վերլուծության են ենթարկվում ինքնակրթությունը և ուսուցչի դերը, նրա գործառնությունները: Վեր են հանվում դրանց հիմնական դրույթները՝ տեսական առանձնահատկությունները, կարևորությունը և գործնական կիրառելիության հնարավորությունները:

Հողվածի գործնական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ հողվածում ներկայացվում են առաջարկներ, որոնք կարող են ուսուցչի համար ուղենիշ հանդիսանալ դասապրոցեսի ընթացքում ինքնակրթության արժեհամակարգի զարգացման ուղիներ մշակելիս:

Արդյունքներ և քննարկում

Կրթության ավանդական բովանդակությունը հիմնվել է «գիտելիքներ, կարողություններ, հմտություններ» հայտնի սկզբունքի վրա: Այդ սկզբունքում գիտելիքի բաղադրիչը միշտ գերակայող է եղել: Սա բնական էր, քանի որ ավանդական կրթահամակարգում գիտելիքը դիտարկվել է որպես նպատակ: Ժամանակակից աշխարհում գիտելիքն արդեն ռեսուրս է, միջոց: Կրթության համար գիտելիքը ելակետ է, իսկ նպատակը՝ գիտելիքը կիրառելը, նրանով նորանոր որակների ձեռքբերումը (Աշիկյան, 2020, էջ 163): Այս պարագայում ակնկալվում է ուսուցչի դերի վերաիմաստավորում:

Սակայն ժամանակակից կրթությունը շատ ավելին է, քան օտար լեզվով հաղորդակցություն: Այն ուղղված է աշակերտների մտածողության, մասնագիտական նախաձեռնողականության, ինքնուրույնության զարգացմանը, ինչը կապահովի որակյալ մասնագետի ձևավորում: Այդպիսի անհատը ունակ կլինի հարմարվել ցանկացած սոցիալական միջավայրին, լինել մրցակցային շուկայում, ծավալել աշխատանքային անհրաժեշտ գործունեություն, ինքնակրթվել և դառնալ ինքնուրույն:

Ուսուցչի արհեստավարժությունը դիտարկվում է որպես առարկայական, մեթոդական, հոգեբանամանկավարժական գիտելիքների, կարողությունների, անձնային որակների ամբողջություն և մասնագիտական զարգացման արդյունք: Մասնագիտական զարգացումը դիտվում է որպես մասնագիտական արհեստավարժություն տանող հիմնական ուղի: Ուսուցչի անձի զարգացումն ու արհեստավարժությունը փոխկապակցված են և փոխլրացնող:

Ս. Բ. Ելկանովն առանձնացնում է ուսուցչի երեք հիմնական որակները՝ ընդհանուր մանկավարժական հատկանիշները (մանկավարժական կողմնորոշումն ու մոտիվացիան), անհատի հոգեբանական առանձնահատկություն-

ները (բնավորություն, խառնվածք, մտավոր կարողություններ և այլն), մասնագիտական կարողությունները (հմտություններ, գիտելիք, փորձ և այլն) (Սարգսյան, 2018, էջ 370-371):

Զ. Փեթթիսը նշում է երեք հատկություն հմուտ ուսուցչի համար: Ըստ նրա, նախ և առաջ արդյունավետ ուսուցիչը բացի հմուտ լինելուց պետք է նաև ունենա հարուստ գիտելիքներ և լինի սկզբունքային: Երկրորդ՝ ուսուցչի մասնագիտական կարիքները և հետաքրքրությունները պետք է փոխվեն ժամանակի ընթացքում և զարգացնեն դասավանդման գործընթացը: Երրորդ՝ ուսուցիչը անհատապես պետք է նվիրված լինի իր մասնագիտական զարգացմանը:

Հ. Բրոշը նշում է, որ ուսուցիչը պետք է բացարձակ տիրապետի դասավանդվող թիրախային լեզվին, պետք է կարողանա կազմակերպել, բացատրել, հստակեցնել, ինչպես նաև հետաքրքրություն և մոտիվացիա առաջացնել ու պահպանել այն աշակերտների համար (Fahriany, 2017, էջ 118):

Ուսուցումը չի կարող ուսումնառությունից առանձին դիտարկվել: Ուսուցչի կողմից իրականացվող ուսուցումը չափվում է աշակերտի ուսումնառության վերջնարդյունքերով: Այսպիսով, ուսուցիչը պետք է կենտրոնանա մի քանի հիմնական կետերի վրա՝

- ուսուցումը մտավոր աշխատանք է,
- ուսուցիչներն ունեն գործառնությունների շրջանակ, ինչպիսիք են՝ տեղեկատվության տրամադրում և թիմի ուսուցում,
- արդյունավետ ուսուցման համար ուսուցիչները ռազմավարական կերպով բաշխում կամ կիսում են աշխատանքը աշակերտների հետ,
- ուսուցիչը ուշադրության տակ է պահում դժվար բովանդակությամբ նյութը:

Ներկայումս ուսուցչի ավանդական դերի փոփոխությամբ պայմանավորված, ուսուցիչը ստանձնում է նոր գործառնություններ: Ուսումնասիրելով մասնագիտական գրականությունը՝ կարող ենք ընդհանրական կերպով առանձնացնել հետևյալ հիմնական գործառնությունները՝ *մենեջեր, ֆասիլիտատոր/օգնական, խորհրդարու, մասնակից, գնահատող, ռեսուրս:*

Մենեջեր: Մենեջերի գործառնությամբ ներառում է երեք հիմնական ենթագործառնություններ՝ պլանավորում, կազմակերպում և ղեկավարում: Պլանավորումը ենթադրում է, որ ուսուցիչը ներմուծում է հիմնական կարողությունները, թեման, ուսումնառության նպատակները, ուսուցման գործընթացը, ձեռքբերումների ցուցանիշները: Երկրորդ ենթագործառնությամբ կազմակերպումն է: Այս ենթագործառնությամբ ի հայտ է գալիս, երբ ուսուցիչը բացատրում է կամ հրահանգում: Այստեղ ենթադրվում է նաև ուսումնական հարթակների և տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործում: Երրորդ ենթագործառնությամբ ղեկավարումն է: Դա ուսուցման գործընթացում արձանագրվում է, երբ ուսուցիչը վերահսկում է դասապրոցեսը: Յուրաքանչյուր ուսուցիչ հանդես է գալիս սեփական ոճով՝ ավելի ուսուցչակենտրոն կամ ավելի աշակերտակենտրոն:

Ֆասիլիտատոր/օգնական: Այս պարագայում ուսուցիչը աշակերտներին տալիս է հնարավորություն՝ առաջարկել և քննարկել տարբեր թեմաներ: Ուսուցիչն օգնում է, որ աշակերտները կատարեն թեմայի վրա հիմնված լեզվական կարողություններին առնչվող հանձնարարություններ: Ուսուցիչը տալիս է անհատական կամ խմբային հանձնարարություններ թեմայի յուրացումից հետո և հնարավորություն է տալիս պատրաստվել հաջորդ դասերին: Այստեղ կարող ենք պնդել, որ որպես ֆասիլիտատոր/օգնական ուսուցչի նպատակն է խրախուսել աշակերտների ինքնուրույնությունը: Ուսուցիչը կորցնում է իր գլխավոր կամ առաջնային դերակատարությունը: Ընդհակառակը, այս դեպքում ուսուցիչը սովորեցնում է ինչպես սովորել:

Խորհրդատու: Որպես խորհրդատու ուսուցիչը ունի 2 հիմնական գործառույթ: Առաջինը՝ խրախուսել և պարգևատրել աշակերտներին, երկրորդը՝ խորհուրդներով օգնել այն աշակերտներին, ովքեր ունեն ակադեմիական առաջադիմության խնդիրներ: Այս գործառույթը կարևոր նշանակություն ունի ուսումնառության գործընթացում: Այն նույնպես նպաստում է աշակերտի ինքնուրույնությանը, քանի որ տարբեր փուլերում աշակերտներն ուղղորդման կարիք ունեն ինքնակայացման համար:

Ռեսուրս: Այստեղ հիմնականում դիտարկում ենք ուսուցչի տեղեկատվության փոխանցման գործառույթը: Անգլերենի դասընթացի ժամանակ ուսուցչի հիմնական դերը կարող է լինել ուսումնական նյութի անգլերենով ներմուծումը, բանավոր կամ գրավոր սխալների ուղղումը, աշակերտների հետ հետադարձ կապի ապահովումը: Աշակերտները ցուցաբերում են պատրաստակամություն իրենց թերացումների վրա աշխատելու, երբ առկա է հետադարձ կապ: Սակայն յուրաքանչյուր աշակերտի ուսումնառության ձևերը տարբեր են, հետևաբար, այս գործառույթի իրացումը նույնպես պետք է ձկուն լինի:

Մասնակից: Մասնակցի գործառույթը ներառում է հիմնականում երկու տեսակ գործողություն: Առաջին՝ ուսուցիչն ինքն է մասնակցում աշակերտների ուսումնառության գործընթացին՝ մաս դառնալով խմբային քննարկումներին, վարժությունների ու առաջադրանքների կատարմանը: Երկրորդ՝ ուսուցիչը ներառում է աշակերտներին տնային հանձնարարությունների կամ այլ առաջադրանքների ուղղման գործընթացում: Աշակերտները կարող են պատրաստակամություն ցուցաբերել այս աշխատանքում, քանի որ նրանք ցանկանում են անմիջապես իմանալ իրենց կատարած աշխատանքի արդյունքների մասին: Սա կարող է նույնիսկ հանպատրաստից տեղի ունենալ: Խրախուսելով աշակերտի ինքնուրույնությունը, աշակերտը սովորում է ուսուցչից, իսկ ուսուցիչն աշակերտից: Այսպիսով, դասապրոցեսում ստեղծվում է դրական հաղորդակցություն և ներդաշնակ փոխհարաբերություններ աշակերտի ու ուսուցչի միջև:

Գնահատող: Ուսուցիչը ստանձնում է աշակերտների սխալների ուղղման, դրանց վեր հանման, բացատրման և հաղթահարման պարտականություններ:

րը: Գնահատումն ուսուցչին հնարավորություն է տալիս հասկանալ, թե ինչ մակարդակում է աշակերտի ուսումնառությունը, հաջորդ թեմային անցնելուց առաջ: Ուսուցիչը չի միջամտում աշակերտի ուսումնառության գործընթացին՝ պարբերաբար ապահովելով նրա ինքնուրույնությունը: Ուսուցիչը խրախուսում է ինքնագնահատումը, փոխադարձ գնահատումը, խրթին տնային հանձնարարությունները, նախագծերը, լեզվական թղթապանակները:

Ուսուցիչն իր գործունեության ընթացքում ստանձնում է նաև քաջալերողի գործառույթ: Նա պարտավոր է շարժել աշակերտների հետաքրքրությունը, առաջացնել ոգևորություն՝ անգլերենը հաղորդակցության մեջ օգտագործելու և հաղորդակցական առաջադրանքների մասը դառնալու համար: Անգլերենով հաղորդակցության մասնակից դառնալը աշակերտի համար անհնար է, եթե նա չի գտնվում բարենպաստ միջավայրում, որտեղ նա իրեն ազատ է զգում: Այստեղ ուսուցիչը ստանձնում է միջավայրն ապահովողի գործառույթը՝ ստեղծելով ներդաշնակ և ակտիվ դասարանային միջավայր: Նմանատիպ միջավայրը թեթևացնում է աշակերտի անգլերենի ուսումնառության գործընթացը: Կարող ենք նշել նաև գործընկերոջ գործառույթը (partner), որի շնորհիվ ուսուցիչը կոտրում է կարծրացած միջավայրը. նա դառնում է աշակերտների ընկերը, առաջարկում է ուղղումներ, նոր գաղափարներ, հանդես է գալիս առաջարկություններով, տեղեկանում է աշակերտների խնդիրներից, որոնց նրանք բախվում են լեզվահաղորդակցական կարողությունների յուրացման ճանապարհին (Ja, 2017, էջ 106–109):

Բնականաբար, ուսուցիչների գործառույթները հանդես չեն գալիս առանձին-առանձին: Դրանք դրսևորվում են խրթին, համապարփակ ուսուցման գործընթացում, երբեմն նույնիսկ միաժամանակ: Ըստ ուսուցման գործընթացի առաջ դրված նպատակների՝ դրանց հասնելու խնդիրների և սահմանված վերջնարդյունքների գործառույթները փոփոխվում են և հանդես են գալիս ըստ անհրաժեշտության: Չնայած առկա սահմանումների կամ նկարագրերի՝ դասապրոցեսը և աշակերտների կարիքներն իրենք են սահմանում գործառույթների շրջանակները:

Դիտարկենք ինքնակրթության դրսևորումն օտար լեզվի ուսուցման գործընթացում: Ինքնակրթության հիմնական գաղափարն այն է, որ որոշ իրավիճակներում ուսումնառությունը կատարվում է ըստ աշակերտի ցանկության, այլ ոչ թե ուսուցչի կողմից սահմանված պլանի: Ուսուցիչը ստանձնում է օգնականի կամ խորհրդատուի դեր (Stewart, Hase, 2013, էջ 5–6):

Ինքնակրթությունը ներկայացնում է ուսումնառության գործընթաց, որն անհատական է, նպատակային և զարգացնող: Ինքնավարությունը, ընտրությունը և ինքնաիրացումն ընդգծում են ինքնակրթության անհատական բնույթը: Աշակերտները ինքնուրույն են և ունակ որոշումներ կայացնել, ունեն պատասխանատվության զգացում իրենք իրենց և ուրիշների նկատմամբ, էությանը բարեհամբույր են, ցանկություն ունեն հասնելու ինքնաիրացման, ունեն եզա-

կի և անսահմանափակ աճի ներուժ: Ինքնակրթության միջոցով աշակերտները ստանձնում են անձնական պատասխանատվություն՝ ընտրելով, թե ինչպես են օգտագործում տեղեկատվությունը իմաստին հասնելու համար:

Մ. Նոուլզը տալիս է ինքնակրթության ամենանախնական, սակայն ամենաընդունելի սահմանումը. անհատները իրենց ձեռքն են վերցնում նախաձեռնությունը՝ ախտորոշել սեփական ուսումնառության կարիքները, կազմել նպատակներ, ճանաչել մարդկային և ուսումնական նյութական ռեսուրսները, ընտրել և ներդնել համապատասխան ուսումնառության ռազմավարությունները և գնահատել ուսումնառության վերջնարդյունները:

Ինքնակրթությունը նաև նպատակային է: Աշակերտները նախաձեռնում են այն՝ հստակ նպատակներին հասնելու կամ իրական աշխարհի խնդիրներին լուծումներ գտնելու համար:

Աշակերտն է սահմանում իր ուսումնառության նպատակները, ստանձնում առաջադրանքների կառավարումը, դեկլավարում մեթոդները, վերահսկում ռեսուրսները, հասնում սեփական նպատակներին կամ պահանջներին, լուծում խնդիրները:

Ի վերջո, ինքնակրթությունը զարգացնող է. այն անձնական աճի միջոց է:

Աշակերտները զարգացնում են խորը հայեցակարգային ըմբռնում, լուծում են խնդիրներ և հասնում են նպատակներին՝ փորձարկելով սեփական գաղափարներն իրական աշխարհի համատեքստերում և կիրառելով անձնական արտացոլում և արտաքին հետադարձ կապ՝ զարգացնելով և ավելի հստակեցնելով այս գաղափարները: Օգտագործելով այս գործընթացը՝ աշակերտները կարող են լուծել խնդիրներ, հասնել նպատակներին, զարգացնել գիտելիքներն ու հմտությունները, նորարարություններ կատարել և իրացնել իրենց ներուժը: Ավելին, աշակերտի զարգացումը ենթարկվում է շրջակա միջավայրի ազդեցությանը՝ ներառյալ սոցիալական փոխազդեցությունները և համատեքստի վրա հիմնված այլ գործոններ: Ուսումնառությունը տեղի է ունենում, երբ անհատը շփվում է իրադարձությունների հետ, ապրում և մեկնաբանում է այն, ինչ տեղի է ունենում աշխարհում:

Ինքնակրթության չորս հարթություն է առանձնանում՝

- ինքնակարգավորում
- մոտիվացիա
- անձնական պատասխանատվություն,
- ինքնավարություն (Brandt, 2020, էջ 3–5):

Այս ամենն ապացուցում է, որ ինքնակրթությունը բազմաշերտ երևույթ է, և մենք չենք կարող այն դիտարկել սոսկ որպես հավելյալ տեղեկություններ ստանալու միջոց: Այն ապահովում է ոչ միայն գիտելիք, այլ տարբեր փափուկ հմտություններ:

Ֆորմալ կրթության համատեքստում նախապես մշակված, օրենքով հաստատված պլանների առկայության պարագայում հնարավոր չէ իրականաց-

նել բացարձակ ինքնակրթություն: Այս պարագայում մեր համոզմունքն է, որ կարելի է զարգացնել ինքնակրթության տարբեր մասնիկներ (ինքնավարություն, ինքնակարգավորում, ինքնուրույն նպատակների սահմանում, առաջադրանքների ընտրություններ, խնդիրների լուծում և այլն):

Այստեղ պետք է փաստել, որ եթե մենք դիտարկում ենք ուսուցչին ուսուցման, իսկ աշակերտին ուսումնառության ավանդական օբյեկտ-սուբյեկտ հարացույցում, ապա մենք ինքնաբերաբար դուրս ենք գալիս ուսուցման աշակերտակենտրոն համատեքստից: Այս պարագայում մենք հնարավորություն չենք ունենում օգտագործել ֆորմալ ուսուցումը գիտելիքից բացի նաև կարողություններ և հմտություններ զարգացնելու համար:

Աշակերտների մոտ ինքնակրթության հմտությունների զարգացումը կապված է ինքնավարության, հետաքրքրասիրության, քննադատական մտածողության և նոր տեղեկատվությունը ինքնուրույն փնտրելու և կլանելու կարողությունների խթանման հետ: Նպատակը սովորողներին շարունակական կրթության համար անհրաժեշտ մտածելակերպով և հմտություններով զինելն է: Ահա մի քանի վարժություններ, մոտեցումներ և առաջադրանքներ, որոնք կարող են արդյունավետորեն օգտագործվել այս հմտությունները զարգացնելու համար՝

1. Հարցումների վրա հիմնված նախագծեր

Ուսուցիչը խրախուսում է սովորողներին՝ կազմել սեփական հարցերն ու հետաքրքրությունները առարկայի կամ թեմայի շրջանակներում, ուղղորդել նրանց մշակելու հետազոտական հարցեր, այնուհետև պլանավորել և վարել հետաքննություն կամ նախագիծ, որը փնտրում է պատասխաններ: Այսպիսով՝ ուսուցիչը զարգացնում է հետաքրքրասիրությունը, հետազոտական հմտությունները և ինքնուրույն աշխատելու կարողությունը:

2. Ուսումնական պայմանագրեր (Learning Contracts)

Ուսուցիչը ուսանողների հետ սահմանում է անհատական ուսումնառության նպատակներ և ստեղծում պայմանագիր, որը նախանշում է այն քայլերը, որոնք նրանք կձեռնարկեն այս նպատակներին հասնելու համար, ռեսուրսները, որոնք նրանք կօգտագործեն և ինչպես կգնահատեն իրենց առաջընթացը: Ուսումնական պայմանագրերը նպաստում են ինքնակարգավորմանը, նպատակների սահմանմանը և անձնական հաշվետվողականությանը:

3. Շրջված դասարան

Ուսուցիչը հանձնարարում է տնային աշխատանքներ, որոնք կարող են լինել ընթերցումներ, տեսանյութեր և այլն, և օգտագործել դասաժամը քննարկումների, խնդիրների լուծման կամ բովանդակության վրա հիմնված նախագծերի համար: Ուսանողները ակտիվորեն ներգրավվում են դասում և ստեղծվում է փոխներգործուն միջավայր: Ուսուցիչը Խրախուսում է ակտիվ ուսումնառությունը և նախապատրաստությունը: Ուսուցիչը ստանձնում է օգնականի կամ մենեջերի գործառույթ:

4. Ռեֆլեկտիվ օրագրեր (Reflective Journals)

Ուսուցիչը հանձնարարում է սովորողներին օրագրեր պահել, որտեղ նրանք գրի են առնում իրենց ուսումնառության փորձառությունները, մարտահրավերները և ձեռքբերումները: Ուսուցիչը խրախուսում է սահմանել նպատակներ և մշակել ռազմավարություններ դժվարությունները հաղթահարելու համար: Ռեֆլեկտիվ օրագրեր զարգացնում են մետաձանաչողական հմտություններ, ինքնագիտակցություն և սեփական ուսուցման գործընթացը գնահատելու կարողություններ:

5. Փոխադարձ ուսուցում

Ուսանողները պատրաստում և իրականացնում են փոքր դասեր իրենց հետաքրքրող թեմաներով: Սա կարող է լինել շնորհանդեսների, սեմինարների կամ կրկնուսուցման դասընթացների տեսքով: Այսպիսով՝ ամրապնդվում են գիտելիքները, զարգանում են հաղորդակցման հմտությունները, և ուսուցիչը խթանում է համագործակցությունը:

6. Թվային տեխնոլոգիաներով նախագծեր

Ուսուցիչը հանձնարարում է նախագծեր, որոնք պահանջում են աշակերտներին օգտագործել թվային գործիքներ հետազոտության, համագործակցության և ներկայացման համար:

7. Քննադատական վերլուծություն և բանավեճ

Ուսուցիչը ներգրավում է սովորողներին տեքստերի, ուսումնասիրությունների կամ ընթացիկ իրադարձությունների վերլուծության մեջ: Կազմակերպում է բանավեճեր վիճելի թեմաների շուրջ, որտեղ աշակերտները պետք է ուսումնասիրեն և արտահայտեն իրենց դիրքորոշումները: Նման աշխատանքները զարգացնում են քննական մտածողությունը և համոզիչ հաղորդակցման հմտությունները:

8. Խնդրի վրա հիմնված ուսուցում (PBL)

Ուսուցիչն աշակերտներին է ներկայացնում խնդիրներն առանց հստակ լուծումների: Նրանք պետք է ուսումնասիրեն, համագործակցեն և կիրառեն գիտելիքներ տարբեր առարկաներից՝ կենսունակ լուծումներ առաջարկելու համար: Խնդրի վրա հիմնված ուսուցում Բարձրացնում է խնդիրների լուծման հմտությունները, միջառարկայական գիտելիքները և թիմային աշխատանքը:

9. Անկախ հետազոտությունների իրականացում

Ուսուցիչը դպրոցական օրվա կամ շաբաթվա ընթացքում ժամանակ է հատկացնում աշակերտների ինքնուրույն ընտրված նախագծերի կամ անձնական հետաքրքրություն ներկայացնող թեմաների վրա աշխատելու համար՝ անհրաժեշտության դեպքում առկա ուղղորդումներով և ռեսուրսներով:

Սա աշակերտներին թույլ է տալիս բացահայտել անձնական հետաքրքրությունները, խթանել ներքին մոտիվացիան և ինքնուրույն սովորելու սովորությունները:

Այս վարժությունների և առաջադրանքների ընդգրկումը ուսուցման մեջ կարող է նպաստել շարունակական կրթության զարգացմանը, ինչն էլ էական է ինչպես անձնական, այնպես էլ հետագա մասնագիտական առաջընթացի համար:

Եզրակացություն

Իրականացված հետազոտությունից հետո պարզ դարձավ, որ՝

- պայմանավորված աշակերտակենտրոն ուսուցման ներդրմամբ՝ ժամանակակից դպրոցում ուսուցիչը ստանձնում է նոր գործառույթներ,
- ուսուցչի գործառույթների իրացումը խորապես կապված է այն կարողությունների, հմտությունների կամ գիտելիքների հետ, որոնք ցանկանում ենք զարգացնել աշակերտների մոտ (այս պարագայում ինքնակրթություն),
- ին
- մեթոդների, վարժությունների, առաջադրանքների ներդրումը կարող է ուսուցման գործընթացում շեշտադրել ուսուցիչների գործառույթները և միաժամանակ զարգացնել սովորողների ինքնակրթության արժեհամակարգը:

Օգտագործված գրականության ցանկ

- Աշիկյան, Ա. (2020). Ուսուցչի գործունեության արժեհամակարգն ու գործառույթները: *Կրթությունը 21-րդ դարում*, 2020 160–167, ԵՊՀ:
- Սարգսյան, Ա. (2018). Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացումը որպես հիմնախնդիր. *ՎՊՀ*, 370–371. <https://www.vsu.am/grqer/2018/aprak/sargsyananna.pdf>
- Brandt, W. C. (2020). *Measuring student success skills: A review of the literature on self-direction*. Dover, NH: National Center for the Improvement of Educational Assessment.
- Fahriany, F. H. (2017). Professional Teacher for EFL Classroom. *Advances in Social Science, Education and Humanities Research*, volume 115, 3–5.
- Ja, R. (June, 2017). English Teachers' Roles in Promoting Learners' Learning Autonomy in EFL Class of Public Senior High Schools of ENDE Regency in Academic Year 2016 / 2017. *Journal of Education and Human Development*, 106–109.
- Hase S., Kenyon C.. (2013). *Self-Determined Learning: Heutagogy in Action*. Bloomsbury Publishing.

References

- Ashikyan, A. (2020). *Usuts'ch'i gortsuneut'yan arzhehamakargn u gortsarryut'neri* [The value system and functions of the teacher's activity. Education in the 21st century]. Krt'ut'yuny 21-rd darum, 2020 160–167, YePH. (In Arm.)
- Sargsyan, A. (2018). *Usuts'ch'i masnagitakan kompetentut'yan zargats'umy vorpes himnakhndir* [Development of teacher's professional competence as a problem]. VPH,

- 370–371. <https://www.vsu.am/grqer/2018/aprak/sargsyananna.pdf> (In Arm.)
- Brandt, W. C. (2020). *Measuring student success skills: A review of the literature on self-direction*. Dover, NH: National Center for the Improvement of Educational Assessment. (In Eng.)
- Fahriany, F. H. (2017). Professional Teacher for EFL Classroom. *Advances in Social Science, Education and Humanities Research*, volume 115, 3–5. (In Eng.)
